Базовые принципы указанной программы включены в итоговый документ Всемирного форума ООН по вопросам образования 21 мая 2015 г. – Инчхонскую декларацию «Образование – 2030: обеспечение всеобщего инклюзивного и справедливого качественного образования на протяжении всей жизни» [35]

И наконец, 70-й юбилейной сессией Генеральной Ассамблеи ООН в сентябре 2015 г. утверждена всемирная программа «Преобразование нашего мира: Повестка дня в области устойчивого развития на период до 2030 года» с 17 целями, одна из которых, 4-ая, полностью посвящена образованию:

Цель 4. Обеспечение всеохватного, справедливого и качественного образования и поощрения возможности обучения на протяжении всей жизни для всех.

При этом задача 4.7 посвящена именно ДОУР:

– К 2030 году обеспечить, чтобы все учащиеся приобретали знания и навыки, необходимые для содействия устойчивому развитию, в том числе посредством обучения по вопросам устойчивого развития и устойчивого образа жизни, прав человека, гендерного равенства, пропаганды культуры мира и ненасилия, гражданства мира и осознания ценности культурного разнообразия и вклада культуры в устойчивое развитие.

В нашем регионе активное содействие ДОУР оказывает Европейская экономическая комиссия ООН, организовавшая в рамках восьмой Конференции «Окружающая среда для Европы» (г. Батуми, Грузия, 8 – 10 июня 2016 г.) «Совещание высокого уровня представителей министерств образования и охраны окружающей среды региона Европейской экономической комиссии Организации Объединенных Наций» и разработавшая очередную Стратегию ЕЭК ООН по ОУР [22].

В «Батумском заявлении министров по образованию в интересах устойчивого развития», в частности, отмечено:

3. Обязуемся продолжать добиваться продвижения вперед в трех «вертикальных» приоритетных областях действий Стратегии с учетом политики в области образования и обра-

зовательных систем на национальном или региональном уровне:

- a) стимулирование общеучрежденческих подходов посредством составления в каждой школе школьных планов по образованию в интересах устойчивого развития или включения образования в интересах устойчивого развития в существующие школьные планы в каждой школе к 2019 году;
 - b) содействие распространению образования в интересах устойчивого развития на педагогическое образование и подготовку всех педагогов;
 - c) укрепление профессионально-технического образования и подготовки в интересах поддержки устойчивого развития и перехода к «зеленой экономике»;
4. Обязуемся также продолжать добиваться продвижения вперед в следующих трех «горизонтальных» приоритетных областях действий Стратегии:
- a) обеспечение более тесной интеграции образования в интересах устойчивого развития как в международную, так и в национальную политику в областях образования и устойчивого развития, а также в другие соответствующие процессы;

- b) укрепление синергизма между формальным, неформальным образованием и просвещением;
- c) признание важной роли сетей, включая сети органов местного самоуправления, гражданского общества, академических и научных кругов, неправительственных организаций, деловых кругов и предприятий, в обеспечении образования в интересах устойчивого развития [36].

Полагаем, степень важности рассматриваемого вопроса подтверждается посланием Президента Генеральной Ассамблеи ООН г-на Петера Томпсона главам государств от 10 ноября 2016 г., в котором подчеркивается, что совершенно необходимо вовлечение молодежи мира всех возрастов в процесс познания и осуществления всемирной программы 2030 и целей устойчивого развития.

Отметим также, что данная всемирная программа, и, в особенности, Цели устойчивого развития (ЦУР), признаны структурами ООН (ЮНЕП и Офис Комиссара по правам человека) в качестве универсальных. Подобный статус ставит Повестку дня 2030 и ЦУР в один ряд с такими универсальными документами, как Хартия ООН и универсальный доклад ООН по правам человека [37].

Деятельность в Республике Армения в сфере экологизации образования в целях устойчивого развития.

В рамках Десятилетия ООН «Образование в интересах устойчивого раз-

вития» в РА была осуществлена ниже-следующая деятельность.

- Была разработана и утверждена «Концепция о создании полноценной и единой национальной системы экологического образования, воспитания и информирования», на основе которой подготовлена и в настоящее время обсуждается соответствующая программа (к сожалению, с большим опозданием).
 - Во всех вузах преподаются дисциплины «Экология» и «Основы экологии». Наряду с этим, в ряде вузов преподаются также предметы «Социальная экология», «Экология человека», «Промышленная экология», «Радиационная экология» и др.
 - В ряде вузов (Ереванский государственный университет /ЕГУ/, Армянский государственный педагогический университет /АГПУ/ и др.) преподаются дисциплины «Теория и практика устойчивого развития», «Основы устойчивого развития», «Устойчивое развитие и глобальная безопасность», «Глобальные экологические проблемы в контексте устойчивого развития» и др.
 - В 2008г. Министерство науки и образования утвердило учебник для вузов «Теория и практика устойчивого развития. Всемирный процесс и Армения» (на армянском языке, автор – К. Даниелян). Подготовлены и изданы также несколько учебных пособий для вузов по тематике УР на армянском языке (в 2006 г. и 2013 г., авторы – К. Даниелян, Л. Сарксян и Т. Саргсян; первое учебное пособие К. Даниелян издано в 1996 г. на русском языке) .
 - В 2011 г. в Эколого-ноосферном центре НАН РА основана кафедра ЮНЕСКО «Образование в интересах УР».
 - С 2008 г. в ЕГУ функционирует Научно-образовательный центр экологического права, а в 2012 г. создан также Центр УР.
 - В 2012 г. в АГПУ создана общеуниверситетская Кафедра экологии и устойчивого развития.
 - Эксперты РА принимали активное участие в разработке текста Хартии Земли и в настоящее время в полной мере используют этот важный документ в процессе преподавания (Ассоциацией «За УЧР» разработана также Хартия Земли для детей, используемая во многих странах).
- Вышеописанная деятельность позитивно оценена в изданиях ЮНЕСКО «Образование в интересах устойчивого развития в действии. Хорошая практика» [38].
- Однако, к сожалению, до сих пор остается нерешенным вопрос о школьном образовании. В странах обычно практикуются следующие варианты экологического образования в школах:
- интеграция экологической тематики и принципов УР в различные, уже преподаваемые предметы;
 - включение в перечень преподаваемых дисциплин курса по экологии с элементами УР;
 - сочетание обоих вышеуказанных вариантов, что признается наиболее оптимальной, полноценной версией.

В Армении предпочтение отдано первой версии – экологическая тематика более или менее отражена в курсах «Я и окружающий мир», «Естествознание», «Биология» и «География». Однако при этом ученики получают лишь фрагментарные знания, которые не систематизированы в едином предмете. Национальным институтом образования РА, совместно Кафедрой экологии и устойчивого развития АГПУ, разработана программа курса «Основы экологии и устойчивого развития» для старшей школы, которая утверждена Министерством науки и образования в качестве факультативного предмета. Мы убеждены, что очевидна настоятельная необходимость включения этой программы в перечень обязательных предметов для старшей школы.

В 2016-2017 гг. ПРООН реализовал в РА весьма обширный проект «Генерация экологических выгод путем экологического образования и повышения осведомленности заинтересованных сторон», в котором К. Даниелян участвовала в качестве эксперта по исследованию экообразования в вузах страны. Проведены исследования в 18 вузах и 5 филиалах вузов; получены представленные ниже результаты [39].

В целом констатировано удовлетворительное состояние экологического образования в вузах РА. Университеты представили довольно широкий, многоаспектный спектр преподаваемых предметов, специфика которых преимущественно соответствует профессиональной направленности вуза, и используют значительный перечень научной и учебно-методической лите-

ратуры.

Вместе с тем отмечены некоторые нижеследующие упущения.

1. В процессе преподавания недостаточное внимание уделяется:
 - междисциплинарной тематике (например, результатам исследований влияния экологических факторов на здоровье населения);
 - вопросам предупреждения/предотвращения, снижения рисков стихийных бедствий и техногенных катастроф, тогда как в последние десятилетия экстремальные климатические явления и риски стихийных бедствий постоянно растут;
 - экологическому законодательству;
 - многоаспектной тематике устойчивого развития, которая в настоящее время органично охватывает проблематику устойчивого производства и потребления, рационального, эффективного использования природных ресурсов, всесторонней гармонизации взаимоотношений «Общество–Природа».
2. Анализ используемой университетами научной и учебно-методической литературы выявил следующее. В целом университеты используют весьма широкий спектр научной и учебно-методической литературы как отечественных, так и зарубежных авторов, преимущественно соответствующей профессиональной специфике вуза.

Вместе с тем можно отметить некоторые упущения:

- некоторые вузы используют лишь старые издания, которые без сочетания с новейшими публикациями не могут более характеризовать полную картину преподаваемого предмета;
- редкие вузы используют национальные доклады по конвенциям, по состоянию окружающей среды и устойчивому развитию РА;
- редкие вузы используют издания ПРООН, ЮНЕП, ЕЭК ООН, ЮНИСЕФ (UNDP, UNEP, UNECE, UNICEF) и других структур ООН, которые очень информативны в контексте глобальных и региональных современных процессов в сфере окружающей среды и устойчивого развития, а также отражают рекомендации итоговых документов региональных и глобальных саммитов по данной тематике с участием всех заинтересованных сторон современного человеческого общества.

Учитывая вышеизложенное, представлены нижеследующие рекомендации.

- Целесообразно чаще организовывать межвузовские конференции в сфере экологического образования и образования в интересах устойчивого развития, что позволит обеспечивать обмен позитивным опытом и существенно расширить спектр преподаваемой тематики, узкопрофессиональный подход, практикуе-

мый в настоящее время некоторыми университетами.

- В значительно большей степени привлекать соответствующих представителей университетов к современному процессу имплементации и реализации целей устойчивого развития ООН в РА.
- Целесообразно организовать веб-сайт, на котором следует разместить научные и учебно-методические публикации последних лет в сфере экологии и устойчивого развития, включая также глобальные, региональные и национальные доклады по данной тематике [39].

Другая группа экспертов в рамках проекта исследовала необходимость развития неформального образования. Изучение степени осведомленности в сфере экологии и устойчивого развития лиц, принимающих решения на местном уровне (руководители и сотрудники местных органов самоуправления), выявило весьма неудовлетворительную картину. Очевидна настоятельная необходимость организации семинаров/тренингов для управленцев данного уровня в обсуждаемом контексте.

В упомянутом проекте изучена также деятельность средств массовой информации в рассматриваемом аспекте. Экспертами сделан вывод о том, что освещение вопросов экологического характера в основном носит ситуационный характер (за исключением небольшой радиопрограммы «Экосфера»). Давно назрела очевидная необходимость организации систематической

телепрограммы по тематике экологии и устойчивого развития, которая, наряду с оперативным информированием населения по актуальным явлениям, будет выполнять также систематизированную образовательную и просветительскую функцию.

Министерство охраны природы РА на основании обобщения результатов и рекомендаций проекта ПРООН, а также собственных исследований, разработало Стратегию развития экологического образования и воспитания в РА, проект которой представлен

в Правительство РА для утверждения. К сожалению, налицо расхождение между позициями Министерства охраны природы и Министерства науки и образования РА, которое в определенной мере препятствует развитию системы экологического образования в стране. Данный факт отражен также в результатах осуществленного в рамках вышеуказанного проекта опроса вузов об имеющихся препятствиях на пути развития экологического образования в интересах УР в стране, что наглядно видно на графике 2.



График 2. Результаты опроса вузов о препятствиях в сфере экологизации образования в РА [39].

Хотя в разработанном в настоящее время Министерством науки и образования проекте Закона «О государственной программе развития образования до 2030 г. в РА» указано, что «образование играет важную роль в деле решения политических, экономических, социальных и экологических многочисленных проблем, стоящих перед

формирующимся устойчивым, благополучным обществом», тем не менее очевиден ограничивающий подход к предложениям Министерства охраны природы [40, 41].

Резюмируя вышеизложенное, можно выделить наиболее существенные в рассматриваемом контексте рекомен-

дации, а именно, целесообразно:

- включить курс «Основы экологии и устойчивого развития» в список обязательных предметов, преподаваемых в старшей школе;
- активизировать деятельность средств массовой информации в сфере экологии и устойчивого развития, в частности организовать систематическую информационную, образовательно-просветительскую программу по общественному телевидению;
- организовать цикл семинаров/тренингов для лиц, принимающих решения, в особенности для сотрудников органов местного самоуправления;
- повысить доступность научно-образовательной литературы, в особенности на армянском языке, национальных докладов и изданий структур ООН в сфере экологии и устойчивого развития путем организации соответствующего информационного веб-сайта, активно привлекая к данной деятельности экспертное сообщество Армении.

Литература

1. Резолюция ЮНЕСКО 37 С/12. Глобальная программа действий по образованию интересам устойчивого развития в качестве последующей деятельности по итогам десятилетия образования в интересах устойчивого развития Организации Объединенных Наций в период после 2014 г. Париж, 2013. www.unesdoc.unesco.org/images/0022/.
2. Центр новостей ООН. www.un.org/russian/news.
3. Китайские ученые: мировой океан теплее, чем когда-либо ранее. eco2na.ru/news.
3. Карине Даниелян. Современная цивилизация перед выбором: Переход к устойчивому развитию или самоуничтожение. Palmarium academic publishing, Saarbrücken, Germany, 2014.
4. Доклад ВОЗ-ЮНЕП, 2012, Информационная служба «Эко-согласия», <http://www.unep.org/pdf/EDCCs>.
5. Keeping Track of our changing environment. From Rio to Rio+20. UNEP, Nairobi, Kenya, October, 2011.
6. Уменьшение опасности стихийных бедствий. Архивы. Межучрежденский секретариат Международной стратегии по уменьшению опасности стихийных бедствий. 2016. www.un.org/sustainabledevelopment/ru/category/уменьшение-опасности-стихийных-бедствий.
7. Генеральная Ассамблея ООН, Доклад Всемирной конференции по уменьшению опасности стихийных бедствий. Кобе, Хиото, Япония, 18-22 января 2005 г. www.unisdr.org/files/1037_finalreport
8. Изменение климата и здоровье. Информационный бюллетень № 266, сентябрь 2015. Центр СМИ Всемирной организации здравоохранения. <http://www.who.int/mediacentre/factsheets/fs266/ru/>
9. Защитим здоровье от изменений климата. Обращения к различным группам населения и секторам. Всемирная организация здравоохранения. 2016. www.who.int/phe.

10. Global Environmental Outlook -3, UNEP, Nairobi, Kenya, 2002.
11. UNEP Year Book. Emerging Issues in Our Global Environment, 2011.
12. Global Environmental Outlook -5, UNEP, Environment for the future we want. UNEP Valetta, Malta, 2012.
13. Алексей Яблоков. Земля может отторгнуть человечество.// Экология и жизнь, № 6, 2012, с. 4-7.
14. Niall McCarthy., Disasters Caused \$306 Billion in Losses in 2017. Dec.21, 2017. <https://www.statista.com/chart/2379/disasters>.
15. Доклад Всемирного фонда живой природы (WWF) «Живая планета», 2016, с. 6.
16. Анна Иванова. Что такое стихийные бедствия? Месть или самозащита природы? 2005, <https://www.kharkovforum.com/archive/index.php/t-8755.html>.
17. Екатерина Гуленок. Стихийные бедствия: Статистика или предвестник Апокалипсиса. <https://www.kharkovforum.com/archive/index.php/t-8755.html>.
18. Заявление Национального управления океанических и атмосферных исследований США об ущербе от природных катастроф в 2017г. <http://www.interfax.ru/world/594700/>.
19. Предостережение ученых мира человечеству. 1992. www.koob.ru/melhisedek/flower_of_life.
20. Резолюция 66/288, принятая Генеральной Ассамблеей ООН. 66-ая сессия, пункт 19 Повестки дня. Приложение. «Будущее. которое мы хотим» (итоговый документ Саммита ООН «Рио+20») 27 июля 2012, www.uncsd2012.org.
21. The Global Risks Report 2018. World Economic Forum. <http://www.forestforum/viewtopic.php?f=9&t+21825>.
22. Резолюция, принятая Генеральной Ассамблеей 25 сентября 2015 года, Семидесятая сессия. Пункты 15 и 116 повестки дня. 70/1. Преобразование нашего мира: Повестка дня в области устойчивого развития на период до 2030 года. www.un.org/sustainabledevelopment/ru/about/development-agenda
23. Махатма Ганди. Цит. по: В.Г. Горшков, К.Я. Кондратьев, В.И. Данилов-Данильян, К.С. Лосев. Окружающая среда: от новых технологий к новому мышлению.// Зеленый мир, № 19, 1994.
24. Стратегия ЕЭК ООН для образования в интересах устойчивого развития. Принята Советом высокого уровня представителей министерств охраны окружающей среды и образования (Вильнюс, 17-18 марта 2005 года) (Пункты 5 и 6 повестки дня). Европейская экономическая комиссия, Комитет по экологической политике. Экономический-социальный совет ООН. www.iseu.bsu.by/wp-content/uploads/2016/05/resolution_vilnius.pdf
25. С.Н. Бобылев, Г.Е. Мекуш. Научные проблемы внедрения образования для устойчивого развития в высшей школе: социально-экономические дисциплины.//Сб. статей «Образование для устойчивого развития в высшей школе России: научные основы и стратегия развития». МГУ, Москва, 2008.
26. Н.Н. Марфенин. Чему и как учить для устойчивого развития. Экология и жизнь, № 8, 2011, с. 9–16.

27. Н.Н. Моисеев. Новая цивилизация начинается с образовательных программ. Там же, с. 4–8.
28. Б.М. Миркин, Л.Г. Наумова. Проблема формирования экологического менталитета. //Экология и жизнь, № 7, 2011, с. 44–49.
29. Герман Дейли, цит. по: Д. Медоуз. За пределами роста. Москва, 1994.
30. The Earth Charter. Green Cross International. www.earthcharter.org.
31. Указ Президента Российской Федерации № 440 от 1 апреля 1996 г. О Концепции перехода Российской Федерации к устойчивому развитию. Москва. www.base.garant.ru/1548498
32. Earth Summit. Agenda 21 – The United Nations Programme of Action from Rio; Rio Declaration on Environment and Development. UNCED, Rio-de-Janeiro, UNDPI, N-Y, 1997.
33. Йоханнесбургская декларация по устойчивому развитию. План выполнения решений ВСУР и другие материалы ВСУР ООН//Основные итоги Всемирного саммита по устойчивому развитию (Йоханнесбург, 18 августа – 4 сентября 2002 г.) Эко-бюллетень № 1-2, Ассоциация «За УЧР»/UNEPNatCom, UNEP, Ереван, 2003.
34. Айти-Нагойская декларация по образованию в интересах устойчивого развития, UNESCO, Итоговый документ Всемирной конференции в г. Айти-Нагойя, Япония, 10-12 ноября 2014 г. www.ru.unesco.org/themes/obrazovanie.
35. Инчхонская декларация «Образование – 2030: обеспечение всеобщего инклюзивного и справедливого, качественного образования и обучения на протяжении всей жизни. UNESCO, UNDP, UNFPA, UNICEF. Итоговый документ Всемирного форума по вопросам образования в г. Инчхон, Республика Корея, 21 мая 2015 г. unesdoc.unesco.org/images/0023/002331/233137r.pdf
36. Батумское заявление министров по образованию в интересах устойчивого развития, принятое Совещанием высокого уровня представителей министерств образования и окружающей среды региона Европейской экономической комиссии Организации Объединенных Наций. Батуми, Грузия, 8–10 июня 2016 г. <http://www.unece.org/fileadmin/DAM/env/documents/2016/ece/ece.batumi.conf.2016.2.r.pdf>
37. Universality in the Post 2015 Sustainable Development Agenda. UNEP, UN Human Rights office of the High Commissioner. www.unep.org/post2015.
38. The Earth Charter as a Pedagogical Tool for Sustainability at Yerevan State University, Armenia.//“United Nations Decade of Education for Sustainable Development”, N3, “Good practices using the Earth Charter”, UNESCO Education sector, Paris – San-Jose (Costa-Rica), pp. 121–126,
39. 2007. K.Danielyan., Report on UNDP-GEF project “Generate global environmental benefits through environmental education and raising awareness of stakeholders”. Yerevan, UNDP, 2017.
40. ՀՀ օրենքի նախագիծ «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին», ներկայացված է ՀՀ Ազգային ժողով ՀՀ Գիտության և կրթության նախարարության կողմից 2017թ.

41. Էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարության նախագիծ: Ներկայացված է ՀՀ Կառավարություն

հաստատման ՀՀ Բնության պահպանության նախարարության կողմից 2017թ.:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ԻԲԲԵՎ ԴԵՊԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲԱԶԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉ

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ ՍԻՐԻՆԵ ԿՈՍՅԱՆ ԼԻԱՆԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հայկական պետական մանկավարժական համալսարանի
Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոն,
«Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիա

Հոդվածում ներկայացված են մեր մոլորակի ընդհանուր էկոլոգիական իրավիճակի վերլուծությունը՝ անթրոպոգեն գործունեության արդյունքում և էկոհիլորտի արձագանքը բնական և տարերային աղետների տեսքով: Հիմնավորված է Երկրի բնակչության մտածելակերպի արմատական վերածեվակերպման հրատապությունը կայունության ուղղությամբ զարգացման նպատակով, ինչին և կոչված է կրթություն հանուն կայուն զարգացմանը,

որի բազային բաղադրիչ է հանդիսանում էկոլոգիական կրթությունը:

Ներկայացված են նաև Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում էկոլոգիական կրթության դրական փորձի, հիմնախնդիրների և հեռանկարների ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև համապատասխան առաջարկություններ՝ այս ուղղությամբ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ինստիտուտների բարելավման վերաբերյալ:

ENVIRONMENTAL EDUCATION AS A BASIC COMPONENT IN THE PROCESS OF TRANSITION TO SUSTAINABLE DEVELOPMENT

**KARINE DANIELYAN
SIRINE KOSYAN
LIANA NERSISYAN**

Department of ecology and sustainable development of
Kh. Abovian Armenian State Pedagogical University,
Association “For Sustainable Human Development”

The article presents an analysis of the general ecological situation in our planet as a result of anthropogenic activity and the response of the ecosphere in the form of natural disasters and catastrophies. The article also justifies the imperative necessity for radical changes in the Earth's population mentality. Which will contribute to the development in the mainstream of sustainability at is aimed

education for sustainable development.

The article also presents the results of positive experience, problems and perspectives of environmental education in the frame of educational system of the Republic of Armenia as well as the appropriate recommendations for improving the institutions of formal and non-formal education in this aspect.

ԴՊՐՈՑՆԵՐԸ ԱՅՐԱՐԱՏԻ

ԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ-ՓՈԽԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վաչուտյան կողմնակալ-փոխար-
քաներն Այրարատ նահանգում իրենց
կառավարման ամբողջ ընթաց-
քում՝ 1206-1350-ական թվականնե-
րին, խիստ կարևոր ուշադրություն են
դարձրել հողևոր, կրթական, մշակու-
թային կյանքին: Նիգ-Արագածոտնում
գտնվող Հովհաննավանքում, Սաղմո-
սավանքում, Թեղենյաց վանքում գոր-
ծել են կրթական տարբեր մակարդա-
կի դպրոցներ, որտեղ ուսումնասիրվել
են տոմարագիտություն, փիլիսոփա-
յություն, երաժշտություն, բանասիրու-
թյուն, վայելչագրություն:

Հովհաննավանքի դպրոցը: 1243
թ-ին Կոստանդին Բարձրաբերդցի
կաթողիկոսը Այրարատի կողմնակա-
լության-փոխարքայության տիրակալ
Քուրդ Ա Վաչուտյանի խնդրանք-պա-
հանջով հաստատել է Անբերդի եպիս-
կոպոսական թեմը Հովհաննավանք
կենտրոնով [1, էջ 43-57]:

Եպիսկոպոսական թեմի առաջնորդ
է դարձնել Քուրդ Ա-ի կնոջ՝ Դսեղի Հա-
մազասայան-Մամիկոնյան տնից Խո-
րիշահ իշխանուհու տոհմակից Համա-
զասայր: Նրա անունն առաջին անգամ
հիշվել է Ուշիի Սուրբ Սարգիս եկեղե-
ցու գավթի բարավորի արձանագրու-
թյան մեջ. «...Ի տէր Յոհաննիսէ: ... Եվ
տէր Համազասայա: ... Ի թվիս 2ԺԳ
(1264)» [2]: Համազասայ Մամիկոնյա-

նը բարձրացել է եկեղեցական աստի-
ճանակարգով և հասել արքեպիսկո-
պոսական գավազանի: Համազասայ
արքեպիսկոպոսի պաշտոնավարումից
առաջ ևս Հովհաննավանքում գործել է
դպրոց: Սակայն նրա օրոք սովորողնե-
րի թիվն ավելացել է և նրանց ուսուց-
ման գործը կազմակերպելու համար
իրականացվել է բազմաթիվ ուսումնա-
կան գրքերի արտագրություն:

Պահպանվել ու մեր օրերն են հա-
սել և այժմ Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանում պահվում են Հա-
մազասայ արքեպիսկոպոսի պատ-
վիրած յոթ ձեռագրեր: Ձեռագրերն
ընդօրինակվել են 1286, 1288, 1289 /
երեք ձեռագիր/, 1293, 1294 [3, էջ 595,
611-614, 633-634, 635, 722, 732-733]
թվականներին: Այդ ձեռագրերն են
«Մեկնութիւն հանգստեան Յոհան-
նու», «Մեկնութիւն գործոցն առաքելոց
Յոհաննու Ոսկեբերանի», «Պատմու-
թիւն հայոց Ղեւոնդայ վարդապետի»,
«Մեկնութիւն հնգամատենին Վարդա-
նայ Արեւելցոյ», «Պատմութիւն Ագա-
թանգեղոսի», «Մեկնութիւն սաղմոսաց
Ներսէսի Լամբրոնացոյ»: Սրանց մեջ
կան գործեր, որոնք այդ ստեղծագոր-
ծությունների ամենահին ընդօրինա-
կություններն են:

Համազասայ արքեպիսկոպոսն
իր ժամանակի այն քիչ գործիչներից

էր, որ գիտակցել է լուսավորության, կրթության անհրաժեշտությանը: 1289 թ-ին ընդօրինակված «Ժողովածուի» հիշատակարանում անձամբ գրել է. «Այս պատմութիւն իմաստասիրական ոչ գոլով ի սուրբ մենաստանիս, ի վանս Յովհաննու, ես՝ տէր Համազասպ բազում փափագանաւք ի խնդիր էի, զի յետ իմ մնասցէ ինձ ընծայ ընդ մեծամեծս» [3, էջ 633]: Իր պատվիրած ձեռագրերը Համազասպ եպիսկոպոսն ընծայել է Հովհաննավանքի վանական գրադարանին. «Եւ ընծայեցոյց զսա ի Սուրբ Կարապետն, ի վանս Յոհանու, ի լուսավորութիւն հաւատացելոց, եւ ի վարժումն մանկանց եկեղեցոյ» [3, էջ 722]: Այս մեջբերումից պարզվում է, որ գրքերը ծառայել են նաև «**ի վարժումն մանկանց եկեղեցոյ**», որն էլ եկեղեցում դպրոցի գոյության հավաստումն է: Հովհաննավանքում գործել են տասնյակ գրիչներ: Նրանք ընդօրինակել են բազմաթիվ ձեռագրեր: Այդ ձեռագրերից մեր օրերն են հասել ու Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանում պահվում են 20-ը: Դրանք ընդօրինակել են Կարապետ, Սարգիս, Յոհաննես, Քահանա, Գրիգոր գրիչները և ուրիշներ: Հնարավոր է, որ այդ գրիչներն իրենք ևս սովորել են Հովհաննավանքի դպրանոցում:

Սաղմոսավանքի բարձր տիպի դպրոցը: Հիմնադրման պահից և հետագա դարերում Սաղմոսավանքը մեծ դեր է խաղացել հոգևոր-կրթական կյանքում: Այստեղ հայ իրականության մեջ առաջինների թվում՝ 1255 թ-ին Քուրդ Ա Վաչուտյանի կողմից գրատան հատուկ շենք է կառուցվել, որն ունեցել է դրա համար անհրաժեշտ բո-

լոր հարմարությունները: Գրատունն ունեցել է հարուստ գրադարան, որի գրքերի ցուցակը հայ իրականության մեջ առայժմ հայտնի հնագույն գրացուցակն է և ստեղծվել է 13-րդ դարի սկզբներին, քանի որ 1245 թ-ին գրացուցակի տակ ընծայագիր է թողել Քուրդ Ա-ի որդի Վաչե Բ-ն [4, էջ 142-144]:

Պատմիչ Կիրակոս Գանձակեցին հայտնել է, որ Վարդան վարդապետ Արևելցին 1245 թ-ին Սսի ազգային-եկեղեցական ժողովի (ընդունված 1243 թ-ին) որոշումները բերելով Արևելյան Հայաստան՝ այցելել է «զլխաւոր վանորայքն», այդ թվում՝ Սաղմոսավանք [5, էջ 310]:

Շուրջ երկու տասնամյակ անց՝ 1267 թ-ին, նույն Վարդան Արևելցին Սաղմոսավանք է այցելել իր դպրոցի աշակերտներով և այն միավորել է տեղի բարձր տիպի դպրոցի հետ: Վարդան Արևելցու Սաղմոսավանքում հիմնավորվելու մասին հաղորդել է նրա դպրոցի սան, հայ մշակույթի նշանավոր դեմքերից մատենագիր, լեզվաբան, բանաստեղծ, գրիչ, երաժիշտ-տեսաբան Գևորգ Սկևռացին [6, էջ 20], որ այդ ժամանակ կատարելագործվում էր գրչության արվեստի մեջ: 1267 թ-ին Սաղմոսավանքում Գևորգը գրել-ավարտել է իր ձեռագիր ժողովածուի առաջին մասը [3, էջ 352]:

1311 թ-ին Կաթողիկե եկեղեցու ներսում, արևմտյան պատի վրա, մուտքի հարավային կողմում փորագրվել է. «Կամաւ ամենակալին Ա/ստուծո/յ եւ առաջնորդութեան Ս/ուր/բ ուխտիս Յակոբա ռաբունապետին եւ յիշխանութեան տեղոյս Ճոն Ս/ար/գսին ես՝ Խաչատուր վարդապետ... Ետու զիմ հալալ գանձագին Աստուածաշունչն

ի Ս/ուր/բ էկեղէցիս...» [2]: Վանքի առաջնորդի ռաբունապետ (ուսուցչապետ) կոչումը թույլ է տալիս եզրակացնելու, որ տեղի դպրոցը եղել է բարձր տիպի, այնտեղ ուսուցանել են «րաբունի»-վարդապետ-ուսուցիչներ և նրանց ղեկավարել է Յակոբ ռաբունապետը: Ուսուցչապետ-առաջնորդին մեծ պատիվ է մատուցվել նաև մահից հետո: Նա թաղվել է վանքի հյուսիսային կողմում, եկեղեցի տանող ճանապարհին: Գերեզմանի վրա կառուցվել է հոյակապ որմնափակ մահարձան՝ հետևյալ գրությամբ. «Ս/ուր/բ նշան տէրունական Յակոբ ռաբունապետին լէր քավարան: Թվ/ին/ ՉԿ /1321/» [2]:

Ժամանակակիցները Սաղմոսավանքի մասին նշել են մեծ ակնածանքով: Կարապետ գրիչը 1436 թ-ին արտագրած «Մաշտոցի» հիշատակարանում գրել է, որ ձեռագիրն արտագրել է «յերկնահանգէտ և ի գերահոչակ ուխտոն Սաղմոսավանից» [7, էջ 423]:

Մեծ էր Սաղմոսավանքի գրիչների հեղինակությունը: Նրանց պատվերներ են տվել անգամ Մեծօփա, Սանահինի վանքերի կրոնավորները, նորագավիթցիները: Սաղմոսավանքում ստեղծված [8, էջ 937, 1186], նրա գրատանը պահվող ձեռագրերի [9] հատ ու կենտ օրինակներ են պահպանվել ու հասել մեր օրերը: Դրանք հիմնականում ոչնչացվել են թշնամիների ձեռքով [10, էջ 569-570, 577 և հետո], մի մասն էլ պահվել է Սաղմոսավանքի ձորի անմատչելի այրերում՝ մնացել անհայտ կամ խոնավությունից ու չորությունից փչացել [11, էջ 167]:

Թեղենյաց վանքի բարձր տիպի դպրոցը: Վաչուտյանների գործունեությունը դարձել է այս մշակութային

կենտրոնի նոր վերելքի ժամանակաշրջան: Այստեղ է 1211 թ-ին առաջին անգամ վավերագրվել երկրամասի նոր տերերի՝ Վաչուտյանների անունը, Այրարատի կողմնակալության-փոխարքայության առաջին գահակալ, իշխանաց իշխան Վաչե Ա-ի կնոջ՝ Մամախաթունի նվիրատվական արձանագրությամբ:

Թեղենյաց վանքի գործունեությունը խրախուսել ու նպաստավորել են նաև փոխարքայության հաջորդ գահակալ, իշխանաց իշխան Քուրդ Ա Վաչուտյանն ու կինը՝ Խորիշահը: Գավթի հյուսիս-արևելյան սյան թռիչքի վրա փորագրված արձանագրությամբ նրանք հայտնում են. «... Քուրդ իշխանաց իշխան, որդի Վաչեի եւ ամուսին իմ Խորիշահ, դուստր Մարծպանա, միաբանեցաք ի Ս/ուր/բ ուխտս Թեղենեաց եւ տվաք արդինս» [2]: Արձանագրությունը թվագրված չէ, հավանաբար գրվել է 1230-ական թվականների կեսերին, երբ Քուրդ Ա-ն փոխարինել է հորը:

Թեղենյաց վանքում գործունեություն են ծավալել միջնադարի մշակույթի ականավոր ներկայացուցիչներ Վարդան Արևելցին, նրա աշակերտ Գևորգ Սկևռացին: Թեղենյաց վանքում ավարտած ձեռագրի հիշատակարանում Գևորգ Սկևռացին գրել է, որ իրենց շարժական դպրոցը, որ Խոր Վիրապից 1267 թ-ին փոխադրվել է Քուրդ Ա-ի մոտ՝ Սաղմոսավանք, որտեղ ինքն ավարտել է ձեռագիր մատյանի առաջին մասը, այնուհետև՝ «ղէպ լինէր և անտի ևս փոխիլ նմա ի գործ բարութ *ուսուցչութեանն*՝ ի տեղի, ուր Տէր յաջողէցեղ, յուղարկեալք եղեալ մեր ի ստացողէ տառիս՝

ի բուն տունս իւրեա[նց], ի մեծ[ահռ]-
չակ, հրեշտակակրան, աստուածաբ-
նակ սուրբ ուխտս Թեղինեաց» [3, էջ
352]: Հիշատակությունից հետևում է,
որ այդ ժամանակ՝ 1267 թ-ին, Թեղե-
նյաց վանքը մեծ հռչակ ունեցող հոգ-
ևոր ու ուսումնական հաստատություն
էր: Այստեղ Գևորգ Սկևռացին զբաղվել
է ձեռագրի կատարելագործման ար-
վեստով: Իր հիշատակարանում նա
նշել է, որ իրեն այդ գործում ղեկավա-
րել է Սարգիս քահանան: Հիշատակա-
րանից իմացվում է նաև, որ ձեռագրի
երկրորդ մասն ամբողջովին գրվել է
Թեղենյաց վանքում: Այդ ձեռագրի
մասին Գալուստ Տեր-Մկրտչյանը գրել
է. «Ընտիր գրչություն է, բոլորգիր, գե-
խակարգությունները կարմրադեղով»
[12, էջ 278]: Ձեռագրի Թեղենյաց վան-
քում ստեղծված մասում (474 բ թերթ)
Գևորգ Սկևռացին գետեղել է լեզվի և
հատկապես կազմության տեսակետից
ինքնատիպ մի ոտանավոր-աքրոստի-
կոս: Ոտանավորի առաջին սյան յու-
րաքանչյուր երկրորդ տողի առաջին
տառերով կարդացվում է «Գեորգ պա-
տանին է գրեաց», երկրորդ սյան նույն
տողերի վերջին տառերով՝ «Գրիգորի
վարդապետին»: Աքրոստիքոսը նվիր-
ված է Թեղենյաց դպրոցի ռաբունա-
պետ Գևորգ վարդապետ Բջնեցուն:
Նա ավելի ուշ կղառնա Այրարատյան
թեմի առաջնորդ և կնստի Բջնիում [1,
էջ 55]:

Գևորգ Սկևռացու ձեռագիր մատյա-
նը, որ մաս-մաս գրվել է Խոր Վիրա-
պում, Սաղմոսավանքում և 1267 թ-ին
ավարտվել Թեղենյաց վանքում, այժմ
պահվում է Երևանի Մեսրոպ Մաշտո-
ցի անվան Մատենադարանում՝ 3082
թվահամարի տակ [8, էջ 937]:

Հավանական է, որ Վարդան Արևել-
ցին իր հայտնի «Մեկնութիւն Դանիելի
մարգարէի» գործը, որ սկսել էր 1267
թ-ին Խոր Վիրապում և ավարտել 1268
թ-ին Աղջոց վանքում, մասամբ գրել է
Թեղենյաց վանքում: Հիշատակելի է,
որ իր աշխատության գրվելու նպաս-
տավորողների թվում Վարդան Արե-
վելցին հիշել է նաև իշխանաց իշխան
Քուրդ Ա Վաչուտյանին: Նա մասնա-
վորապես գրել է. «երախտաւոր պա-
րոնացն Սադունին /Արծրունի/, Սմբա-
տա /Օրբելյան/, **Քրդին /Վաչուտյան/,**
Պռաւշայ /Խաղբակյան/» [3, էջ 366]:

Ինչպես ամեն տեղ, որտեղ հաս-
տատվել է Վարդան Արևելցին, Թեղե-
նյաց վանքում նույնպես, նա հատուկ
ուշադրություն է նվիրել ուսուցման
գործի կազմակերպմանը: Ամենայն
հավանականությամբ, մեծ ուսուցչա-
պետը միացրել է Թեղենյաց վանքի և
իր դպրոցները:

Իր հայտնի հիշատակարանում
Գևորգ Սկևռացին մեծ ակնածանքով
է խոսում տեղի իմաստասերների մա-
սին: Իրեն օգնող Սարգսի մասին նա
գրել է. «բարվոք ընկալեալ զմեզ բա-
րեբարոյ և սրբասէր քահանայի Սարգ-
սի, սիրով և յաւժարամիտ կ/ամ/աւք
սպասաւորելով» [3, էջ 352]: Իսկ ահա
ինչպես է ներկայացրել Թադեոսին.
«...վարկանիմ **չորեմարան ասել զնա**
բնաւից աստուածահաճոյ առաքինու-
թեամբ» [3, էջ 352]: Գևորգ Սկևռացին
ամենայն սիրով է ներկայացնում նաև
վարդապետների մի խմբի, որ ավար-
տել էին Վարդան Արևելցու դպրո-
ցը. «Յիշեսցիք աղաչեմ զսընդնդկիցս
Գրիգորի վարդապետի... քահանայն...
զյոյով ընդ նմին զաշխատեալն զաս-
տուածարեալն ի քահանայս զՅակո-

բոս, ևս և զուսումնակից ըստ հոգւոյն, զկատարեալ եղբայրն հեգահոգի, զհոմանուն սորին զԳրիգոր քահանայ, որք... *Ժամանակաց քրտնաջան վաստակաւք և տրնութեամբ կրթեին առ ոյս սուրբ և արդիւնական վարդապետին մեծի Վարդանայ, դեգերեալք և տրնութեամբ և շնորհացն Աստուծոյ հասեալք կատարման գիտութեան աստուածային գրոց, զորս տէր Յիսուս անփորձ և անխոռվ պահեսցէ և ի հանդերձիալն սրբոց իւրոց դասակից արասցէ*» [3, էջ 352]: Եվ «դեգերեալք և տրնութեամբ հասեալ կատարման գիտութեան» Գրիգոր վարդապետը /նույն ինքը նշանավոր ռաբունի Գրիգոր Բջնեցիին/, Յակոբոսը, մյուս Գրիգորը, վերը հիշված Սարգիսն ու Թադեոսն արդեն իսկ մի փայլուն կաճառ էին ցանկացած ուսումնական հաստատության համար: Որ Գրիգոր վարդապետն ուսանել է Վարդան Արևելցուն, և ինքն էլ հետագայում դարձել է ռաբունապետ-ուսուցչապետ, նշված է նաև նրա ստացած «Մեկնութիւն երկուտասան մարգարէիցն Ներսիսի Լամբրոնացոյ» ձեռագրի հիշատակարանի 217 բ, 224 ա էջերում. «Չարի, երջանիկ, զսուրբ և տիեզերալոյս ռաբունապետն զԳրիգոր Բջնեցի...», «րաբունի վարդապետն Գրիգոր մականունն Բջնեցի բարի անուն, լեալ աշակերտ մեծ վարդապետին Վարդանա» [3, էջ 534]:

Վարդան Արևելցու հեռանալուց հետո Գրիգոր վարդապետը ղեկավարել է Թեղենյաց դպրոցի գործունեությունը: Այդ տարիներին նրա դպրոցի սովորողների թվում էին ապագա գրիչ Դավիթն ու ռաբունի Մկրտիչը: Տարիներ անց իր չափաճո հիշատակարանում Դավիթ գրիչն ուսուցչապետի մասին գրել է.

*Եկեղեցոյս Սուրբ Թեղենեաց
Տէր, վերապետուչ մեծ Գրիգոր,
Որ Բջնեցին էր բանավոր
Եւ հանճարեղ, հոչակաւոր*
[3, էջ 601]:

Մկրտիչ ռաբունին իր ուսուցչի մասին 1298 թ-ին արտագրած «Մեկնութիւն կաթողիկէից թղթոց» ձեռագրի 330 ա և բ էջերում գրել է. «...սուրբ ռաբունապետն իմ Գրիգոր մակայորջորջեալ Բրջնեցի, զսնուցիչն իմ և զերախտաւոր, որ էր այր բարեսէր և կատարեալ յիմաստս առաքինութեան, ի տեսականն և ի գործնականն, բայց առաւելեալ բանականան, որպէս թէ սեռ իսկ ասել զնա բանի, և կամ միտ, վասն որոյ պատուել յաստուածուստ և ի մարդկանէ, ի մեծամեծաց և ի փոքունց: Եւ էր տարփաւղ աստուածային և հոգևոր գանձուն... և ի տաժանալից կենցաղոյս, որ և յայսմ ամի փոխի առ անձկալին իւր Քրիստոս» [3, էջ 823-824]: Այս հիշատակարանից պարզվում է, որ 1298 թ-ին ռաբունապետ Գրիգոր Բջնեցին մահացել է: Հիշատակարանը կարևոր է նաև նրանով, որ այդտեղ հայտնվում է, որ Բջնիի եպիսկոպոսական թեմի, ինչպես նաև Այրարատյան թեմի առաջնորդ Յովհաննես արքեպիսկոպոսը Գրիգոր ռաբունապետի քրոջ որդին է: Մկրտիչ ռաբունին միաժամանակ հուշում է, որ ինքը Յովհաննես արքեպիսկոպոսի բարեկամն է, արյունակիցը. «որ է արեան մերձաւոր իմ» [3, էջ 823-824]:

Նույն հիշատակարանում Մկրտիչն իրեն անվանում է «սուտանուն արեղա», հակառակ իրեն՝ ջերմորեն է արտահայտվում հարազատ եղբոր՝ Յով-

հաննես քահանայի մասին: Հավանաբար, Յովհաննեսը նույնպես ապրել ու գործել է Թեղենյաց վանքում:

Ձեռագրի 329 ք էջից սկսվել ու հաջորդ էջում շարունակվել է Մկրտիչի չափածո հիշատակարանը, որ գրված է բավականին գրագետ, մտածված տաղաչափական հանգով.

*Մկրտիչ անուն և եղկելի,
Սուր քահանա, արարամ ոգի,
Ժահահոտեալ մեղավք իլի,
Ջոր կամաւորն գործեցի:
Ի նահանկէ Այրարարի,
Լուսավորչին մերոյ տեղի,
ՅԱրարարէ հոչակելի,
Որ յորջորջի նա Թեղենի
[3, էջ 823-824]*

Մկրտիչի ընդօրինակած այս ձեռագրի արժեքն առավել բարձր է, քանի որ լույս է սփռում գրչագրողի կենսագրության ևս մեկ փաստի վրա: Մեծանուն հայագետ Գարեգին Հովսեփյանցը, ուսումնասիրելով Մկրտիչ գրչի 1302 թ-ի Թեղենյաց վանքում ընդօրինակած «Մեկնութիւն սաղմոսաց Ներսիսի Լամբրոնացոյ» ձեռագիր ժողովածուն, հաշվի առնելով գրչի այն հաղորդումը, որ ձեռագիրն ընդօրինակվել է մեծ ուսուցչապետ Եսայու պատվերով, ինչպես նաև Մկրտիչի **րաբունի** կոչումը, մտքի ուժով եզրակացրել է, որ Մկրտիչ րաբունին ուսանել է Գլաձորի համալսարանում [13, էջ 262-263]: 1298 թ-ին ընդօրինակված «Մեկնութիւն կաթողիկէից թղթոց» ձեռագրի հիշատակարանները հաստատում են մեծ հայագետի կարծիքը: Ձեռագրի

261 ք էջում Մկրտիչ գրիչը զետեղել է ևս մեկ չափածո հիշատակարան, որտեղ մասնավորապես հայտնում է.

*Ընդ նմին և զեղկելիս
Վերագծող այսմ տառիս
Ի մենաստանիս Գլաձորիս,
Ընդ հովանեաւ Սուրբ
Ստեփանոսիս,
Ձեռամբ անարժանիս Մկրտիչիս,
Եւ դերանուն կրանաւորիս,
Որ սպասաւոր եմ լեալ բանիս,
Միայն անամբ ու ոչ ըստ գործիս,
Ընդ խնամաւք վարժապետիս,
Կայծակնամաքուր մեծ հռեպորիս,
Անուանակիր մարգարէիս,
Որ յորջորջի իսկ Եսայիս
[3, էջ 824-825]:*

Փաստորեն, այս ձեռագիրն ընդօրինակվել է ոչ թե Թեղենյաց վանքում, ինչպես նշված է «ԺԳ դարի հիշատակարաններ» գրքում, այլ Գլաձորում, որտեղ Թեղենյաց վանքից եկել է Մկրտիչը: Նույն չափածո հիշատակարանի հաջորդ քառատողից պարզվում է, որ Մկրտիչը մենակ չի մեկնել Գլաձոր, որ նրա հետ ուսումնառության է մեկնել նաև Սարգիս պատանյակը.

*Եւ զպատանիս իմ զՍարգիս,
Որ ընդ իս և սա իսկ պանդիստիս,
Ընդ նմին և զըղծալիս,
Սիրով կապեալ առ իմ ոգիս
[3, էջ 824-825]:*

Այս Սարգիսը Մկրտիչ րաբունու

հետ վերադարձել է Թեղենյաց վանք: 1302 թ-ին ընդօրինակված ձեռագրի հիշատակարանի վերջին մասում, Մկրտիչը, դիմելով ապագա ընթերցողներին, խնդրել է հիշել «զպատանիս՝ զԱրգիս դպիր, որ յոլով սպասատրեաց մեզ» [9, էջ 7]:

Մկրտիչ Թեղենացին Գլաձորի համալսարանում սովորել է 1298-1302 թվականներին և, ինչպես գրել է, վայելել է մեծ ռաբունապետ Եսայի Նչեցու «յոլով խնամս» [9, էջ 6]: Եթե 16-17 տարեկան պատանու համար Գլաձորի համալսարանական ուսումնառության շրջանը կազմել է շուրջ 7 տարի, ապա Մկրտիչն այն ավարտել է 3-4 տարում, որը հաստատում է, որ նա Թեղենյաց վանքում արդեն ստացել էր բարձր տիպի կրթություն, իսկ Գլաձորում հետևել է միայն վարդապետական դասընթացներին և համալսարանն ավարտելով՝ ստացել է «ռաբունի»-ուսուցչապետ կոչում: Պատմաբան Ի.Գ.Ղարիբյանն իր *Գլաձոր* գրքում անդրադառնալով Մկրտիչ ռաբունուն՝ վրիպում է թույլ տվել: Նա մի քանի առիթով գրել է. «Եսայի Նչեցու մահից հետո... համալսարանի ուսուցչապետների մի զգալի մասը հեռանում է Թանահատ-Գլաձորից և տարբեր տեղերում հիմնադրում նոր դպրոցներ: Դրանցից հիշատակության արժանի են... *Մկրտիչ ռաբունու դպրոցը Թեղենյաց վանքում...*» [14, էջ 59, 65 և հետո]: Մկրտիչ ռաբունու առումով պատմաբանի գրառումը սխալ է, քանի որ Մկրտիչը ռաբունական կրթությունը Գլաձորում ավարտել է 1302 թ-ին և վերադարձել է Թեղենյաց վանքի դպրոց պաշտոնավարելու, մինչդեռ մեծ ռաբունապետ Եսայի Նչեցին մահացել է 1338 թ-ին:

Մկրտիչ ռաբունու հետզվածորյան շրջանի մասին ևս տեղեկությունները սահմանափակ են: Մեզ է հասել միայն 1302 թ-ին ընդօրինակված «Մեկնութին սաղմոսաց Ներսիսի Լամբրոնացույ» վերնագրով ձեռագիրը: Այն մի մեծ հատոր է, կազմված 673 օսլայած թերթերից: Խոսելով այդ ձեռագրի գրվելու հանգամանքների մասին, Մկրտիչ ռաբունին նշել է, որ այն Եսայի Նչեցու պատվերով Գլաձորում սկսել է ընդօրինակել Հովհաննես Երզնկացի գրիչը: Սակայն նա արտագրել է միայն Ներսես Լամբրոնացու սաղմոսների մի մասը: Այդ գլխի շարունակության մի փոքր մասն էլ ընդօրինակել են Վարդան Երզնկացի և Վարդան Կիլիկիացի գրիչները: Սակայն ընդօրինակության գործը գրեթե ամբողջությամբ կատարել է Մկրտիչ ռաբունին: Ձեռագրի հիշատակարանում թեև ինքնանվաստացման սկզբունքով Մկրտիչն իր մասին հայտնել է, որ «թարմատար և անարիեստ գրիչ» է, բայց Գ. Հովսեփյանցը նրա մասին գրել է. «Հակառակ յուր համեստության, երևում է ոչ համբակ, այլ արդեն *րաբի* /րաբունի/, այսինքն վարդապետ-ուսուցիչ և գրչության մեջ ընտիր և անսխալ... Հիշատակարանի շարադրությունը մաքուր և լավ գրաբարով, հրահանգված մտքի արդյունք, իսկ գրչությունը՝ գեղեցիկ» [13, էջ 262-263]: Մկրտիչ ռաբունին իր ընդարձակ հիշատակարանի վերջում հետաքրքիր տեղեկություն է հայտնում Թեղենյաց վանքի մասին: Նա գրում է, որ ձեռագիրն ընդօրինակելու ընթացքում, այլ պատճառների հետ միաժամանակ, իրեն խանգարել է «...և ևս աղմուկ զրուցաց յոլով լիներ մերձ իմ, յորմէ սխալէի, վասն որոյ և ոչ կարո-

ղանայք ճոհողակի հանդիպիլ ի գործ արհեստիս»: Հետևում է, որ այդ ժամանակ՝ 14-րդ դարի սկզբներին ևս, Թեղենյաց միաբանությունը մեծ էր, այդտեղ այնքան միաբաններ, գրիչներ, դպրոցում սովորողներ կային, որ նրանց զրույցները խանգարում էին Մկրտիչ րաբունուն հաճախակի զբաղվելու իր արհեստով՝ գրչությամբ: Այստեղ հետաքրքրական է ևս մեկ հանգամանք. Մկրտիչը ձեռագիր արտագրելուն մոտենում է ոչ թե որպես զբաղմունքի, հետաքրքրության, այլ մատնանշում է, որ այդ գործն իր արհեստն է: Մկրտիչ րաբունու ընդօրինակած ձեռագիրն այժմ պահվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում՝ 6558 թվահամարի տակ [15, էջ 344]:

Թեղենյաց վանքում գործել են նաև ուրիշ գրիչներ: Նրանք հավանաբար նույն վանքի դպրոցի սաներն են: 13-րդ դարի երկրորդ կեսից հայտնի են Նահապետը, Քահանան, Շմավոնը [16, Բ, էջ 45, Դ, էջ 168, Ե, էջ 213-214]: Քահանան և Շմավոնը եղբայրներ էին, իսկ Նահապետը նրանց հորեղբայրը: Նահապետն է վանքի դպրոցում ուսուցանել նրանց, հասցրել քահանայական աստիճանի: Նա մահացել է 1266 թ-ին: Եղբոր որդիները Նահապետի գերեզմանին մի գեղաքանդակ խաչքար են կանգնեցրել: Թեև խաչքարը կտորված, մասերի է բաժանված, բայց արվեստի կատարյալ գործ է եղել: Խաչքարի խորանարդաձև պատվանդանի մի երեսին փորագրված է. «Ի թվ/ին/ ՉԺԵ /1266/: Յուսով անմահին Ա/ստուծոյ Քահանայս եւ եղբայր իմ Շ/մաւոն կանկնեցաք զխաչս ի բարեխաւսութ/ի/

ւն Նահապետ/ին եւ մեզ: Որք կարդայք զմեզ յիշեցէք ի Ք/րիստոս/ս» [17, էջ 127]: Նահապետի հիշատակը հավերժացնելու նպատակով Քահանան սկսել է մի Ավետարան ընդօրինակել, սակայն չի հասցրել ձեռագիրն ավարտել՝ մահացել է: Եղբոր սկսած գործը շարունակել է Շմավոնը: Նրան օգնել է Դավիթ գրիչը: 1295 թ-ին նրանք միասին ավարտել են Ավետարանի ընդօրինակությունը: Այդ ձեռագիրն այժմ պահվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանում [18, էջ 16]:

Դավիթ գրիչը Թեղենյաց վանքում գործել է 1280-ական թվականներից, նրա հիշատակարանից մի քաղվածք վերը հիշատակվել է՝ կապված Գրիգոր Բջնեցու հետ: Արգասաբեր է Դավիթ գրչի աշխատանքը: Բացի Շմավոնի խնդրանքով ավարտին հասցրած Ավետարանից, նա 1287 թ-ին և դարավերջին՝ հավանաբար 1295-1300-ական թվականների ընթացքում, ընդօրինակել է ևս երկու Ավետարան, որոնք այժմ պահվում են Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում՝ 4645 [8, էջ 1252] և 6558 [15, էջ 344] թվահամարների տակ: Դարավերջին արտագրած Ավետարանի հիշատակարանում Դավիթ գրիչը ցավով նշել է այն ավերածությունների մասին, որ Հայաստան աշխարհին հասցրել են մոնղոլ բռնակալներն ահավոր հարկապահանջությամբ ու անօրեն վարքով: Մկրտիչ րաբունու նման Դավիթ գրիչը ևս իր հիշատակարանները շարադրել է չափածո: 1287 թ-ին ընդօրինակված Ավետարանի հիշատակարանն այսպես է սկսվում.

*Իսկ սաստանայ խափան եղև
բազմադեմի,
Չի զառաջին փառսն սքանչելի
Նկարագրեալ Մոմիկ գրչի
Գեղադեղ և պիտանի
Պիղծ հարամիք փարան գերի...
[3, էջ 601]:*

Այս հիշատակարանից կարելի է եզրակացնել, որ այն առաջին օրինակը, որից Դավիթն ընդօրինակել է պատկանել է մեծանուն ճարտարապետ Մոմիկի գրչին ու, ցավոք, թշնամիների կողմից տարվել է գերի: Հնարավոր է, որ Դավիթը ևս սովորել կամ կատարելագործվել է Գլաձորի համալսարանում, որտեղ կարող էր առնչվել Մոմիկի ձեռագրի հետ:

Թեղենյաց վանքի դպրոցի հայտնի շրջանավարտներից է գրիչ, բանաստեղծ Տերտեր քահանա Երևանցին [19, էջ 865]: Նրա ուսումնառության տարիները կարող են տատանվել 1310-1320-ական թվականների միջև: Այդ շրջանում վանքի դպրոցը ղեկավարել է Հակոբ վարդապետը:

Մոնղոլական բռնատիրության օրավուր սաստկացող հալածանքները Տերտեր քահանային ևս ստիպել են բռնելու պանդխտության ուղին: 1330-1370-ական թվականներին նա ապրել է Դրիմի տարբեր քաղաքներում և հիմնականում զբաղվել ձեռագրերի ընդօրինակությամբ: Նա 1336 թ-ին Սուրխաթ քաղաքում արտագրել է «Ժողովածու քարոզից Վարդանայ Այգեկցույ», «Ժողովածու խրատուց», «Քարոզգիրք Վարդանայ Այգեկցույ», 1341 թ-ին Ազոխ քաղաքում՝ «Քարոզգիրք

Վարդանայ Այգեկցույ» ժողովածուները: Նշված ձեռագրերը պահվում են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում [15, էջ 657-658, 713]: Տերտեր քահանա Երևանցին գրել է մի հետաքրքրական պոեմ խաղողի, գինու և իմաստասերի վիճաբանության մասին [19, էջ 865]:

Ենթադրում ենք, որ Թեղենյաց դպրոցում բանաստեղծական մտածողությունը նույնպես որպես առարկա ուսուցանվել է:

Պահպանված և մեր օրերը հասած ձեռագրերի հիշատակարաններից երեկում է, որ դրանց գրվելուն նպաստել են քահանաներ Սարգիսը, երկու տարբեր Հովհաննեսներ, Վրթանեսը, պատանի դպիր Սարգիսը:

Վանքի առաջնորդներից սիրով է հիշվում Ժամանակի ճանաչված գործիչներից մեկը՝ Տուրքիկ վարդապետը: Տուրքիկ վարդապետը գործել է 13-րդ դարի սկզբներին, իր առաջնորդության տարիներին է կառուցվել հիմնական գավիթը: Պատմիչ Կիրակոս Գանձակեցին գրել է, որ նա վանքում վերացրել է մասնավոր սեփականությունը և «բարոք կարգաւորեաց զվանքն՝ զամենայն ինչ հասարակաց լինել և առանձին ոչ ինչ ստանալ»: 1205 և 1207 թվականներին նա մասնակցել է Ջաքարյան Հայաստանի տիրակալ Ջաքարե Բ-ի կողմից Լոռէ և Անի քաղաքներում գումարված եկեղեցական ժողովներին:

Վանքի միաբանները, դպրոցի ուսուցիչներն ու սովորողները միայն տեղացիներ չէին: Վանքի գերեզմանոցում թաղված են Վարդան քահանան «որ էր ի Կէսարացոց գաւառէն» /+1210/,

Երկաթի որդի Հովհաննես կրոնավորը
 Լոռիից էր, Գորգ /գուցե Գևորգ/ քա-
 հանան Վարազից: Գերեզմանոցում,
 ի թիվս հոգևոր գործիչների, թաղված
 է նաև աշխարհիկ անձնավորություն:
 Նրա տապանաքարին փորագրված է
 «ՉՊատրիկ մեղապարտ ծառա Ք/րիս-
 տոս/ի յաշխարհիկ կարգե յիշէցէք ի Ք/
 րիստո/ս» [2]:

Թեև Թեղենյաց վանքը շարունակել
 է ազգանպաստ գործ կատարել, բայց
 14-դարի երկրորդ կեսից, երբ պատ-
 մության թատերաբեմից հեռացան
 երկրամասի տերերը՝ Վաչուտյանները
 (մոտ 1350-1360-ական թվականեր),
 նրա մասին տեղեկությունները նույն-
 պես դադարել են:

Գրականություն

1. Տ. Պետրոսյանց, Այրարատյան կողմնակալության-փոխարքայու-
 թյան հոգևոր կենտրոնները, «Էջ-
 միածին», 2017, Զ:
2. Մեր հավաքածոյից:
3. Հայերեն ձեռագրերի հիշատակա-
 րաններ, ԺԳ դար, աշխատասիրու-
 թյամբ Ա.Մաթևոսյանի, Ե., 1984:
 Տես՝ Մ.Մաշտոցի անվան Մատե-
 նադարան, ձեռագրեր 497, 510,
 511, 512, 583, 591:
4. Տ. Պետրոսյանց, Վաչուտյան իշ-
 խանական տան տոհմաճառը,
 Բանբեր Երևանի համալսարանի,
 1981, թիվ 3:
5. Կիրակոս Գանձակեցի, Պատմու-
 թյուն հայոց, Ե, 1961:
6. Հայկական Հանրագիտարան, հ.
 3, Ե., 1977:
7. Մանր ժամանակագրություններ, հ.
 2, Ե., 1956:
8. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի ան-
 վան Մատենադարանի, հ.Ա, Ե.,
 1965: Ձեռագիր 3082 (Տոնապատ-
 ճառ, Հաւաքածո, 1267 թ.), 4186
 (Ավետարան, 1320 թ.): 1436 թ-ի
 մեկ ձեռագիր «Մաշտոց» Ալիշանը
 նշել է Վենետիկում (տես՝ Այրա-
 րատ, Վենետիկ, 1890, էջ 136):
9. Երևանի Մեսրոպ Մաշտոցի ան-
 վան Մատենադարանի թիվ 231
 ժողովածու: Ձեռագրում առկա են
 երկու տարբեր ժամանակներում
 ստեղծված գործեր՝ առաջինը՝ 14-
 րդ դարում անհայտ գրչանոցում,
 երկրորդը՝ 1312 թ-ին Փերճոց վան-
 քում, որի 367 ա էջին կա հետևյալ
 գրությունը. «Ի թվականիս Հայոց
 ՌՃԹ (1660) նորոգեցաւ և կազ-
 մեցաւ ի փառս Աստուծոյ: Գիրքս
 Սաղմոսավանիցն է»:
10. ԺԴ դարի հիշատակարաններ,
 կազմեց Լ.Ս.Խաչիկյանը, Ե., 1950:
11. Խաչիկ ծ.վ., Նորահիւտ մագաղա-
 թեայ նօտրագիր ցուցակ Սաղմո-
 սավանից մատենադարանի: «Շո-
 դակաթ», հայագիտական ժողովա-
 ծու, Վաղարշապատ, 1913:
12. Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական
 ուսումնասիրություններ, Ե., 1979:
13. Գ. Յովսէփեանց, Խաղբակեանք,
 Լիբանան, Անթիլիաս, 1969:
14. Ի.Գ. Ղարիբյան, Գլաճոր (տեղադ-
 րությունը, պեղումները, վիմական
 արձանագրությունները), Ե., 1983:
15. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի ան-
 վան Մատենադարանի, հ.Բ, Ե.,
 1967:

16. Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, հ. Բ, Ե., 1944, հ. Դ, 1948, հ. Ե, 1962:
17. Տ. Պետրոսյանց, Թեղենյաց վանքը իբրև մշակութային կենտրոն, Պատմա-բանասիրական հանդես, 1982, թիվ 1:
18. A Catalogue of the Armenian manuscripts an the British Museum, by F.C.Conibeaere, London, 1913.
19. Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Ե. 1976:

ШКОЛЫ В ТЕРРИТОРИЯХ НАМЕСТНИКОВ ВАЧУТЯН

ТИГРАН ПЕТРОСЯНЦ

Армянский государственный педагогический университет
имени Хачатура Абовяна
Директор научной библиотеки

В течение всего периода правления в провинции Айрарат, Вачутианские наместники уделяли особое внимание духовной, образовательной и культурной жизни в Нигер-Арагацотны (ныне Апаран и Аштарак) по праву собственно-

сти в 1206-1350 годах. В монастырях – Овганаванк, Сагмосаванк, Тегениац в Ниг-Арагацотне функционировали школы разных уровней образования, где изучали терминологию, философию, музыку и филологию.

SCHOOLS IN VICEROYS' VACHOUTIAN OWN TERRITORIES

TIGRAN PETROSYANTS

Khachatur Abovyan Pedagogical University Director of Scientific Library

During the entire period of their governance in Ayrarat province, Vachutian viceroys paid special attention to the spiritual, educational, and cultural life of Niger-Aragatsotn (current Aparan and Ashtarak regions) belonging to their property in the years 1206-1350. Schools

of different educational levels functioned in Hovhanavank, Saghmosavank and Tegheniats Monasteries located in Nig-Aragatsotn, where terminology, philosophy, music, and philology were studied.

ԱՌԱՇՆԵՐԻ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆԸ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ԴԱՍԱՎԱՆԴԵԼԻՍ

Հոդվածի նպատակն է՝ քննարկել առաձների և ասացվածքների դերը անգլերենը որպես օտար լեզու դասավանդելիս: Վերջին տարիներին գիտության և տեխնիկայի աննախադեպ զարգացման պայմաններում ավելի ու ավելի շատ են խոսում օտար լեզուների դասավանդման ժամանակակից մեթոդների մշակման ու կիրառման մասին: Ինչպես հայտնի է՝ դասավանդման մեթոդները բազմազան են, սակայն հաճախ նրանցից որոշները ավելի արդյունավետ են դառնում, երբ զուգակցվում են հավելյալ մեթոդներով: Նկատենք, որ դասավանդման ճիշտ մեթոդի ընտրությունից է կախված ուսումնական գործընթացի արդյունավետությունը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ առաձներ, ասացվածքներ, ժողովրդական բանահյուսություն, մեղեդային հնչերանգ, քերականական կառույցներ, դիպուկ, թարգմանչական հմտություններ:

Օտար լեզուներից առավել մեծացել է պահանջարկը անգլերեն լեզվի նկատմամբ՝ կապված տնտեսական, դիվանագիտական, քաղաքական հարաբերությունների, միջմշակութային կապերի, գիտության և տեխնիկայի զարգացման հետ: Ուրեմն՝ անգլերեն լեզու դասավանդողներն առավել պատասխանատվությամբ պետք է մոտենան խնդրին՝ ընտրելով դասավանդման առավել ճիշտ, արդյունավետ և հասանելի մեթոդներ սովորողների համար: Այս առումով որոշ մասնագետներ կարևոր են համարում ուսումնական պրոցեսում առաձների և ասացվածքների օգտագործումը: Այստեղ տեղին է նշել, որ վերջիններիս կիրառումը հավելյալ մի միջոց է՝ ուսումնական գործընթացն ավելի հետաքրքիր

և արդյունավետ դարձնելու համար: Ցավոք սրտի, անգլերեն լեզվի և, առհասարակ, օտար լեզուների դասագրքերում շատ քիչ տեղ է հատկացվում առաձների կամ ասացվածքների ուսումնասիրմանը և, չգիտես ինչու, ուսումնական ծրագրերը կազմելիս նրանք գրեթե անտեսվում են: Մինչդեռ քչերին է հայտնի նրանց օգտագործման արդյունավետությունը: Առաձներն ու ասացվածքները, իմաստային տեսակետից լինելով դիպուկ և հաճախ՝ մեղեդային հնչեղությամբ, ավելի դյուրին են մտապահվում սովորողների կողմից. մի հանգամանք, որը նպաստում է ոչ միայն բառապաշարի հարստացմանը, այլև խոսքը դարձնում ավելի դիպուկ և հասկանալի: Առաձներն ու ասացվածքները կազ-

մում են ժողովրդական բանահյուսության կարևոր բաղկացուցիչ մասը, որոնք իրենց մեջ ներառում են տվյալ ժողովրդի մշակույթը, պատմությունը, իմաստությունն ու փորձը՝ կուտակված իրենց գոյության ողջ պատմության և զարգացման ընթացքում: Մասնագետների հավաստմամբ, որոնք գործնականում կիրառում են առաձեռնիկ ու ասացվածքներ անգլերեն դասավանդելիս, դասերը դառնում են առավել արդյունավետ և հետաքրքիր, քանի որ սովորողները ծանոթանում են իրենց համար մինչ այդ անձանոթ մշակույթին, պատմությանը և ժողովրդական իմաստությանը: Այս հանգամանքը կարող է խթան հանդիսանալ սովորողների մոտ՝ ավելի խորը և հանգամանալից ուսումնասիրելու օտար լեզուն, իսկ մեր դեպքում՝ անգլերենը:

Առաձեռնիկ ու ասացվածքները կարելի է օգտագործել ուսուցման տարբեր փուլերում և տարիքային խմբերում (սկսնակներ, միջին և բարձր մակարդակներ): Սակայն այս դեպքում շատ կարևոր է նրանց ընտրության հարցը՝ ելնելով դասավանդման խնդիրներից ու նպատակներից: Նկատենք, որ առաձեռնիկ և ասացվածքների կիրառումը դասի ընթացքում լուծում է մի շարք կարևոր խնդիրներ՝

➤ **Ուսուցողական** – սովորողների մոտ կատարելագործվում են արտասանական հմտությունները, ընդլայնվում է բառապաշարը, նպաստում թարգմանչական հմտությունների ձեռք բերմանը, ամրապնդվում են քերականական գիտելիքները:

➤ **Զարգացնող** – ընդլայնվում է մտահորիզոնը, կատարելագործվում են սեփական մտքերն արտահայտելու

ունակությունները, ակտիվանում տրամաբանելու կարողությունը:

➤ **Դաստիարակչական** – սովորողները ձեռք են բերում բարոյա-կամային հատկանիշներ, այդ թվում՝ հանդուրժողականություն այլ մշակույթների, ժողովուրդների, սովորույթների նկատմամբ:

➤ **Խթանող** – մեծանում է սովորողների մոտ հետաքրքրությունը տվյալ լեզվի և տվյալ լեզուն կրող ժողովրդի նկատմամբ և այլն:

Ինչպես արդեն վերը նշվեց, առաձեռնիկ ու ասացվածքներն օգնում են ընդլայնելու բառապաշարը և քանի որ նրանք հաճախ լինում են կարճ, հանգավորված և մեղեդային հնչերանգով, ուստի բառապաշարն էլ ընկալվում և մտապահվում է հեշտությամբ: Սա առավել ակնհայտ է սկսնակների մոտ: Եթե մեր նպատակն է սովորողների մոտ ամրապնդել տվյալ առաձեռնիկ և ասացվածքը կազմող բառերի խումբը, ապա այս մեթոդը ճիշտ տեղին է: Օրինակ՝

1. **A friend in need is a friend indeed.**
2. **Live and learn.**
3. **A man proposes and God disposes.**
4. **Horses for courses.**
5. **Safe bind, safe find.**

Շատ հաճախ որոշ սովորողներ ունենում են արտասանական դժվարություններ: Սա հատկապես բնորոշ է ուսուցման սկզբնական փուլին: Ենթադրենք խնդիրը վերաբերում է անգլերենի [t] և [r] հնչյունների արտասանությանը: Այս դեպքում նպատակահարմար է հետևյալ ասացվածքի կիրառումը՝

Don't trouble trouble till trouble troubles you.

Մեկ ուրիշ դեպքում [θ] և [ð] հնչյունների արտասանությունը կատարելագործելու համար նպատակահարմար է օգտագործել հետևյալ օրինակները՝

Nothing seek, nothing find.

Wealth is nothing without health.

It takes a thief to catch a thief և այլն:

Եթե դասավանդողը ճիշտ ընտրի առաձներն ու ասացվածքները, ապա սովորողների մոտ կարելի է կատարելագործել ոչ միայն արտասանական, այլև քերականական համակարգը: Օրինակ՝ անգլերենի ստացական հոլովի /**Possessive Case**/ ամրապնդման համար, որպես հավելյալ միջոց, կարելի է առաջարկել հետևյալ առաձները կամ ասացվածքները՝

Caesar's wife must be above suspicion.

Everybody's business is nobody's business.

An Englishman's home is his castle.

Ածականների համեմատության աստիճանների դեպքում տեղին է հետևյալ օրինակների գործածումը՝

He laughs best, who laughs last.

Better late than never, but better never late.

East or West, home is best.

False friends are worse than open enemies.

Where the river is deepest, it makes least noise.

Laughter is the best medicine.

Actions speak louder than words.

Four eyes see more than two.

The highest tree has the greatest fall.

The best fish swims in the bottom.

The eye is bigger than the belly.

The least said the soonest mended.

The nearer the bone, the sweeter the flesh.

Անգլերենի մոդալ բայերի ուսուցման կամ ամրապնդման ժամանակ կրկին կարելի է դիմել առաձների կամ ասացվածքների օգնությանը՝

Good can never grow out of evil.

You can take a horse to the water, but you cannot make him drink.

The leopard cannot change his spots.

No man can serve two masters.

You cannot make a silk purse out of a sow's ear.

Every tub must stand on its bottom.

What can't be cured must be endured.

The wolf may change his coat, but not his disposition.

The wolf may lose his teeth, but never his nature.

You have made your bed and you must lie on it.

The cobbler should stick to his last.

Առաձների ու ասացվածքների քերականական կառուցվածքը հնարավորություն է տալիս դասավանդողներին օգտագործել նրանց նաև անգլերենի քերականական ժամանակաձեվերն ամրապնդելիս: Օրինակ, ապառնի անորոշ ժամանակաձևի համար

(Future Indefinite Tense) նպատակահարմար են գործածել հետևյալ օրինակները՝

If the sky falls, we shall catch larks.

If you run after two hares you will catch none.

If you agree to carry the calf, they will make you carry the cow.

Take care of the pence and the pounds will take care of themselves.

When the cat is away, the mice will play.

Who keeps company with the wolf will learn to howl.

Մեկ այլ դեպքում առաձներն ու ասացվածքները կարելի է օգտագործել անգլերենի կրավորական սեռը (Passive Voice) և դրա հետ կապված՝ անկանոն բայերն ուսումնասիրելիս՝

What is done can't be undone.

One link broken, the whole chain is broken.

If one claw is caught, the bird is lost.

Nothing is given so freely as advice.

One link broken, the whole chain is broken.

Իսկ հետևյալ օրինակներն էլ արտացոլում են անգլերենի հրամայական եղանակը՝

Never put off till tomorrow what you can do today.

Never say never.

Live and learn.

Promise little, but do much.

Հաճախ առաձներն ու ասացվածքներն ավելի լավ են մտապահվում, եթե մենք գտնում ենք նրանց համարժեքները մայրենի լեզվում: Օրինակ՝

Better late than never (անգլ.) – Լավ է ուշ, քան՝ երբեք (հայ.).

An apple a day keeps the doctor away (անգլ.) – Օրական մեկ խնձոր՝ հեռու կմնաս բժշկից (հայ.).

Cut your clothes according to your clothes (անգլ.) – Ոտքերդ վերմակիդ չափով մեկնիր (հայ.).

Եթե մեր նպատակն է սովորողների մոտ թարգմանչական հմտությունները զարգացնելը, ապա ավելի հարմար է ընտրել այնպիսի առաձներ կամ ասացվածքներ, որոնց համարժեքը դժվար է գտնել մայրենի լեզվում: Այս դեպքում սովորողը ինքը պետք է հանդես բերի ինքնուրույնություն. նախ բառարանի օգնությամբ թարգմանի առանձին բառերի իմաստը, իսկ հետո փորձի մայրենի լեզվով (տվյալ դեպքում՝ հայերենով) տալ նրանց տրամաբանական իմաստը: Փաստորեն, մի կողմից մենք զարգացնում ենք թարգմանչական հմտությունները, իսկ մյուս կողմից էլ՝ տրամաբանությունը: Նման մոտեցումը խիստ արդյունավետ է, որովհետև սովորողների մոտ առաջանում է հետաքրքրություն և շահագրգռվածություն օտար լեզուն սովորելու նկատմամբ: Բացի դրանից՝ կտրվում է դասի միապաղաղությունը և մտցվում թարմություն:

Վերը նշված օրինակները վկայում են առաձների և ասացվածքների կիրառման լայն շրջանակների ու հնարավորությունների մասին անգլերեն լեզուն որպես օտար լեզու ուսումնա-

սիրելիս: Նրանց կիրառումը ոչ միայն նպաստում է բանավոր խոսքի և լեզվական մտածողության զարգացմանը, հարստացնում բառապաշարը, ամրապնդում հիշողությունը, այլև օգնում քերականական ժամանակաձևերի ու կառուցվածքների ամրապնդմանը: Մյուս կողմից էլ սովորողների մոտ զարգանում են ինքնուրույն մտածելու ունակությունները, թարգմանչական հմտությունները, խոսքը դարձնում ավելի տեղին, գեղեցիկ ու հետաքրքիր: Առաձների և ասացվածքների կիրառումը նաև սովորողներին հաղորդակից է դարձնում ոչ միայն սեփական, այլև այլ ժողովուրդների մշակույթներին, ժողովրդական բանահյուսությանը, պատմական անցյալին, կենցաղին, ապրելակերպին և այլն:

Ինչ խոսք, առաձների ու ասացվածքների դերի մասին կարելի է խոսել անվերջ: Ինչպես մենք արդեն տեսանք, նրանց կիրառման հնարավորությունները անզլերեն լեզու դասավանդելիս բավական մեծ են: Ցավոք, ներկա դարաշրջանում գիտության և տեխնիկայի աննախադեպ զարգացման պայմաններում քչերն են այսօր անդրադառնում նրանց կիրառման լայն հնարավորություններին օտար լեզու (հատկապես՝ անգլերեն լեզու) դասավանդելիս: Ցանկալի կլիներ, որ անգլերեն լեզվի դասաժամերին ավելի հաճախ օգտագործվեին առաձերն ու ասացվածքները, որոնք ոչ միայն օգնում են մտապահելու նոր բառերը և ամրապնդելու քերականական ժամանակաձևերն ու կառույցները, այլև նրանք ունեն նաև դաստիարակչական նշանակություն՝ նպաստելով սովորողի աշխարհընկալման զարգացմանը:

Գրականություն

1. Англо-русский фразеологический словарь.-А.В. Кунин, Москва, 1967
2. Использование пословиц и поговорок на уроках иностранного языка.-համացանց
3. Longman Dictionary of English Idioms.-Longman Group UK Limited, 1987.
4. «Роль пословиц и поговорок при обучении грамматике английского языка».-Бостаева В. Л. /համացանց/.
5. Словарь употребительных английских пословиц.-Москва, «Русский язык», 1985.
6. http://www.rusnauka.com/7_NITSB_2013/Philologia/1_130648.doc.htm

РОЛЬ ПОСЛОВИЦ И ПОГОВОРОК В ПРЕПОДАВАНИИ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА КАК ИНОСТРАННОГО

АСМИК АБРАМЯН

Преподаватель английского языка
НАН РА, Международный научно-образовательный центр

Цель этой статьи – обсудить роль пословиц и поговорок в преподавании английского языка как иностранного. Их использование не только обогащает нашу речь, но также помогает укрепить

употребление грамматических времен глагола и грамматические конструкции английского языка, способствуя расширению словарного запаса и мировоззрения.

THE ROLE OF PROVERBS AND SAYINGS IN TEACHING ENGLISH AS A FOREIGN LANGUAGE

HASMİK ABRAHAMYAN

The International Scientific Educational Center
of the National Academy of Sciences of the RA

The article deals with English proverbs and sayings in teaching English as a foreign language. Their application not only enriches our speech, but also helps to strengthen the application of

English verb tenses and grammatical constructions, contributing to the enlargement of the English vocabulary and world outlook.

ՆԱԻՐԱ ՀԱԿՈՒՅԱՆ

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հոգեբանական գիտությունների թեկնածու

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋՎԱՅՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ

ԻՆՏԵԳՐԱՏԻՎ ՄՈՏԵՑՈՒՄ

Սոցիալական միջավայրը այն ամենն է, ինչը շրջապատում է անձին իր սոցիալական կյանքի ընթացքում: Սոցիալական միջավայրը հասարակական հարաբերությունների զարգացման որոշակի փուլի արտահայտություն է. այն կարող է բնութագրվել որպես անձի՝ որոշակի տնտեսաքաղաքական, հասարական-դասային, մասնագիտական կամ որևէ այլ պատկանելիությամբ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. սոցիալական միջավայր, անձի իմաստա-արժեքային կողմնորոշում, միջավայրի ընկալում, սոցիալ-հոգեբանական հայեցակետ:

Անձի իմաստա-արժեքային կողմնորոշումը, ձգտումը կառուցելու աշխարհի ամբողջական, հնարավորինս՝ համաչափ, պատկերը իրագործվում է իդեալական իրականության տարածա-ժամանակային մոդելավորման միջոցով: Այդ մոդելի համապատասխանությունը իրականությանը արտահայտվում է սոցիալական միջավայրում անձի հոգևոր կայունությամբ և վստահությամբ իր գործողությունների նկատմամբ, կարգավորում է գործունեությունը և լցնում այն բովանդակությամբ: «Սոցիալական միջավայր» եզրույթը, արտահայտելով հասարակության մեջ անձի գոյության գաղափարը, սերտորեն կապված է անձի՝ որոշակի տարածության (քաղաք, գյուղ) կամ սոցիալական կարգավիճակի (սոցիալական շերտավորում) սահմաններում գործունեության հետ: Այս-

պիսով՝ տարածությունը «մասնակցում է» սոցիալական միջավայրի, ընդհանուր առմամբ, կենսական աշխարհի կառուցմանը արժեքային և սոցիալ-մշակութային նորմերի միջոցով՝ իր մեջ ներառելով հասարակությունում անձի գոյության ու գործունեության բոլոր կողմերը:

Ժամանակակից լեզուն չափազանց հարուստ է զանազան «տարածությունների» տարբեր անվանումներով: Ամենուրեք խոսվում է գլոբալ, տեղեկատվական, վիրտուալ, տնտեսական, քաղաքական տարածությունների մասին, մշակույթի և սոցիումի, շփման և անձնական կյանքի տարածությունների մասին: Այս պատկերը, մի կողմից, նպաստում է հետազոտությունների բազմակարծության զարգացմանը, մյուս կողմից, վկայում է նրա մասին, որ անձի համար «տարածության»

հասկացությունը ձեռք է բերում հատուկ նշանակություն, այն դառնում է անբաժանելի՝ ժամանակակից կոնֆլիքտային, հակասական և անընդհատ փոփոխվող աշխարհում:

Միջավայրի նկատմամբ սոցիալ-հոգեբանական հայեցակետի ձևավորմանը նպաստել են մի շարք հարակից գիտությունների նվաճումները, որոնց տարածական հատկանիշների դիտարկումները հիմք են դարձել միջավայրի սոցիալ-հոգեբանական մեկնությանը: Տվյալ խնդրին առնչվող գիտական գրականությունը կարելի է ներկայացնել մի քանի խմբերով՝ բնագիտական, փիլիսոփայական, հոգեբանական, սոցիոլոգիական և արվեստագիտական գրականությամբ:

Փիզիկական տարածության և նրա կառուցվածքի հարցերին են նվիրված Ի.Ռ.Պրիգոժինի,¹ Գ.Ռեյնհենբախի,² Լ.Դ.Լանդաուի,³ Ս.Հոփինգի,⁴ Ռ.Պենրոուզի,⁵ Ա.Մ.Բեկարևի⁶ և շատ ուրիշ հետազոտողների աշխատանքները:

Դրանցում ամփոփվում են ճշգրիտ գիտությունների՝ աստղագիտության, ֆիզիկայի և մաթեմատիկայի տվյալները:

Խնդրի փիլիսոփայական հարցադրումները բացահայտվում են Կ.Կ. Աբասովի,⁷ Ռ.Ա. Արոնովի,⁸ Ա. Գրունբաումի⁹ աշխատանքներում, որոնք ժամանակակից բնագիտության տվյալները դիտում են աշխարհի միասնության տեսանկյունից: Աշխատությունների այս շարքը ձևավորում է տարածության ժամանակակից տեսակավորումը, ուր իրական ֆիզիկական տարածությունը նկարագրվում է որպես միջավայրի գոյություն ունեցող հիմք, իմացության օբյեկտ, պերցեպտուալ՝ որպես շրջակա միջավայրի անձնական զգայական ընկալման արդյունք, իսկ կոնցեպտուալ՝ որպես գիտական քննարկման առարկա և տեսականորեն կառուցվող:

Փիլիսոփայական պատմության մեջ տարածության ուսումնասիրմանը անդրադարձել են բազմաթիվ մտա-

1. Пригожин И., Философия нестабильности // Вопросы философии. 1991, № 6, с. 46-52; Пригожин И. Время – всего лишь иллюзия? // Философия, наука, цивилизация, М., 1999, с. 214-221; Николис Г., Пригожин И. Познание сложного. Введение, - М., 1990
2. Рейхенбах Г., Философия пространства и времени, М., 1985
3. Ландау Л., Лифшиц Е., Теоретическая физика. Т. 3. Квантовая механика. Нерелятивистская теория, М., 1989, с. 45, 61, 109.
4. Хокинг С., Эллис Дж., Крупномасштабная структура пространства-времени, М., 1977
5. Хокинг С., Пенроуз Р., Природа пространства и времени, - СПб.2012, 171 с.; Хасанов И.А. Время: природа, равномерность, измерение, М., 2001
6. Бекарев А.М., Социальное пространство и время: анализ деконструкции//Вестник Нижегородского университета им. Н. И. Лобачевского. № 6, 2007, с. 282-288.
7. Абасов К.К., Законы сохранения и свойства симметрии пространства и времени // Философские аспекты проблемы времени, -Л., 1980, с. 74; Фок В.Ф.Теория пространства, времени и тяготения, М., 1961, с. 258
8. Аронов Р.А., Угаров В.А., Пространство, время и законы сохранения // Природа, 1978, с.10, 99-104; Урманцев Ю.А. Специфика пространственных и временных отношений в живой природе // Пространство, время, движение, М., 1971, с. 215-241
9. Грюнбаум А., Философские проблемы пространства и времени, М., 1969; Румер Ю.Б. Принципы сохранения и свойства пространства и времени // Пространство, время, движение. М., 1971, с. 107-125.

ծողներ՝ Ի.Կանտը,¹ Օ.Շպենգլերը,² Ա.Շոպենհաուերը,³ իսկ ներկայումս՝ Լ. Վիտգենշտեյնը⁴ և Է.Տոֆֆլերը:⁵ Եվ սա դեռ ամբողջական ցանկը չէ: Ռուս փիլիսոփաներից միջավայրի՝ որպես տարածական մոդելի, խնդիրն են բարձրացրել Ն.Ա.Բերդյաևը,⁶ Պ.Ա.Ֆլորենսկին,⁷ Վ.Ի.Վերնադսկին,⁸ իսկ ներկայումս՝ Մ.Կ.Մամարդաշվիլին,⁹ Ա.Մ.Մոստեպանենկոն¹⁰ և սիներգետիկայի ժամանակակից շատ հետևորդներ, որոնք հանդես են եկել կենսական տարածության ամբողջականության գաղափարներով:

Միջավայրի ընկալման հոգեբանա-մարդաբանական հարցերին են

առնչվել Մ.Մերլո-Պոնտին,¹¹ Ի.Ռենչլերը, Բ.Հերցբերգերը, Դ.Էփսթայնը,¹² իսկ ռուսական իրականության մեջ՝ Ա.Շարովը,¹³ Բ.Գ.Անանյևը,¹⁴ Դ.Գ.Էլքինը,¹⁵ Դ.Բ.Էլքոնին:¹⁶ Ա.Շատոխինը,¹⁷ և Բ.Ռասսելը¹⁸ անդրադարձել են սոցիալական տարածության ընտելացման՝ որպես միջավայրի կառուցման երևույթի, հոգեբանական հարցերին: Նրանք տարածությունը ընկալում են որպես կենտրոնական նյարդային համակարգի գործունեության հոգե-ֆիզիոլոգիական հիմնարար ընկալումներից և հոգեբանական մարզինալության գլխավոր արտահայտչամիջոցներից մեկը: Այս առումով հետաքրքրություն են ներկայացնում Ա.Գ. Դանիլինի,¹⁹ և Օ.Հաբս-

1. Кант И., Всеобщая естественная история и теория неба // И. Кант. Сочинения в шести томах. Т.1. М., 1963, с. 115-262.
2. Шпенглер О. Закат Европы. М, 1993.
3. Андреева И. С., Гулыга А. В., Шопенгауэр. М., 2003.
4. Витгенштейн Л., Культура и ценность. О достоверности, М., 2010.
5. Тоффлер Э., Метаморфозы власти, 1990, М., 200.
6. Бердяев Н.А., Человеческая личность и сверхличные ценности//Современные записки, №43,44,Париж, 1937.
7. Флоренский П.А., Анализпродтрансвенности (времени) вхудожественно-изобразительныхпроизведениях //Статьи и исследования по истории и философии искусства и археологии,М., 2000, с. 79-421.
8. Вернадский В.И., Размышления натуралиста,- Кн. 1: Пространство и время в неживой и живой природе. М., 1975.
9. МамардашвилиМ., Процессы анализа и синтеза,- Вопросы философии, №2, 1958, с. 50—63.
10. Мостепаненко А.М., Проблема универсальности основных свойств пространства и времени. - Л.,1969; Мостепаненко А.М., Мостепаненко М.В. Четырехмерность пространства и времени, М., 1966.
11. Мерло-Понти М. Феноменология восприятия. – СПб, 1999.
12. Ренчлер И., Херцбергер Б., Эпстайн Д., Красота и мозг. Биологические аспекты эстетики, М., 1995.
13. Шаров А.В., Маргинальность как аспект взаимодействия культур,- Вызовы современности и философия, Бишкек, 2004, с. 242-244.
14. Ананьев Б.Г., Ломов Б.Ф., Проблемы восприятия пространства и времени, Л., 1961.
15. Элькин Д.Г., Восприятие времени М. 1962.
16. Эльконин Д.Б., Психология игры М. 1976.
17. Шатохин А.Н. Пространство, время и законы сохранения, М. 1968.
18. Рассел Б., История западной философии, Новосибирск, 1999.
19. Данилин А.Г., Человек зависимый, М., 2009.

լի¹ աշխատությունները, որոնք վերաբերում են տարածության ընկալմանը, նրա կառուցմանը մարզինալ, այսինքն՝ գիտակցության փոփոխված վիճակներում՝ լինի դա թմրանյութերի ազդեցության արդյունք, թե շոկային որևէ իրավիճակ կամ դեպրեսիա:

Տարածական հատկանիշների միջոցով միջավայրի նկատմամբ սոցիոլոգիական հետաքրքրությունը արտահայտել է Է.Սոյան, որը գրել է սոցիալական իրականության տարածական լինելու մասին: Ըստ նրա կարծիքի, տարածությունից դուրս գոյություն չունեն սոցիալական որևէ պրոցեսներ և իրականություն: Նույնիսկ բացարձակ վերացականության և գաղափարախոսության մակարդակում առկա է թաքնված տարածական կառուցվածքը:²

Սոցիալական միջավայրի կառուցման տարածական օրինաչափությունների հետազոտման արդիականությունը առավելապես պայմանավորված է ժամանակակից հասարակության մեջ տեղի ունեցող դինամիկ պրոցեսներով, որոնք ձևափոխում և, նույնիսկ,

խախտում են սոցիալական կայունության սովորական համակարգերը: Կենտրոնի ու ծայրամասի, ընդհանուրի և մասնավորի հարաբերակցությունը հաճախ դառնում է ակադեմիական գիտության ուսումնասիրության առարկա՝ միաժամանակ հանդես գալով առօրյա խնդիրների լուծման ուղեցույց: Հոգեբանների ուշադրությանն են արժանանում սոցիալական տարածության օրինաչափությունները, նրա յուրացման սոցիոմշակութային մեխանիզմները, սոցիալ-տարածական կարգ ու կանոնի ինստիտուցիոնալ ձևերը, սոցիալ-տարածական փոխգործողությունների իմաստավորումը և առօրյա սոցիալական կառույցում տարածական գիտելիքի բաշխումը:

Միջավայրի կառուցման սոցիալ-տարածական մեխանիզմներին և օրինաչափություններին, սոցիալական քրոնոտոպի կառույցներին և գործառության ինարավորություններին են անդրադարձել մի շարք հեղինակներ՝ Ս.Մորոզը,³ Վ.Օնոպրիենկոն,⁴ Գ.Զիմմելը,⁵ Է.Դյուրկեյմը,⁶ Ի.Կանտը, Ա.Լեֆևրը,⁷ Ռ.Փարկը,⁸ Ս.Պարսոնսը,⁸ Պ.Սորո-

1. Хаксли О., Двери восприятия. Рай и ад, М., 2004.

2. Soja E. Third space: Journeys to Los Angeles and Other Real and Imagined Places.- Oxford: Blackwell, 1996.P.46; Soja E. and Hooper B. The spaces that difference makes. Some notes on the geographical margins of the new cultural politics. In: Keith, Michael and Pile, Steve (eds) Place and the Politics of Identity.- London: Routledge, 1993, pp. 183-205.

3. Мороз С.А., Оноприенко В.И., Пространственно-временные аспекты стратиграфии, Киев, 1988.

4. Стен Громов И. А., Мацкевич А. Ю., Семёнов В. А. Формальная социология Г. Зиммеля //Западная теоретическая социология,- М.,1996.

5. Дюркгейм Ю., О некоторых первобытных формах классификации. К исследованию коллективных представлений //Труды по социальной антропологии, М., 1996

6. Лефевр А., Конфликтующие структуры. М., 1967.

7. Парк Р., Избранные очерки: Сб. переводов. М., 2011.

8. Парсонс Т., Понятие общества: компоненты и их взаимоотношения //Американская социологическая мысль,- М., 1996, с. 494-526.

կինը,¹ Մ.Հայդեգերը:² Տարածության, կառուցվածքի և դիֆերենցիացիայի միջև հարաբերակցությունները բացահայտվում են Պ.Բուրդյեի,³ Ժ.Դելեզայի,⁴ և Ժ.Դերրիդայի⁵ կողմից: Վ.Իլյինը⁶, տալով միջավայրում սոցիալական անհավասարության իր մեկնաբանությունը, համարում է տարածությունը հիմնական կատեգորիա: Տարածական ձևերի նկարագրման ֆենոմենոլոգիական ավանդույթը սկիզբ է առնում Մ.Հայդեգերի⁷ աշխատություններից և շարունակվում է Գ.Բաշլյարի,⁸ Յու.Ռումերի,⁹ Տ.Դոբրոխովայի,¹⁰ Ա.Յակովլևայի¹¹ և ուրիշների կողմից:

Միջավայրում սոցիալական տարածության կառուցման, կենտրոնի և ծայրամասի, արտադրության և վերարտադրության տեսությունները կապված են Ա.Լեֆևրի¹² և Լ.Կորբյուզեի¹³ անունների հետ:

Մարմնի և սոցիալական տարածության կապը իրենց աշխատանքներում վեր են հանում Կ.Ուիլբերը¹⁴ և Ա.Ֆիլիպովը:¹⁵ Ա.Բերգսոնի,¹⁶ և Ֆ.Նիցշեի¹⁷ կողմից մարու մարմինը քննվում է, առաջին հերթին, որպես զգայարանների կենտրոն, անմիջական զգացողությունների աղբյուր: Մարմինը որպես էթզիստենցիալ ֆենոմեն վեր-

1. Сорокин П.А., Мертон Р.К., Социальное время: опыт методологического и функционального анализа.– «American Journal of Sociology», Chicago, 1937. v. 42, № 5, p. 615-629.
2. Хайдеггер М. Основные проблемы феноменологии. - СПб, 2001.
3. Бурдьё П. Социология социального пространства.- М., 2007
4. Stn՝ Маркова Л. А., Философия из хаоса: Ж. Делез и постмодернизм в философии, науке, религии, М., 2004.
5. Деррида, Ж., Глобализация. Мир. Космополитизм // «Космополис», 2004, № 2 (8), с. 125-140.
6. Ильин В.В., Ахиезер А.С., Российская цивилизация: содержание, границы, возможности. М., 2000.
7. Хайдеггер М., Бытие и время. М., 1997.
8. Stn՝ Визгин В. П., Эпистемология Гастона Башляра. М., 1996.
9. Румер Ю.Б. Принципы сохранения и свойства пространства и времени // Пространство, время, движение.- М., 1971, с. 107-125.
10. Доброхотова Т.А., Брагина Н.Н. Принцип симметрии-асимметрии в изучении сознания человека // Вопросы философии. 1986, 7, с. 13-27.
11. Яковлева А.М. Мифологические корни фольклорного мышления: пространство, время, существование // Вестн. МГУ. Сер. 7. Философия. 1981, № 6, с. 56-65.
12. Лефевр А., Введение в современность. Прелюдия первая. Об иронии, майевтике и истории // «Неприкосновенный запас». 2012, №2(82).
13. Stn՝ Миронов А. В., Философия архитектуры: Творчество Ле Корбюзье. М., 2012.
14. Уилбер К., Восточные и западные пути личностного роста. М., 2003.
15. Филиппов А.Ф. Социология пространства. СПб.: Владимир Даль. 2008; Филиппов А. Ф. Элементарная социология пространства // Социологический журнал. 1995, № 1, с. 45-69.
16. Stn՝ Блауберг И. И., Анри Бергсон. М., 2003.
17. Ницше Ф., Так говорил Заратустра, М., 2004.

լուծության է ենթարկվել Է.Գուսեր-լի,¹ Ժ.Դելեգայի,² Մ.Մերլո-Պոնտիի,³ Ժ.Պ.Սարտրի⁴ և Մ.Հայդեգերի⁵ կողմից: Ա.Բերգսոնը,⁶ Ն.Բերնշտեյնը⁷ և Մ.Մամարդաշվիլին⁸ հատուկ տեղ են տվել մարմնի շարժումին, ժեստին, ինչը մասնակցում է սոցիալական տարածության ստեղծմանը: Մարմնի սոցիալականացման հարցերին բավական մեծ ուշադրություն են դարձնում հետևյալ հեղինակները՝ Մ.Բախտինը,⁹ Պ.Բերգերը, Տ.Լուկմանը,¹⁰ Մ.Մոսսը,¹¹ Ա.Տխոստովը,¹² Ա.Շյուտցը,¹³ Մ.Ֆուկոն¹⁴ և շատ ուրիշներ, սակայն հարկ է նշել, որ աշխատությունների գերակշռող մասը հանգում է այդ ֆենոմենի ներառատարություններին՝ ոչ վերբալ կամ տարածական վարքին: Բաց է թողնվում այդ երևույթի սոցիոմշակութային էությունը, միջավայրում անձի դրսևորման արժեքային բովան-

դակությունը, ուստի, մարմինը՝ որպես միջավայրում սոցիալական տարածության դիֆերենցիացիայի և մարգինալ վարքագծի արտահայտչամիջոց, դեռ մնում է սոցիալական տեսության ծայրամասում: Այնինչ, սոցիալական տարածությունը, լինելով միջանձնային հարաբերությունների դաշտ, մեծապես կապված է հոգևոր-արժեքային դիրքորոշումների հետ:

Միջավայրի սոցիոլոգիական ուսումնասիրության տեսանկյունից հետաքրքրություն են ներկայացնում Պ.Սորոկինի¹⁵ և Պ.Բուրդյեի¹⁶ գաղափարները սոցիալական տարածության մասին, Յու.Մ.Լոտմանի տեսությունը՝ առնչվող մշակույթների փոխգործողություններին,¹⁷ Ու.Բեքի դրույթը տարբեր մշակույթների «գործունեության, կյանքի և ընկալման համար սոցիալական տարածության» ստեղծման անհրա-

1. Гуссерль Э. Феноменология внутреннего сознания времени—Собрание сочинений, Т.1. М. 1994.
2. Маркова Л. А., указ соч.
3. Мерло-Понти М. Феноменология восприятия.— СПб, 1999.
4. Сартр Ж.-П. Бытие и ничто: Опыт феноменологической онтологии. М. 2000.
5. Хайдеггер М., ук. соч.
6. Бергсон А. Длительность и одновременность. М. 2006.
7. Бернштейн Н.А., Очерки о физиологии движений и физиологии активности. М., 1966.
8. Мамардашвили М. Процессы анализа и синтеза.- Вопросы философии, № 2. 1958, с. 50-63.
9. Бахтин М.М. Вопросы литературы и эстетики.— М. 1975.
10. Бергер П., Лукман Т., Социальное конструирование реальности. Трактат по социологии знания. М., 1995.
11. Мосс М. Общества. Обмен. Личность. // Труды по социальной антропологии. М., 1996.
12. Ա.Տխոստով, Խостов А. Психосемиотика телесности. М., 2005.
13. Шютц А. Некоторые структуры жизненного мира // Личность. Культура. Общество. 2007, Вып. 2 (36),с. 52–68.
14. Фуко М. Герменевтика субъекта, СПб.: Наука, 2007.
15. Сорокин П.А., Мертон Р.К., ук. соч.
16. Бурдые П. ук. соч.
17. Лотман Ю.М. К построению теории взаимодействия культур//Лотман Ю.М. Семиосфера. - СПб, 2001.

ժեշտության վերաբերյալ:¹

Սոցիոլոգիական հետազոտություններում տարածությունը քննվում է հիմնականում գեոքաղաքական մարզինալության ենթատեսքստում և ներկայանում է որպես ազգի կենսագործունեության և պետության կազմակերպման միջոց: Այդ ուղղության գերմանական դպրոցի հիմնադիրներն են եղել Կ.Հաուսհոֆերը և Ֆ.Ռաստելը:² Նրանց տեսակետները շարունակել են Ա.Լեֆևրը,³ Պ.Լ.Բերգերը, Տ.Լուքմանը,⁴ Գ.Զիմմելը⁵ և Գ.Ե.Զբորովսկին:⁶

Ընդհանրացնելով վերը ներկայացված նյութը նշենք, որ վերջին տասնամյակներում միջազգային գիտական հարթակներում ի հայտ են եկել բազմաթիվ սոցիոլոգիական ուսումնասիրություններ՝ նվիրված սոցիալական տարածությանը որպես սոցիալական միջավայրի կառուցման հատկանիշ, նրա կազմակերպման օրինաչափություններին և գործառույթներին, սակայն չի ձևավորվել ընդհանուր մի տեսություն, որն ունենար բացատրական մեծ ներուժ և կուտակված նյութի դասակարգման հնարավորություն:

Մշակութաբանության մեջ միջավայրը նույնպես գտնվել է բազմաթիվ

հեղինակների ուշադրության կենտրոնում, որոնք անդրադարձել են մշակութային մարզինալության բնութագրերին: Նշենք հատուկ Դ.Ս.Լիխաչովի սահմանների տեսությունը մշակույթում⁷, Կ.Տյուրիերի տեսակետը մշակույթների միջև սահմանային գոտիների վերաբերյալ⁸, ինչպես նաև՝ Դ.Պ.Կուրյայի տեսակետը մշակույթների միջև սահմանների մասին: Սահմանը, ըստ Դ.Պ.Կուրյայի, կարող է և՛ բաժանել, և՛ միավորել մշակույթները: «Կենդանի սահմանը» սուբյեկտների միջև գործառույթային սահման է իրենց կապող գործառույթներով: Սահմանը ստեղծում է շփում մարդկանց, մշակույթների և «մշակութային ֆենոմենների» միջև:⁹ Հետաքրքիր են նաև Վ.Ս.Բիբլերի գաղափարները նրա մասին, թե մշակույթի կենտրոնը գտնվում է սահմանի վրա՝ այնտեղ, ուր նա բախվում է այլ մշակույթների հետ:¹⁰

Հիմնվելով գիտական գրականության հսկայական նյութի վերլուծության արդյունքներին՝ կարելի է եզրակացնել, որ ժամանակակից գիտությունների հանրագումարում միջավայրը իմաստավորվում է տարբեր տեսանկյուններից. Ֆիզիկական քննում է միջավայրի

1. Бек У. Что такое глобализация? Ошибки глобализма – ответы на глобализацию. М., 2001. с.118.
2. Տես՝ Левит С. Культурология. XX век.Энциклопедия. М., 1998.
3. Лефевр А., указ. соч.
4. Бергер П., Лукман Т., указ. соч.
5. Տես՝ Громов И. А., Мацкевич А. Ю., Семёнов В. А., указ. соч.
6. Зборовский Г. Е., История социологии. М., 2007, 608 с.
7. Տես՝ Лихачев Д.С. Очерки по философии художественного творчества. СПб., 1999.
8. Տես՝ Цюрхер К. Мультикультурализм и этнополитический порядок в постсоветской России: некоторые методологические замечания / ЛТолис. 1999, № 6.
9. Кудря Д.П. Культура и граница//В перспективе культурологии: повседневность, язык, общество. – М.: Академический проект, 2005.
10. Библер В.С., Культура. Диалог культур (опыт определения). // Вопросы философии, 1989, № 6.

բնական, կառուցվածքային հատկությունները, սոցիոլոգիան՝ հասարակական կապերի փոխհարաբերությունները, մշակութաբանությունը քննում է մշակույթի տարածական ֆենոմենները և խորհրդանիշները, արվեստագիտությունը՝ գեղարվեստական աշխարհի յուրահատկությունները, հոգեբանությունը՝ միջավայրում անձի գործունեությունն ու տարածության անձնային և խմբային ընկալման յուրահատկությունը, փիլիսոփայությունը ամփոփում է տարածության կենսական բնութագրերի գիտակցումը:

Այսպիսով՝ տարածության կատեգորիան, բացի ռեալականության նշանակումից, որի հետ անձը փոխգործում է ամեն օր, գոյություն ունի անձնային գիտակցության մեջ, գիտական, գեղարվեստական և կրոնական կոնցեպտներում: Այն անվերապահորեն առնչվում է միջավայրի հասկացության հետ, որը յուրաքանչյուր գիտական կոնցեպտում ընկալվում է յուրովի և ստանում համապատասխան մեկնաբանություն: Տարբեր տարածական ձևերի հարաբերակցումը անձնային տարածությանը ցույց է տվել, որ հոգեբանական տարածությունը հանդես է գալիս անձին շրջապատող բնա-սոցիալ-մշակութային միջավայրում որպես կենսական կողմնորոշումների կենտրոն: Հոգեբանական տարածությունը այն իմաստային կորիզն է, որը կառուցում և միավորում է անձի ներքին աշխարհը սոցիո-մշակութային ոլորտի հետ, և արտահայտվում է ինչպես հոգու ներքին աշխարհի, այնպես էլ՝ մշակույթի ֆենոմենների և սոցիումի կյանքի մեջ:

Այժմ քննենք միջավայրի տարածա-

կան հատկանիշների կիրառումը մասնավորապես սոցիալ-հոգեբանական հետազոտության հայեցակետից:

Այդ պարագայում առանձնահատուկ կարևորվում է անձի հոգեբանական տարածության խորին պրոցեսների ուսումնասիրումը: Այն պարզություն է տալիս միջավայրի մասին բազմապիսի պատկերացումների մեջ, ինչը հնարավորություն է ընձեռնում քննադատորեն վերաբերվելու և գիտակցելու տարբեր գիտությունների նվաճումները՝ այս կամ այն կերպով առնչվող այդ խնդրին, նրա արտացոլմանը գիտակցության մեջ, տարածական հատկանիշների սոցիալական և մշակութային մեկնաբանությանը:

Միջավայրի սոցիալ-հոգեբանական հետազոտության տեսանկյունից կարևորվում է տարածության ուսումնասիրման միջդիսցիպլինար մոտեցումը: Կիրառելով կոմպլեքսային մեթոդաբանությունը՝ այն նպատակ ունի բացահայտելու բնության, աշխարհի և սոցիումի հետ անձի տարածական հարաբերությունների էական հիմքերը: Դա թույլ կտա խոսել ոչ միայն բնական տարածության ընկալման մասին, այլև մշակութային կողմնորոշման և սոցիումի կյանքի կառուցվածքային կազմակերպման մասին:

Սոցիալ-հոգեբանական տեսական մոտեցումներից նախ ներկայացնենք հոգեկենտրոնական գրականության հիմնական նվաճումները:

Տարածության կառուցման տարբեր ձևերը դիտվում են բազմաթիվ ռուս գիտնականների հոգեկենտրոնական և սեմիոտիկ աշխատություններում:

Նրանք են Յու.Մ.Լոտմանը,¹ Վ.Ն.Տոպորովը,² Տ.Վ.Տոպորովան,³ Ն.Դ.Արուտյունովան,⁴ Ի.Բ.Լևոնտինան:⁵ Մարգինալության տարածական հատկանիշներին են առնչվում նաև բազմաթիվ մշակութաբանական, պատմական և ազգագրական աշխատությունները, որոնք հետազոտում են էթնոսների զարգացման պատմական փուլերը և սկզբունքները: Այսպես՝ Վ.Լ.Կազանսկին,⁶ Ա.Ախիեզերը,⁷ Վ.Լ.Գլազիչևը,⁸ և Վ.Ա.Կոլոսովը⁹ միջավայրի տարածական բնութագրերը կապում են մարդաբանության, ազգային ինքնագիտակցության և մշակույթի յուրահատկության հետ:

Միջավայրի տարածական հատկանիշները ուսումնասիրվում են նաև «սեմանտիկական դաշտերի» միջոցով, որոնք ստեղծվում են բառի շուրջ և ամփոփում են նրա իմաստային բնութագիրը: Այսպիսով՝ գիտության մեջ ներմուծվեց նոր հասկացություն՝ «սեմանտիկական դաշտ», որը կանգնած է յուրաքանչյուր բառի հետևում:¹⁰

«Սեմանտիկական դաշտերը» սովորաբար լինում են խիստ կազմա-

կերպված և բառերից որոշները, որոնք մտնում են տվյալ սեմանտիկական խմբի մեջ, տիրապետում են ավելի մեծ «հասանելիությամբ», քան մյուսները:¹¹ Այդ ամենը ցույց է տալիս, որ հոգեբանորեն բառը չի սահմանափակվում անփոփոխ ու միանշանակ «առարկայական վերագրմամբ», որ «սեմանտիկական դաշտի» հասկացությունը, որը առաջանում է յուրաքանչյուր բառով, ներկայանում է բավականին իրական և որ այդ պատճառով էլ ինչպես անվանման ընթացքը, այնպես էլ բառի ընկալման ընթացքը իրապես հարկ է քննել որպես ընդհանուր «սեմանտիկական դաշտից» բառի անհրաժեշտ «ամենամոտիկ նշանակության» ընտրության բարդ ընթացք: Այդ հանգամանքը կարևոր է ոչ միայն լեզվաբանության մեջ միջավայրի ուսումնասիրության նկատառումից, այլև՝ որոշ խմբերի կամ անձանց սոցիալ-մշակութային կողմնորոշումների բացահայտման տեսանկյունից:

Այսպիսով՝ ի նկատի ունենալով հարդորակցման կարևորությունը սոցիալական միջավայրի հետազոտության

1. Лотман Ю.М. К построению теории взаимодействия культур // Лотман Ю.М. Семиосфера. –СПб, 2001.
2. Топоров В.Н. О мифопоэтическом пространстве, М., 1994. Топоров В.Н., Пространство и текст // Текст: семантика и структура.,М., 1983, с. 227–284.
3. Топорова Т.В., Язык и стиль древнегерманских заговоров, М., 1996.
4. Арутюнова Н.Д. Язык и мир человека //Языки русской культуры. М., 1998.
5. Зализняк А.А., Левонтина И.Б., Шмелев А.Д., Константы и переменные русской языковой картины мира. М., 2012.
6. Каганский В.Л. Путешествие в ландшафте и путешествие в культуре // Культура в современном мире: опыт, проблемы, решения. М., 2001, Вып. 2, с. 3-18.
7. Ахиезер А.С., Критические пороги социальных систем // Общественные науки и современность. М., 1992, № 1, с. 45–54; Ахиезер А.С. Культурные основы этнических конфликтов // Общественные науки и современность. М., 1994, № 4, с. 115–126.
8. Глазычев В. Л., Социально-экологическая интерпретация городской среды, М., 1984,
9. Колосов В.А., Политическая география: проблемы и методы, Л., 1988.
10. Лурия А.Р., Язык и сознание. М., 1979, с. 41.
11. Лурия А.Р., указ. соч., с.46-47.

գործում՝ անդրադառնանք հոգեբանական տարածության ուսումնասիրության այլ հայտնի տեսություններին:

Ի.Ս.Կոնը ժամանակակից գիտության մեջ առանձնացնում է ինդիվիդուալ զարգացման նկարագրության համար երեք գլխավոր հասկացություններ (ի նկատի ունենանով տարածական հատկանիշները) որպես ամբողջություն՝ «կյանքի ժամանակ», «կենսական փուլ» և «կյանքի ճանապարհ» գլխավոր փուլերը: Դրանք արտահայտում են անձի՝ սոցիալական միջավայրում ընդգրկվելու տարածա-ժամանակային և սոցիալական բնութագրերը, որոնց խախտման դեպքում ի հայտ է գալիս անձի մարգինալացման երևույթը:

«Կյանքի ժամանակը», նրա ձգվածությունը կամ տարածությունը (life-time or life-space) նշանակում է ծնունդի և մահվան միջև ընկած ժամանակահատվածը: Թե ինչով է լցված այս ժամանակային տարածությունը, որքանով է այն սոցիալականացված կամ մարգինալացված, տվյալ տերմինը չի հստակեցնում: «Կենսական փուլ» եզրույթը ավելի է որոշակիացված և բովանդակալից: Այն ենթադրում է, որ կյանքի ընթացքը ենթակա է հայտնի օրինաչափության, իսկ նրա փուլերը իրենցից ներկայացնում են մշտական շրջապտույտ, որոնց խախտման դեպքում էլ բախվում ենք մարգինալության այս կամ այն դրսևորման հետ, սակայն «կենսական փուլի» եզրույթը ենթադրում է նաև որոշակի պարփակություն, ընթացքի ավարտելիություն, որի կենտրոնը հենց ինքն է: Այդուհան-

դերձ, անհատի ինքնության ձևավորման կարևորագույն գործընթացները անհնար է հասկանալ առանց այլ մարդկանց կամ սոցիալական ինստիտուտների հետ նրա փոխգործողության շեշտադրման:

Առավել տարողունակ և գործածական եզրույթը «կյանքի ճանապարհն է»: Այդ հասկացությունը տարբերվում է «կենսական փուլի (ցիկլի)» հասկացությունից, առաջին հերթին, իր բազմակողմանիությամբ, նրանով, որ այն ենթադրում է տարբեր միտումների և զարգացման ճանապարհների բազմություն միևնույն կենսագրության սահմաններում: Նրա պարբերացման հիմքում ոչ թե գծային, այլ մեկընդմիշտ սահմանված փուլերն են, որոշակի կենսական իրադարձությունները: Ցանկացած կենսական իրադարձության ժամանակը, հերթականությունը և իրագործման միջոցը ոչ պակաս կարեվոր են, քան բուն փաստը, որ տվյալ իրադարձությունը տեղի է ունեցել: Այդ դիտակետը թույլ է տալիս խոսել միջավայրի ձևավորման սոցիոլոգիական, հոգեբանական և պատմական նախադրյալների մասին:¹

Հոգեբանական գրականության մեջ միջավայրի տարածական հատկանիշների քննությունը անպայման առնչվում է հաղորդակցման խնդիրների հետ՝ սոցիումում անձի ընդգրկվելու կամ սոցիումից առանձնանալու, մեկուսանալու հարցադրումների ներքո:

Բ.Ֆ.Պորշնևը հետևյալ կերպ է ներկայացնում հաղորդակցման տարածական բովանդակությունը: Նա մարդ-

1. Кон И.С. Междисциплинарные исследования. Социология. Психология. Сексология. Антропология. Ростов н/Д, 2006, с. 259-260. Кон И. С. В поисках себя. Личность и её самосознание. М., 1984.

կանց փոխազդեցության հիմնահարցը քննարկում է որպես ամբողջ սոցիալական հոգեբանության կենտրոնական խնդիր: «Ուղղակի ազդեցությունը հանդես է գալիս որպես պարզագույն սոցիալ-հոգեբանական երևույթ: Կարելի է ասել և հակառակը՝ սոցիալական հոգեբանությունը զբաղվում է մարդկանց փոխազդեցության տարբեր արտահայտումների ուսումնասիրությամբ: Այդ փոխազդեցության ընթացքում առանձնանում են երկու հիմնական բաղադրիչներ՝ սուզգեստիա և հակասուզգեստիա: Սուզգեստիան նույնական է վստահության զգացումին բովանդակության նկատմամբ, առաջին հերթին՝ գործողության նկատմամբ», բայց սուզգեստիան բացարձակ չէ, տեղի է ունենում նաև հակազդող երևույթ, անձը սահմանափակում է արտաքին երևույթները, նրանցից շատերը մերժում է կամ ուշադրության չի արժանացնում: Սուզգեստիայի դեմ այդպիսի պաշտպանական ռեակցիաները Բ.Ֆ.Պորշնևը կոչում է հակասուզգեստիա, որն էլ միջավայրի տարածական կարևոր բնութագիրներից է: Իր կարծիքով՝ մարդկանց փոխազդեցությունը կամ սուզգեստիան կարելի է ուսումնասիրել միայն հակասուզգեստիայի միջոցով: Հակասուզգեստիայի տարրական ձև է նա համարում տարածական հեռացումը սուզգեստորից: Բ.Ֆ.Պորշնևը հստակ տարանջատում է անձի վրա արտաքին ազդեցությունը և նրա ներքին դիմադրությունը, ներկայացնում է այդ երկու «ուժերի» հարաբերակցությունը, որին որոշիչ դեր է հատկացնում միջավայրում անձի ինքնահաստատման գործում:¹

Սոցիալական՝ որպես արհեստական միջավայրի, հոգեբանական խնդիրների և նրանցում սոցիալ-հոգեբանական դրսևորումների ամերիկյան հետազոտողներից առանձնանում է Ալթմանը, որն առաջ է քաշել «պրիվատականության»՝ անձի առանձնանալու, անհատական տարածություն կամ մարզինալ միջավայր ստեղծելու մասին թեզը: Նա պրիվատականությունը դիտում է որպես միջանձնային սահմանների վերահսկման ընթացք, որը կարգավորում է անձի հաղորդակցումն այլոց հետ: Այն ունի հետևյալ հիմնական բաղադրիչները.

- գոյություն ունեն պրիվատականության երկու կողմեր՝ ցանկալի և իրական: Եթե ցանկալի պրիվատականությունը հավասար է իրականին, ապա խոսքը գնում է օպտիմալ իրավիճակի մասին. հակառակ դեպքում տեղի է ունենում անհամապատասխանություն, ինչն էլ հանգեցնում է անձի մարզինալ կարգավիճակին,
- պրիվատականությունը դիալեկտիկ գործընթաց է, որն իր մեջ է ներառում ինչպես մարզինալությանը հանգեցնող շեղումները, այնպես էլ հաղորդակցման սոցիալապես ընդունված նորմերը,
- պրիվատականության ձգտումը կարող է նկատվել տարբեր սոցիալական միավորների կողմից՝ առանձին անհատի, ընտանիքի, խմբի և այլն,
- պրիվատականությանը հասնելու համար կիրառվում է միջոցների լայն ընտրանի՝ վերբալ և պարա-

1. Хейдметс М., Пространственный фактор в межличностных отношениях.– Человек, среда, пространство, Тарту. 1979, /162 стр./ с. 18.

վերբալ վարքը, անհատական տարածության ստեղծումը, ֆիքսված տարածությունը, մշակութային և ենթամշակութային տարբեր մեխանիզմները (ավանդույթները, նորմերը և այլն):

Անշուշտ, Ալթմանի տեսությունը ունի մեծ դեր միջավայրում միջանձնային հարաբերությունների ուսումնասիրման գործում, սակայն, կան նաև որոշ վերապահումներ: Առաջին հերթին, պրիվատականության իր տեսակետը չափազանցված է և «սահմանի կարգավորման» հասկացության տակ ընկալվում են գործունեության տարբեր եղանակներ: Երկրորդ, Ալթմանը պրիվատականությունը դիտում է սուբյեկտիվորեն՝ այն մտնում է անհատականորեն բաց / փակ վարքի մակարդակի վրա և ուղղակիորեն չի անդրադառնում անձ-խումբ և անձ-հասարակություն հարաբերություններին:¹

Միջավայրի տարածական բնութագրման հետաքրքիր տեսակետ է արտահայտել Մ.Հեյդմետսը: Հեյդմետսը կարևորել է տարածության քանակական և որակական բնութագրերը՝ ուշադրության արժանացնելով միջանձնային փոխհարաբերությունների կամ «կոնտակտների» քանակը, կայունությունը (առանձնանալու անհնարինությունը) և այլ հատկանիշներ: Քանակական տվյալների միջոցով ի նկատի է առնվում փոխհարաբերությունների ոչ այնքան բովանդակային կողմը, որքան իրենց ծավալը և ինտենսիվությունը: Այսպիսով՝ միջանձնային հարաբերությունների քանակական

բնութագրերի տեսանկյունից մեծ ազդեցություն ունեն տարածական պայմանները:²

Տարածական կոնտակտը իր բնույթով տեղեկատվական է, քանի որ մարդկանց միջև կապը հաստատվում է միմյանցից ստացված տեղեկատվության շնորհիվ: Որքան ավելի ինտենսիվ է դառնում անձի կոնտակտը այլ մարդկանց հետ, այնքան ավելի շատ է իր գործունեությունը ենթարկվում միջավայրի պահանջներին: Սոցիալական միջավայրից կախվածության աստիճանը մենք համարում ենք անձի գործունեության վրա վերահսկողության կենտրոնացման գործառույթը: Վերահսկողությունը կարող է կատարվել թե՛ միջավայրից (արտաքին վերահսկողություն), թե՛ անհատի կողմից (ներքին վերահսկողություն): Այդ բաժանումը, իհարկե, բացարձակ չէ, իրականում կարելի է խոսել վերահսկողության այս կամ այն բաղադրիչի գերակշռման մասին: Կարելի է ասել, որ տարածական կոնտակտի առկայությունը մեծացնում է արտաքին վերահսկողությունը անձի գործունեության վրա:

Նույն մոտեցումը կարելի է կիրառել նաև սոցիալական կոնտակտի նկատմամբ (որի բևեռներն են անհատական և կոլեկտիվ գործունեությունը): Մարդկանց ցանկացած համատեղ գործունեությունը ենթադրում է ներքին վերահսկողության վերածումը արտաքինի և անձի վարքի կախվածության մեծացումը միջավայրից:³

Հեյդմետսը կարծիք է հայտնում, որ

1. Хейдметс М. указ.соч., с. 19-20.
2. Хейдметс М. указ.соч., с. 6.
3. Хейдметс М. указ.соч., с. 10-11.

անձը իր գործունեության ընթացքում ձգտում է հասնել ներքին-արտաքին վերահսկողության որևէ համապատասխան հարաբերակցության: Եվ դրան հասնելու «միջոցներից» մեկն էլ ինչպես տարածական, այնպես էլ սոցիալական կոնտակտների ինտենսիվության կարգավորումն է: Ինչպես տարածական, այնպես էլ սոցիալական կոնտակտների կարգավորումը կապվում է անձի գործունեության վրա ներքին-արտաքին վերահսկողության որոշակի հարաբերակցության ապահովման հետ: Ենթադրելով, որ անձի համար առաջին հերթին կարևոր է ներքին-արտաքին վերահսկման ընդհանուր հարաբերակցությունը, Հեյդմետը առաջ է քաշում այն թեզը, որ կոնտակտի տարածական և սոցիալական ձևերի միջև գոյություն ունեն փոխհատուցողական կապեր: Այդ թեզի յուրահատկությունն այն է, որ շեշտվում է անձի հաղորդակցության երկակի բնույթը. նա հաղորդակցվում է ինչպես իրեն շրջապատող ներքին միջավայրի, այնպես էլ արտաքին սոցիալական միջավայրի (կամ արտաքին աշխարհի) հետ:

Այսպիսով՝ տարածական և սոցիալական կոնտակտների կարգավորումը գործում է որպես միջանձնային հարաբերությունների կարգավորման ընդհանուր համակարգ և սոցիալական միջավայրի կարևոր բնութագրերից է: Ընդ որում այդ կարգավորման առան-

ձին ձևերը կարող են փոխլրացնել և փոխհատուցել միմյանց:¹

Ինչպես տեսնում ենք, տարածական հատկանիշները ի հայտ են գալիս հաղորդակցման գործընթացի ժամանակ և կարող են պայմանավորել ու արտահայտել սոցիալական միջավայրի այս կամ այն բնութագրերը: Այդ պատճառով էլ, տարածության առկայությունը կարող ենք տեսնել անձի՝ միջավայրի հետ հաղորդակցվելու տարբեր ձևերում: Եվ, այս իմաստով, առաջնահերթ է դառնում տարածական հատկանիշների միջոցով վեր հանել հաղորդակցման առանձնահատկությունները: Այս դիտակետը հաշվի առնելով՝ հարկ ենք համարում համառոտ ներկայացնել անձի հոգեբանական տարածության բնութագրերը, որոնք առնչվում են սոցիալական միջավայրում կատարվող հաղորդակցման տարբեր ձևերի հետ:²

Հետևելով անձի հոգեբանական տարածության Ս.Կ. Նարտովա-Բոչավերի ձևակերպմանը՝ մենք այն նշանակում ենք որպես «կեցության սուբյեկտիվորեն կարևորվող ձև», որը բնորոշում է անձի ակտուալ գործունեությունը:³ Ըստ Վ.Ի. Սլոբոդչիկովի՝ հոգեբանական տարածությունը ներառում է ֆիզիկական, սոցիալական և հոգեբանական երևույթների մի ամբողջ համալիր, որոնց հետ անձը իրեն նույնականացնում է: Այն ներկայացված է վեց չափանիշների միջոցով, որոնց դեպրիվացիան վկայում է հոգե-

1. Хейдметс М. указ. соч., с. 16.

2. Величковский Б.М., Блинникова И.В., Лапин Е.А. Представление реального и воображаемого пространства; // Вопросы психологии, #3, М., 1986, с. 103-112. Каплунович И.Я., Психологические закономерности развития пространственного мышления; Вопросы психологии, Москва, 1999, #1, с. 60-68. Левин К. Теория поля в социальных науках, СПб, 2000, с.48-66.

3. Нартова-Бочавер С.К. Понятие «психологическое пространство личности»: обоснование и прикладное значение // Психологический журнал, том 24, #6. Москва, 2003. с.27-36.

բանական տարածության սահմանների խախտման մասին:¹

Քննենք այդ հեղինակների կողմից ներկայացված հոգեբանական տարածության չափանիշները.

1. Ֆիզիկական մարմնի սուվերենության չափանիշը որոշվում է անձի մարմնի նկատմամբ որևէ ոտնձգության բացակայության մեջ:
2. Տարածության սուվերենությունը արտահայտվում է անձի գտնվելու վայրում ֆիզիկական տարածության անվտանգության զգացողության մեջ, իսկ դեպրիվացիան կնշանակի տարածքային սահմանների բացակայություն:
3. Առարկաների աշխարհի սուվերենությունը ենթադրում է անձի սեփականության նկատմամբ հարգանքի և անձեռնմխելիության առկայությունը, իսկ դեպրիվացիայի դեպքում անձը այս կամ այն չափով զրկվում է անձնական իրեր ունենալու իրավունքից:
4. Սովորությունների սուվերենությունը ներկայանում է որպես անձի կյանքի ժամանակային կազմակերպման ձև, իսկ նրա դեպրիվացիան արտահայտվում է սովորական ժամանակային կարգ ու կանոնի պարտադրաբար խախտման մեջ:
5. Սոցիալական կապերի սուվերենությունը արտահայտում է ինքնուրույն ընտրված ընկերական շրջապատ ունենալու իրավունքը, իսկ այդ ոլորտի դեպրիվացիան՝ իր հերթին, անձի սոցիալական կյանքի նկատ-

մամբ արտաքին հսկողության մեջ:

6. Եվ վերջապես, արժեքների սուվերենությունը ընդհանուր առմամբ ենթադրում է աշխարհայացքի ազատություն, իսկ դեպրիվացիան կնշանակի նոր արժեքների ստիպողաբար ընդունումը և հետևումը: Խմբավորելով ներկայացված չափանիշները, առաջարկում ենք վերջին չորսը (սովորությունների, առարկաների, սոցիալական կապերի և աշխարհայացքի սուվերենության չափանիշները) ընդգրկել անձի սոցիալական ստատուսի սուվերենության հասկացության մեջ՝ ի նկատի ունենալով այդ չափանիշների սոցիալական կշիռն ու իմաստավորումը, իսկ առաջին երկու՝ ֆիզիկական մարմնի և ֆիզիկական տարածության, չափանիշները առաջարկում ենք պատկերացնել անձի ֆիզիկական կացության սուվերենության հասկացության միջոցով: Ուստի, կստանանք անձի հոգեբանական տարածության չափանիշների երկու խոշոր խումբ՝ անձի ֆիզիկական կացության և սոցիալական ստատուսի սուվերենության չափանիշները: Այստեղից էլ կարելի է ենթադրել սոցիալական միջավայրի կառուցման այնպիսի պատկեր, որը ձևավորում է անձի հոգեբանական տարածության սուվերենության այս կամ այն աստիճանը:

Այսպիսով՝ սոցիալական միջավայրը կարող է ներկայացվել անձի հոգեբանական տարածության կազմակերպման շնորհիվ և փոխկապակցված լինել անձի հոգեբանական տարածու-

1. Слободчиков В.И. Ступени развития субъектности. <http://murzim.ru/nauka/psihologija/vozrastnaja-psihologija/27080-stupeni-razvitiya-subektnosti-po-vi-slobodchikovu.html/>

թյան դեպրիվացիայի աստիճանով:¹

Սոցիալական միջավայրի կարևոր հատկություններից է **սոցիոմշակութային և հոգեբանական շարժունության կամ մոբիլության առկայությունը**: Սոցիալական մոբիլությունը մարդկանց շարժումն է մի խմբից դեպի մյուս խումբը, որը կարող է նաև կապված չլինել համակարգում կառուցվածքային փոփոխությունների հետ: Սոցիալական մոբիլությունը չպետք է նույնացնել մարզինալության հետ: Սոցիալական մոբիլությունը ավելի լայն է, քան մարզինալության երևույթը: Օրինակ՝ Ռոբերտ Փարկը նշում էր, որ ներգաղթը չպետք է նույնացնել ամեն մի շարժման հետ: Ներգաղթը նվազագույնը նշանակում է բնակության վայրի փոփոխություն և ընտանեկան կապերի խզում: Գնչուների տեղաշարժը չի փոխում նրանց մշակութային կյանքը, ուստի դա պետք է ավելի շուտ դիտել որպես աշխարհագրական փաստ, քան սոցիալական երևույթ: Ներգաղթը որպես սոցիալական երևույթ պետք է ուսումնասիրվի ոչ միայն կենցաղում, բարքերում, սովորույթներում տեղի ունեցած ընդհանուր հետևանքների տեսանկյունից, այլև սուբյեկտիվ կողմերի տեսանկյունից: Մարզինալացումը առաջանում է այն դեպքում, երբ հասարակության մեջ տեղի են ունենում փոփոխություններ, կամ երբ հասարակությունը անցում է կատարում մի սոցիալական համակարգից մյուսին, որի ընթացքում փոփոխվում են սոցիալական և միջանձնային հարաբերու-

թյունները: Այսինքն՝ մարզինալության երևույթը անմիջականորեն կապված է սոցիալական շարժունության հետ, և վերաբերում է հասարակության մեջ գործող ինչպես ուղղահայաց, այնպես էլ հորիզոնական սոցիալ-մշակութային կապերին ու հարաբերություններին: Սոցիալական խմբի մարզինալությունը առավելապես կապված է սոցիալական կառուցվածքի փոփոխությունների, վերակառուցողական գործընթացների հետ: Նման դեպքում սոցիալական մարզինալ օբյեկտում կամ մարզինալ անձում համատեղվում են հին և նոր կառուցվածքային կապերի տարրերը, որի արդյունքում մարզինալ անձը ձեռք է բերում հակասական, անորոշ սոցիալական կարգավիճակ: Ի դեպ, մարզինալացնող մոբիլությունը կարող է ունենալ վարընթաց և վերընթաց ուղղվածություն, որը հանգեցնում է սոցիալական միջավայրի հատկությունների փոփոխմանը: Վարընթաց ուղղվածության դեպքում մարդը շարժվում է դեպի իր նախկին կարգավիճակի համեմատ ավելի ցածր տեղեր (օրինակ, մարզիկը դառնում է հանցավոր խմբի անդամ, անհատը յուրացնում է ցածր կարգի արժեքներ ու դիրքորոշումներ, բարձր որակավորում ունեցող մասնագետը կատարում է ցածր որակավորում պահանջվող աշխատանք և այլն), իսկ վերընթացի դեպքում մարդը ձգտում է բարելավել իր սոցիալական կարգավիճակը, ավելի բարձր տեղեր զբաղեցնել սոցիալական աստիճանակարգում, ինչի արդյունքում էլ ձևավորվում է

1. Чудновский В.Э. К проблеме соотношения «внешнего» и «внутреннего» в психологии. – // Психологический журнал. 1993, т. 14, 5., с. 3-13. Левин К. Теория поля в социальных науках. СПб, 2000, с. 48-55. Խաչատրյան Ա.Գ. Դաշտային նյութեր. 1992-1995թթ.: տե՛ս՝ Курбаткина Ю.В., Процесс сепарации и индивидуации с точки зрения традиции объектных отношений и Я-психологии. – Психология и жизнь. Москва: МОСУ, 2001, Вып.2, с. 75-82.

նոր սոցիալական միջավայր (օրինակ՝ առևտրականը դառնում է գործարար, պատգամավոր կամ նախարար): Այսպես՝ հասարակության մեջ մարգինալացման գործընթացները, եթե տևական բնույթ են ստանում, ապա դա անխուսափելիորեն հանգեցնում է սոցիալական լարվածության աճին, առաջացնում խառնաշփոթություն ու քաոս, մասսայական անկարգություն: Այդ գործընթացի վերջնական արդյունքներից կարող են լինել մասսայական լյուսպենացումը, անոմիան, խռովությունը և հեղափոխությունը: Անհատական մակարդակում մարգինալության ծայրահեղ դրսևորումներից է ինքնասպանությունը:

Մարգինալությունը ենթադրում է ոչ միայն մի սոցիալական կառուցվածքից անցում մյուս սոցիալական կառուցվածքին կամ մի կարգավիճակից անցում մյուս կարգավիճակին, այսինքն՝ ոչ միայն մոբիլություն և անցումայնություն: Սոցիալական մոբիլությունը բավարար, բայց անհրաժեշտ պայման չէ մարգինալության առաջացման համար (չպետք է մոռանալ, որ կայուն վիճակներում նույնպես առաջանում են մարգինալ երևույթներ): Սոցիալական մոբիլության հետ մեկտեղ մարգինալությունը ենթադրում է սոցիալ-մշակութային և սոցիալ-հոգեբանական գործընթացների հակասականություն, անորոշություն և անավարտություն, որոնք զանազան ձևերով իրենց արտացոլում են գտնում մարգինալ անձանց գիտակցության մեջ՝ ստեղծելով համապատասխան սուբյեկտիվ իրողություններ: Այսպիսով՝ սոցիալական մոբիլությունը սոցիալական միջավայրի կարևոր հատկություններից մեկն է,

ուստի, սոցիալական կառուցվածքների փոփոխության հետևանքով առաջացած գործընթացների հակասականությունը, անորոշությունը և անավարտությունը բավարար հիմք կարող են լինել ոչ միայն մարգինալության առաջացման համար, այլև այդ երևույթը ըմբռնելու ու մեկնաբանելու համար:

являются психодинамическая, социокультурная и биологическая модели. По психодинамическому направлению В. Штекеля, суицид происходит вследствие направленного в отношении самих себя депрессии/депрессивного состояния и гнева, которые были направлены на других. Также, согласно Фрейдю, большинство людей, которые имеют склонность к самоубийству направляют инстинкт смерти («Танатос») на себя, а не на других [4]. С точки зрения социокультурной модели Э. Дюркгейма, вероятность риска самоубийства (а именно, альтруистический суицид, но не эгоистический и не основанный на аномии: во время аномии уровень суицидов повышается) определяется уровнем привязанности личности к социальным группам, а именно, к религиозным институтам, семье и обществу (соответственно, чем сильнее привязанность с соц.институтами, тем ниже возможность риска суицида)

[2]. Согласно биологической модели, самоубийство соотносится с низким уровнем активности нейротрансмиттера серотонина (такие люди в 10 раз чаще пытаются покончить с собой и чаще подвергаются суициду с летальным исходом), а следовательно, с низким уровнем докозагексаеновой кислоты (что приводит к депрессивному настроению) [12]. Вопрос о суицидальном поведении и аутоагрессии является предметом мультидисциплинарных исследований многих ученых. К. Вардьян, например, предлагает новый подход: аутоагрессия это такое проявление агрессии, совершенное против собственной личности с различной степенью глубины (поверхностное, хроническое, вплоть до смерти), в различных психических состояниях (относительное спокойствие, пограничное, диагностическое), в разных целях (традиции, культуры, самонаказание...), суть и степень которой зависят от установок личности, индивидуальных биологических противодействий организма, конкретных ситуационных условий, защитных механизмов [19]. Таким образом, все это способствует тому, чтобы суицид стал глобальной проблемой, требующей самого пристального внимания. Также важно отметить, что предсказание суицидального поведения, т. е., суицида с летальным исходом и нелетальной попытки суицида, является неточным, хотя был установлен ряд факторов риска для самоубийства (почти все психические расстройства, также безнадежность, обременительность и т.д.), но большинство из них, являются факторами риска

суицидальных наклонностей, а не неудавшейся попытки суицида или смерти в результате суицида [13]. Но совокупность определенных факторов риска приводит к переходу от суицидальных мыслей к суицидальному поведению, что в свою очередь подчеркивает важность отождествления показателей, которые непосредственно предшествуют суицидальному поведению.

Согласно последним исследованиям, психомоторное возбуждение (а именно ажитация), является одним из острых факторов риска суицидального поведения. Под ажитацией понимается чувство беспокойства, тревоги и страха, которое может быть вызвано провокацией или состоянием здоровья (стресс, недомогание, выгорание, давление, психические заболевания: кататоническая шизофрения, вследствие неправильной дозы психотропных лекарств или как побочный эффект и др.) и которое характеризуется повышенной двигательной активностью и болезненным психическим возбуждением (эмоциональные потрясения) [18]. Также выявлено, что ажитация часто наблюдается за неделю до самоубийства [3]. Учитывая эти данные, есть обоснование для включения ажитации в протокол оценки факторов риска суицидов, хотя характер связи ажитации и суицида требует подробного разъяснения. Так, с одной стороны, ажитация и суицидальные мысли являются двумя из девяти критериев симптомов для диагностики депрессивного расстройства [5], но с другой стороны, симптомы ажитации, которые совпадают с депрессивными эпизодами связаны с

более тяжелой формой суицидальных наклонностей. Ажитация может быть связана с суицидальным поведением у тех лиц, которые обладают способностью к самоповреждению с летальным исходом. Поэтому понимание ажитации в качестве фактора риска суицидального поведения является важной отправной точкой для клинических психологов при работе с пациентами, у которых есть высокий риск суицидального поведения. Для выяснения природы ассоциации, а также для проверки прочности корреляции между ажитацией и суицидальным поведением мы провели аналитический обзор литературы. В проведенных авторами исследованиях был рассмотрен вопрос корреляции ажитации и суицида без учета силы ажитации.

В исследовании Craig J. Bryan-а, «Гендерные различия в ассоциации ажитации и попыток самоубийства среди психиатрических больных» было выявлено, что именно ажитация была самым высоким фактором риска среди людей с историей попыток самоубийства (исследование проводилось среди психически больных лиц без суицидальной идеации) [7]. Для мужчин, возбуждение было связано со значительно повышенным риском попытки самоубийства, но для женщин, возбуждение не было связано с риском в истории попытки суицида. То есть, ажитация связана с историей попытки самоубийства (чаще с летальным исходом) среди мужчин, но не женщин психиатрических больных. Результаты не изменились, когда анализы были повторены среди подгруппы пациентов

с суицидальной идеацией. В исследовании Julia Shekunov-а и др. пациенты, совершившие попытку суицида имели идентифицированные стрессоры, включая неадекватно контролируруемую боль, ажитацию и тревогу (пациенты, совершившие суицид с летальным исходом), бессонницу и психосоциальные трудности [15].

В статье «Суицидальные попытки в основных депрессивных эпизодах: данные исследования БРИДЖ-II-Mix» многофакторный анализ свидетельствует о том, что рискованное поведение, психомоторная ажитация и импульсивность, пограничное состояние и употребление психоактивных веществ, были наиболее частыми переменными связанными с предыдущими попытками самоубийства. Важно отметить, что авторы выявили более прочную связь между психомоторным возбуждением и суицидальными попытками (с летальным исходом). Важно также отметить, что по результатам разных исследований было выявлено, что риск самоубийства у пациентов с психическими расстройствами выше по сравнению с психически здоровыми людьми. Более конкретно, риск самоубийства был выше на 15% при аффективных расстройствах, на 10% при шизофрении, и 2% - 3% при злоупотреблении алкоголя. В отношении аффективных расстройств, риск выше с увеличением уровня депрессии. Также было сообщено, что самоубийства чаще встречаются у пациентов с семейной историей самоубийства и с расстройствами настроения. Склонность к суициду появляется еще в начале расстройства

настроения, и увеличивается в связи с меланхолией и ажитацией [6]. Исследования также установили взаимосвязь между ажитацией и бессонницей. В соответствии с результатами исследования, связь между бессонницей и суицидальными наклонностями была значительной только при высоких уровнях ажитации [11].

Мы также просмотрели статьи, которые выявляли взаимосвязь ажитации и суицида у больных с расстройствами аутистического спектра (РАС). Приведем одно из просмотренных исследований, где психомоторное возбуждение было наиболее значительным фактором суицидальных попыток среди всех депрессивных пациентов, и его частота была чрезвычайно высока (89%) среди пациентов аутистического спектра. Сосредоточив внимание на взаимосвязи между ажитацией и самоубийством у людей с РАС, мы пришли к мнению, что (учитывая плохую способность к познавательному и эмоциональному контролю пациентов с РАС) регулярный просмотр наличия ажитации, а также регулярное лечение могут иметь важное значение для снижения потенциального риска попыток суицида, так как ажитация является одним из важных проявлений рисков суицидального поведения у пациентов с (РАС) [16] [14]. В одном из проведенных анализов Меган Б. исследователи также обнаружили, что у пациентов с депрессией, которые проявляют импульсивность и рискованное поведение - такие, как безответственное вождение, также психомоторное возбуждение, например, расхаживание

по комнате, заламывая свои руки или стаскивание одежды на определенные предметы, имели на 50 процентов более высокий риск попытки самоубийства, чем у пациентов с депрессией без такого поведения. В амбулаторных условиях специалисты в области здравоохранения, как правило, недооценивают клинические признаки, которые указывают на повышенный риск самоубийства у пациентов с возбужденной депрессией. Кроме того, ажитированная депрессия может возникнуть у здорового человека без предыдущей психиатрической истории, который никогда не обращался к психиатру [1], [9].

Итак, обзор литературы показал, что нужно уделять особое внимание вопросам связи между ажитацией и суицидальным поведением. Исходя из вышеизложенного, подразумевается, что хоть ажитация является острым фактором риска для суицидального поведения с летальным и нелетальным исходом [10], однако, мало исследований было проведено относительно сугубо проблемы взаимосвязи ажитации и суицида. Настоящее исследование проводилось с целью обобщения существующей литературы по проблеме ажитации и суицидального поведения. Результаты показали, что существует положительная взаимосвязь между ажитацией и возникновением попыток суицида, а также между ажитацией и смертельными случаями в результате самоубийства. Это свидетельствует о том, что существует четкое основание для оценки ажитации в шкале оценки риска самоубийства, т. к. если во время депрессии у пациентов бывает снижен-

ная активность и апатия и, следовательно, более низкий риск суицидального поведения, то при возбуждении, например, из-за неправильной дозы психотропных лекарств, риск резко увеличивается. Корреляция между ажитацией и суицидальным поведением была выраженной в случае суицида с летальным исходом, а не попыткой суицида. Большинство исследователей оценивало ажитацию путем клинических методов исследований – наблюдения наличия/отсутствия ажитации; следует при этом помнить, что попытка суицида, как правило, первично оценивается на основании отчета, клинической оценки или медицинской документации (разные меры), без наличия которых процесс оценки значительно усложняется. Кроме того, исследованиями было выявлено, что ажитация является мощным промотором для суицидальных действий у лиц с расстройствами аутистического спектра. В

вышеперечисленные исследования не были включены уровни депрессии или суицидальной тенденции. Поскольку ажитация является симптомом БДР (большого депрессивного расстройства), следовательно, она присутствует в течение недель и месяцев, приводя к суицидальному поведению (хотя мы не смогли рассмотреть ажитацию в виде потенциального посредника при переходе от суицидальных наклонностей к суицидальному поведению). Результаты данного исследования могут способствовать улучшению раннего выявления и предупреждения попыток суицидов, а также профилактики, так как факторы ажитации могут быть легче идентифицированы у людей, которые не хотят признать мысли о суициде. Подводя итог всему вышесказанному, мы выявили частичную детерминированность между ажитацией и суицидальным поведением.

Список литературы

1. Быков Ю.В. «Резистентные к терапии депрессии». – Ставрополь, 2009. – 74 с.
2. Комер Р. «Патопсихология поведения: нарушения и патология психики»: пер. с англ. -- 4-е изд., междунар. – СПб.: Прайм-ЕВРОЗНАК; М.: ОЛМА-пресс, 2005. – 638.: ил. с. 424 .
3. Кулганов В.А., Белов В.Г., Парфенов Ю.А. «Основы клинической психологии. Учебник для вузов. Стандарт третьего поколения» 396-400 с.
4. Фрейд «По ту сторону принципа удовольствия» (1920).
5. American Psychiatric Association, 2013, Diagnostic and statistical manual of mental disorders,(DSM-5).
6. Blumenthal S.J., Kupfer D.J., “Suicide over the Life Cycle: Risk Factors, Assessment, and Treatment of Suicidal Patients”, “Washington: American Psychiatric Association”; 1990.
7. Bryan C. J., “ Gender differences in the association of agitation and suicide attempts among psychiatric

- inpatients”; 2014 “General Hospital Psychiatry” 726–731 <https://www.apa.org/news/press/releases/2014/08/military-sexual-trauma.pdf>
8. Centers for Disease Control and Prevention (2015) <http://www.cdc.gov/ncipc/wisqars/default.htm>
 9. Chkonia E., Kenchadze V., Sikharulidze G. “Increased risk of suicide in patients with agitated depression” *Georgian Med News*. 2009 Dec;47-51
 10. Chu C., Klein K.M., Buchman-Schmitt J.M., Melanie A., Hagan Ch. R., Joiner T.E. “Routinized Assessment of Suicide Risk in Clinical Practice: An Empirically Informed Update” *Journal of Clinical Psychology* 2015 p. 1186-1200
 11. Fisher K, Houtsma C, Assavedo B.L., Green B.A., Anestis M.D. “Agitation as a Moderator of the Relationship Between Insomnia and Current Suicidal Ideation in the Military” 2016, 1-13. <http://www.ncbi.nlm.nih.gov/pubmed/27435680>
 12. Mann J.J, Malone K. M. “Cerebrospinal fluid amines and higher-lethality suicide attempts in depressed inpatients”; *Journal “Biological Psychiatry”*.1997; 41:162-171
 13. May, A.M., Klonsky, E.D., & Klein, D.N. (2012). Predicting future suicide attempts among depressed suicide ideators: A 10-year longitudinal study. *Journal of Psychiatric Research*, 46, 946-952.
 14. Ribeiro J.D., Bodell LP, Hames J.L., Hagan C.R., Joiner T.R. “An empirically based approach to the assessment and management of suicidal behavior”; *Journal of Psychotherapy Integration* 2013, 207–221
 15. Shekunov, J., Geske, J.R., & Bostwick, J. M. (2013). “Inpatient medical–surgical suicidal behavior: A 12-year case–control study.” *General Hospital Psychiatry* 423–426
 16. Takara K., Kondo T. “Comorbid atypical autistic traits as a potential risk factor for suicide attempts among adult depressed patients: a case-control study” <http://www.ncbi.nlm.nih.gov/pubmed/25328535>
 17. World Health Organization [WHO] 2014 <http://www.who.int/countries/rus/en/>
 18. www.healthline.com/symptom/agitation
 19. Կ.Ե. Վարդանյան, Ինքնաազդեսիայի հոգեբանական պատճառականությունը և կանխարգելման ուղիները, Դոկտորական ատենախոսություն, Երևան, 2015, 451 էջ, - 58

ՍՈՒԻՑԻԴԱԼ ՎԱՐՔԱԳԾԻ ԵՎ ԱԺԻՏԱՑԻԱՅԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

ԶԱՐՈՒՀԻ ԵՐԵՄՅԱՆ

Հայ-Ռուսական համալսարանի հումանիտար գիտությունների
ինստիտուտի հոգեբանության բաժին, չորրորդ կուրս

Սույն հոդվածում վերլուծվում է սու-
իցիդալ վարքագծի և աժիտացիայի
հարաբերակցությունը և բացահայտ-
վում է չափավոր դրական հարաբե-
րակցություն նշված երկու կատեգորի-

աների միջև: Սույն հոդվածի արդյունք-
ները կարող են նպաստել ինքնասպա-
նության փորձերի հայտնաբերմանը և
կանխարգելմանը:

THE ISSUE OF CORRELATION OF SUICIDAL BEHAVIOR AND PSYCHOMOTOR AGITATION

ZARUHI YEREMYAN

Fourth year student, department of Psychology,
Institute of Humanitarian Sciences of Russian-Armenian University

The current article analyses the issue
of correlation of suicidal behavior and
psychomotor agitation and reveals a
moderately positive relationship between

the two categories. The results of this
article may help to improve the detection
and prevention of suicide attempts.

ՇՈՂԻԿ ՈՍԿԱՆՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵՔԵՐԱՆԻ «ՃԱՌԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՄԵՋ

Վաղ քրիստոնեական շրջանի աստվածաբանների ստեղծագործությունների և աշխարհայեցողության վրա թույլ է եղել անտիկ փիլիսոփայության, մասնավորապես՝ Պլատոնի ազդեցությունը, որն ինքնին կարողացել էր միավորել գաղափարն ու մատերիան մեկ ընդհանրական աշխարհում, որը և՛ զգայական էր, և՛ նյութեղեն, և՛ իդեալականորեն ներդաշնակ ու գեղեցիկ: «Եկեղեցու հայրերը» հելլենական փիլիսոփայությունն օգտագործեցին միայն իբրև գործիք և մեթոդ իրենց ժամանակաշրջանի մարդկանց դյուրին եղանակով ու մատչելի լեզվով քրիստոնեական հիմնական դրույթներին ծանոթացնելու համար: «Եկեղեցու հայրեր»-ից ամենանշանավորն ու ակնառուն աստվածաբան, գրող և ճարտասան Հովհան Ոսկեբերանն էր, որը հանդես եկավ սոցիալական հավասարության գաղափարի պաշտպանությամբ և քրիստոնեական մանկավարժության դիրքորոշումից դիտարկեց և առաջարկեց սոցիալականացման և սոցիալական դաստիարակության հարցեր:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. աստվածաբան, քարոզ, բարձրաստիճան եկեղեցական գործիչ, սուրբ գիրք, ճգնավորական խստակեցություն, բարեպաշտ վարք, ճարտասանական բարձր արվեստ, աղքատախնամ սոցիալական գործունեություն, պատրիարք:

Բյուզանդական բարձրաստիճան եկեղեցական գործիչ, գրող և հռետոր Հովհան Ոսկեբերանը՝ ազգությամբ ասորի, ծնվել է Անտիոքում (մոտ 346-407 թթ.)՝ հարուստ քրիստոնեական ընտանիքում: Փոքրիկ Հովհանին և նրա ծնողներին՝ իբրև քրիստոնյա մկրտել է Կոստանդնուպոլսի պատրիարք (398-404 թթ.) Անտիոքի Մելետիոս հայրապետը՝ ազգությամբ հայ: Նրա հովանավորությամբ Հովհանը սովո-

րել է Անտիոքի նոր մկրտվածների դպրոցում: Քրիստոնեության դասերի հետ մեկտեղ ժամանակի նշանավոր իմաստասերների և հռետորների մոտ նա հետևել է նաև փիլիսոփայության և արտաքին գիտությունների դասընթացներին, սովորել սովեստ Լիբանոսի և աստվածաբան Դիդորոս Տարսունացու մոտ: Այնուհետև Աթենքում փիլիսոփայության ուսումնասիրությունը շարունակել է Անթոմիոս փիլիսոփայի

մոտ: Իր ժամանակի համար նա ստացել է փայլուն կրթություն՝ ինչպես կրոնական, այնպես էլ աշխարհիկ: Մեծ ջանասիրությամբ ու հետևողականորեն նա զբաղվել է նաև սուրբ գրքերի և աստվածաբանության ուսումնասիրությամբ, այնուհետև Անտիոքի մերձակա լեռներում՝ քարայրի մեջ, կամովին իրեն ենթարկել է ճգնավորական խստակեցության: 381 թվականին Մելետիոս հայրապետի կողմից նա ձեռնադրվել է սարկավագ, 386 թվականին՝ քահանա, որից հետո կարգվել է Անտիոքի գլխավոր եկեղեցու քարոզիչ: «Եվ ո՛վ կարող է նրա շնորհների բազմությունը և նրա խոսքերի պայծառությունը պատմել,-արձանագրում է Վարք Սրբոց,- եվ կարգավոր քահանա լինելով՝ բոլորից հռչակավոր և անվանի եղավ: Եվ իր շնորհների համար եպիսկոպոսության պատվի կոչվեց թագավորի և սինկղիտոսի դրոմամբ, ինչպես և եպիսկոպոսների և եկեղեցու ժառանգորդների, երանելի Հովհաննիս 40 տարեկանում Կ. Պոլսի եպիսկոպոս ձեռնադրեցին, և մեծ ուրախություն եղավ իր վիճակյալների համար...»:¹

Բարեպաշտ վարքի և առաքինությունների մասին նրա իմաստուն բանախոսություններն ու սուրբ գրքերի մեկնությունները՝ բացահայտելով մարդկային հոգու և մարմնի թուլություններն ու արատավոր կողմերը, բոլորին ուսուցանում և դաստիարակում էր ի վերուստ իրեն շնորհված վարդապետությամբ՝ միաժամանակ լուսավորելով ինչպես քաղաքի տղամարդկանց ու կանանց, այնպես էլ ծերերին ու մանուկներին: Նրա քարոզներն աչքի են

ընկել ճարտասանական բարձր արվեստով և հոգեբանական անբացատրելի ազդեցություններով: Իր հոգեղեն և սքանչելի քարոզների ու պերճախոսության համար նա փառակերտվել է «Ոսկի բերան» պատվանունով:

Հովհան Ոսկեբերանը իրականացրել է նաև աղքատախնամ սոցիալական լայնածավալ գործունեություն: Անտիոքի եկեղեցում նրա անմիջական նախաձեռնությամբ ու սրտացավ հոգածությամբ ամեն օր կերակրվել և անհրաժեշտ խնամք են ստացել ավելի քան 3000 որբեր, այրիներ, ծերեր, բանտարկյալներ ու տնանկներ: Անտիոքում և Մերձավոր Արևելքում նա մեծ ժողովրդականություն է վայելել հարուստների ցովի ու շվայտ կենցաղի դեմ պայքարի բանախոսություններով և սոցիալական հավասարության մասին ժողովրդավարական ու մարդասիրական քարոզներով: Քարոզներից մեկում խոսքն ուղղելով արքունիքին, բարձրաստիճան եկեղեցականներին, զինվորներին ու զորավարներին՝ անթաքույց վրդովմունքով դիմում է նրանց՝ «Զգույշ եղիր (դու), որ այդ խորհրդի տերն ես. թագավոր ես, թե՛ զորավար, կամ եթե այլ մեկը անարժանությամբ մերձենա, արգելիր, որովհետև նրանից ավելի մեծ իշխանություն ունես (դու) և ոչ սպիտակ պարեգոտ, որ կոկած-հղկած շրջում են կոտրատվելով...»:²

398 թվականին Հովհան Ոսկեբերանը հրավիրվել է Կոստանդնուպոլիս և իր կամքին հակառակ օժվել պատրիարք: Այսուամենայնիվ, նա եռանդով ու նախանձախնդրությամբ լծվել է քրիս-

1. Վարք Սրբոց, հատոր Գ, Ս. Էջմիածին-2010:

2. Նույն տեղում:

տոնեական կենցաղից հեռացած անբարո և վեճերով լի կյանքով ապրող մայրաքաղաքի բնակչության բարքերի բարեփոխման դժվարին գործին: Նույն անաչառությամբ և խստությամբ քննադատել է նաև արքունական զեխությունները: Ջանացել է ստեղծել Կոստանդնուպոլիսի պատրիարքությանը ենթակա տիեզերական եկեղեցի: Արիստոկրատիային, արքունիքին և եկեղեցական վերնախավին քննադատելու համար շնորհագրկվել է հոգևոր կոչումից, իսկ 403 թվականին Քաղկեդոնի Կաղնյաց ժողովը աթոռագրկել է նրան և աքսորել Բյուզանիա, սակայն մեկ օր անց ժողովրդի համառ պահանջով նա նորից վերադարձել է Կոստանդնուպոլիս՝ իր աթոռին: Վերստին դառնալով արքունիքի, մասնավորապես, Եվդոքսիա կայսրուհու և Ալեքսանդրիայի Թեոփիլոս պատրիարքի խարդավանքների զոհ՝ 404 թվականին՝ հակառակ ժողովրդի կամքին և Արևմտյան եկեղեցու հայրերի պաշտպանությանը, Արկադիոս կայսեր հրամանով աքսորվել է Փոքր Հայքի Կոկիսոն քաղաքը, որտեղ մնացել է երեք տարի: «Այդ ընթացքում,-արձանագրում է Ժամանակագիրը,- ուխտավորների անընդմեջ շարք է ձգվել դեպի Կոկիսոնի հայ եկեղեցի: Տեսնելով Ոսկեբերանի աճող հեղինակությունը՝ թշնամիները խնդրել են Արկադիոս կայսրին աքսորել նրան մերձսևծովյան Պիտոս անմարդաբնակ վայրը: Այստեղ նա ենթարկվել է ծանր տաժանակրության. ցուրտ ձմռանը ճանապարհի մեծ մասն անցել է հետիոտն և Պոնտոսի Կոմանա քաղաքի մոտ, աք-

սորավայր չհասած վախճանվել»:¹

Հովհան Ոսկեբերանը վախճանվել է 407 թվականի սեպտեմբերի 14-ին Պոնտոսի Կոմանա քաղաքում: Նրա մահից 35 տարի անց Կոստանդնուպոլիսի նորընտիր պատրիարք Պրոկղոսի հատուկ որոշումով և նրա սեփական նախաձեռնությամբ Հովհան Ոսկեբերանի աճյունը մեծ հանդիսությամբ տեղափոխվել է Կոստանդնուպոլիս և ամփոփվել Ս. Առաքելոց եկեղեցում:²

Հովհան Ոսկեբերանը թողել է մատենագրական հարուստ ժառանգություն (մեկնություններ, դավանաբանական և հակաճառական գրվածքներ, ճառեր, քարոզներ, ներբողներ, թղթեր, նամակներ և այլն), որը նշանակալի դեր է կատարել քրիստոնեական մտքի զարգացման պատմության մեջ: Նրա երկերն ու գործերն իրենց ձևաբովանդակային կառուցվածքով եղել են միջնադարյան հռետորական խոսքի և ոճի, նաև եկեղեցական բեմբասացության դասական նմուշներ: Առանձնապես ուշագրավ են նրա բարոյախոսական ճառերն ու հորդորակները (հեզության և հանդուրժողականության մասին, հպարտության մասին, հավատի մասին, սիրո մասին, աղոթքի մասին, գթասրտության և ողորմաձասիրության մասին, դաստիարակության մասին և այլն), որտեղ հեղինակը փառաբանում և բարձրացնում է քրիստոնեական մարդասիրական առաքինությունը՝ «Լավ է տալն, քան զառնուլն» առաքելական սկզբունքով: Դրա համար նա արժանացել է նաև «Սուրբ Հովհաննես Ողորմած» երկակի պատվանուին:

1. Տես Ս. Հովհան Ոսկեբերան, Ճառերի ընտրանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007, էջ 3:

2. Տես «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան:

Հովհան Ոսկեբերանի կյանքն ու մատենագրական վաստակը բազմաթիվ աղերսներով առնչվում է հայ իրականության հետ: Նրա երկերի մեծ մասը հայ վարդապետերը թարգմանել են դեռևս 5-րդ դարում՝ գրերի գյուտից և Աստվածաշնչի թարգմանությունից անմիջապես հետո: Թարգմանությունների լեզուն և ոճը՝ իրենց թարգմանական արվեստի ստույգությամբ, մաքրությամբ ու գեղեցկությամբ, իրականորեն, համարվում են դասական թարգմանություններ:

Քննարկելով սոցիալ-մանկավարժական բնույթի հարցեր՝ Հովհան Ոսկեբերանը ձևաբովանդակային առումով առաջին տեղը նախ հատկացնում էր քրիստոնեական, ապա նաև ընտանեկան դաստիարակությանը: Այսինքն՝ մերժում էր ինչպես Պլատոնի, այնպես էլ անտիկ շրջանում, հետագայում՝ նաև Վերածննդի դարաշրջանում ձևավորված հասարակական դաստիարակությունը: Եթե սոցիալական մանկավարժության ժամանակակից հայեցակարգերում ընտանիքը և կրոնը (հետևապես՝ նաև ընտանեկան և կրոնական դաստիարակությունը) դիտարկվում են իբրև առանձին սոցիալական կառույցներ, ապա Ոսկեբերանի մոտ դաստիարակության այդ երկու բաղադրամասերը (հետևապես՝ նաև ընտանիքը և կրոնը) հանդես են գալիս միասին՝ իբրև մեկ միասնական ամբողջություն: Քրիստոնեական աշխարհընկալման հետ հաղորդակցվելուն երեխային պետք է օգնեն ծնողները, եկեղեցականները և համայնքը: Այսօրինակ միջնորդավորված աշխարհընկալման միջոցով երեխաները պետք

է նախապատրաստվելին ինչպես բարեպաշտ կյանքին, այնպես էլ սոցիալական կյանքին: Ճշմարիտ հավատը մարդուն սովորեցնում է բարեհարմար կենցաղավարության, բարեգութ վերաբերմունք մերձավորի նկատմամբ, սովորեցնում է նաև, թե ինչպես մարդը պետք է իրեն պահի կյանքի ցանկացած պայմաններում: Նա բոլորին քարոզում էր հեռու մնալ անբարո և սին հաճույքներից, քանի որ «Աստծուն ատելի են իրենց պարկեշտությունը կորցնողները...»:՝¹

Հասարակությունը «արտաքին», սլավյալ դեպքում՝ անտիկ, հեթանոսական և քրիստոնեական դաստիարակության մեջ շատ հաճախ մեկնաբանվում էր նրանց մարդաբանական պատկերացումների առանձնահատկություններով ու տարբերություններով: Այսպես, ըստ Պլատոնի և անտիկ շրջանի մյուս փիլիսոփաների համոզմունքներում, եթե ի սկզբանե մարդը որոշակի հեռավորության վրա էր գտնվում աստվածներից, ուրեմն իր սոցիալական կյանքը նա պետք է կառուցեր սեփական ուժերով, իր ստացած արտաքին դաստիարակության միջոցով: Ինչպես Հովհան Ոսկեբերանի, այնպես էլ վաղ քրիստոնեության շրջանի աստվածաբանների հայացքներում և ուսմունքներում շեշտադրվում էր այն, որ հասարակական տարբեր հաստատություններում երեխաները ստանում էին սուկ աշխարհիկ կրթություն, մինչդեռ նրանց հոգևոր լուսավորվածությունը, հոգևոր դաստիարակությունն ու հոգևոր բարեպաշտությունը մղվում էր հետին պլան: Այսպիսով՝ թեպետ վաղ քրիստոնեական մանկավարժու-

1. Տես Վարք Սրբոց, հատոր Գ, Ս. Էջմիածին-2010:

թյունն ամբողջովին չէր մերժում հասարակական դաստիարակությունը՝ նրա մեջ տեսնելով նաև ռացիոնալ հատիկներ, այդուհանդերձ, նրա նկատմամբ չունեի այնքան էլ մեծ վստահություն: Դա բացատրվում էր երկու պարզ պատճառով. նախ՝ շատ հոգևոր հայրեր ու աստվածաբաններ, ապրելով կիսահեթանոսական միջավայրում, իրավացիորեն ենթադրում էին, որ հին հունական հասարակական դպրոցը երեխաներին ու պատանիներին հիմնականում տալիս էր տեղեկություններ անտիկ փիլիսոփայությունից՝ ի վնաս ճշմարտության և հոգևոր գիտելիքների, և երկրորդ՝ այդ շրջանում ուսումնական հաստատությունների գերակշիռ մասի հիմնական նպատակը հասարակության մեջ հասուն կյանքի նախապատրաստումն էր, իսկ մարդու աշխարհայացքի հիմքը, որը քրիստոնեական տեսանկյունով առավել կարևոր էր, հիմնականում դրվում էր ընտանիքում և նրա շրջակա միջավայրում: Այդ պատճառով էլ քրիստոնյա ծնողների և հոգևոր ուսուցիչների կողմից իրականացվող դաստիարակությունը կազմում էր քրիստոնեական մանկավարժության առանցքը:

Վաղ միջնադարում սկիզբ առավ հասարակական դաստիարակության նշանակության վերականգնման գործընթացը: Դա գլխավորապես կապված էր պետության մեջ քրիստոնեության դիրքորոշման ամրակայումով, եկեղեցու դերի հզորացմամբ և ուսումնական հաստատությունների վրա նրա վերահսկողության ուժեղացմամբ: Այդ միտումն իր հետագա զարգացումը գտավ նաև վերածննդի դարաշրջանում, որը հիմնականում պայ-

մանավորված էր ինչպես զուտ օգտապաշտական հանգամանքներով, այնպես էլ տնտեսության զարգացումով և հասարակության սոցիալական ու քաղաքական կառուցվածքով: Սոցիալական դաստիարակության գաղափարների առաջընթացը ընտանեկան դաստիարակության համեմատ ուներ նաև փիլիսոփայական պատճառաբանում և հիմնավորում՝ կապված անտիկ փիլիսոփայության նկատմամբ հետաքրքրությունների բարձրացման հետ, առաջին հերթին Պլատոնի, արդեն ոչ թե իբրև հետազոտության մեթոդ, այլ որպես ինքնագնահատում:

Հովհան Ոսկեբերանի թողած վիթխարի ժառանգությունն իր տարողությամբ, նաև ժանրային բազմազանությամբ, թեմատիկ հարցադրումների հագեցվածությամբ ու ձևախմբատային կառուցվածքի ամբողջականությամբ ու համակարգվածությամբ, հիրավի, գերազանցում է այն ամենին, ինչ մնացել էր վաղ քրիստոնեական շրջանի աստվածաբանների ժառանգությունից: Այն ամենը, ինչ գրել ու ստեղծագործել է նա կարելի է գտնել և կրոնականություն, և կրոնական գրականություն, և փիլիսոփայություն, և ժամանակագրություն, և բարոյախոսություն, և քննաբանություն և, որ մեզ համար չափազանց կարևոր է, քրիստոնեական և սոցիալական մանկավարժություն: «Բազում են վարդապետության խոսքերն ու սուրբ գրքերի մեկնությունները,- գրում է Վարք Սրբոցը,- որ երանելի տեր Հովհանը՝ Կ. Պոլսի եպիսկոպոսը թողել է սուրբ եկեղեցու ուխտի մանկանց խրատի և ուսման համար, որ և գրքերում ժողովված կազմում են տասներկու հազար ճառեր, նաև որոնց

համար նա Ոսկերեքերան կոչվեց»:¹Նրա ստեղծագործություններն ըստ իրենց ոճի ու մեթոդիկայի չունեն կրոնական երկերին ներհատուկ բարդ ու խորին ոճաբանություն, խոսքի և մտքի անհարկի ծեծծեքումներ, բառի ու նրա իմաստային նշանակության անհամաչափություններ: Դրանք դյուրիասկանալի, հետաքրքիր և մատչելի են ընթերցողին, ունեն ինչպես ճանաչողական, այնպես էլ ուսուցողական ու դաստիարակչական նպատակաբանություն:

Հովհան Ոսկերեքերանի ստեղծագործությունների գերակշիռ մասը կրոնականից զատ, առհասարակ, վերաբերում են մարդկային հոգու, մտքի ու կյանքի պրոբլեմատիկային: Հատկապես ուշագրավ են և մեծ հետաքրքրություն են ներկայացնում կրոնաբարոյախոսական բովանդակությամբ նրա ճառերը, որտեղ մի կողմից նա քննաբանում և անխնա ծաղկում է մարդկային այնպիսի կրքեր, արատներ ու մոլություններ, ինչպիսիք են՝ ազահությունը, փառամոլությունը, հարստություն կուտակելու անհագ տենչը, իշխանատենչությունը, նախանձը, զագրախոսությունն ու բանասարկությունը, զայրացկոտությունն ու անհանդուրժողականությունը, իսկ մյուս կողմից, ի վերուստ իրեն շնորհված աստվածային վարդապետությամբ, վերոգրյալ մարդկային արատներին հակադարձում է սիրո և բարության, բարեկամության ու միաբանության, խաղաղասիրության ու համերաշխության, երջանկության ու ընտանեսիրության, չափավորության ու առողջության,

ողորմության ու այլասիրության և համամարդկային այլ բարձրարժեք գաղափարներ: Գաղափարներ, որոնք այսօր էլ նույնքան առաջնահերթ ու արդիական են, որքան անհետաձգելի ու հրատապ էին նաև հեղինակի ապրած դարաշրջանում: Խոսքն ուղղելով իր պատանի ընթերցողին՝ դարերի հեռուներից նա պատգամում է՝ «Ուզում ես ինչ-որ մեկին ծառայել: Չեմ առարկում. բայց թող որ դա ուրիշին դառնություն չպատճառի: Չէ՞ որ, դրա համար չեն մեզ ուսուցիչներ տրված, որպեսզի թշնամանք ունենանք միմյանց հանդեպ, այլ որպեսզի բոլորս մի միություն կազմենք: Ինչու՞ ես դու մենակ: Ինչու՞ շատ ընկերներ ձեռք չես բերում: Ինչու՞ չես դառնում սիրո արարիչ: Ինչու՞ չես հաստատում բարեկամություն՝ առաքինության այդ մեծագույն փառաբանումը»:²

Եթե սերն ու բարեկամությունը անվանի բարոյախոսը փառաբանեց որպես մարդկային բարձրագույն առաքինություն, ապա շողոքորթությունն ու զագրախոսությունը նա համարեց մարդկային բոլոր արատներից ամենավտանգավորն ու վատագույնը: Իր քարոզներում և ընտրանի ճառերում շարունակ և անդադրում նա ուսուցանում և միաժամանակ զգուշացնում էր, որ առանց տարբերակման ու խտրության ամեն ինչ՝ լավը և վատը, գովաբանելը ոչ թե բարեկամի վարքագիծ է, այլ՝ շողոքորթի ու զագրախոսի, ընդհակառակը, լավ գործի դրվատելը և վատ արարքի պարսավելը՝ սա է ճշմարիտ ընկերոջ և բարեկամի պարտքը. «Ահա թե ինչու,-գրում է նա,- անհաճո է

1 Վարք Սրբոց, հատոր Գ, Ս. Էջմիածին-2010:

2. Ընդհանրական եկեղեցու հայրեր, հատոր Գ, Ս. Հովհան Ոսկերեքան, Ճառերի ընտրանի, հրատ. Ս. Էջմիածին-2007, էջ 17:

թշնամին, երբ գովաբանում է, և հաճո է բարեկամը, անգամ երբ նախատում է ինձ: Նա, ով թեպետև համբուրում է ինձ, անհաճո է, նա, ով թեպետև վիրավորում է ինձ, հաճո է: Ճշմարիտ է ասված՝ «Լավ է բարեկամի ապտակը, քան թշնամու նենգ համբույրը» (Առակ. 27, 6):¹ Քարոզելով սեր և բարեկամություն՝ բարձրաստիճան եկեղեցականը քաջ համոզված էր, որ սիրո ուժը հավասարազոր է բնության ուժին, նույնիսկ ավելին, որովհետև այն, ինչ որ չի կարող անել բնությունը, անում է սիրո ուժը, ուրեմն, վաստակենք սիրո ուժը և դրանով ապահովենք մեր հոգևոր ու մարմնավոր անվտանգությունը: «Մինչև էրբ մեզ պիտի սահմանափակենք մեկով կամ երկուսով: Նա ով ունի բազմաթիվ բարեկամներ, թեկուզև աղքատ լինի, հարուստներից ավելի հարուստ է, ինչ չի հանդգնի ասել իր համար, նրա փոխարեն կասեն բարեկամները, ինչ չի կարող ձեռք բերել իր համար, ձեռք կբերի մյուսների շնորհիվ»:²

Ինչպես Պլուտարքոսը, Ոսկեբերանը նույնպես մեծահռչակբարոյագետ և բարոյախոս էր: Նրա ստեղծագործական տարերքը բարոյախոսությունն էր, որի նպատակաբանությունը սովորական, մահկանացու մարդուն ճիշտ գործել ու ապրել սովորեցնելն էր: Կյանքին նախապատրաստվելու, այսինքն՝ սոցիալականացվելու համար, մարդը պետք է ստանար կրոնական և ընտանեկան դաստիարակություն, պետք է անդադրում սովորեր ու դաստիարակվեր, պետք է հորդորներ ու խորհուրդ-

ներ ստանար ծնողներից, շրջապատի պատկառելի և առաջավոր մարդկանցից, ավագներից ու ամենափորձառուներից: Կարգին ու կատարյալ մարդ դառնալու համար պետք է տիրապետեր ինչպես անձնական, այնպես էլ հասարակական ու համամարդկային բազմատեսակ բարոյական արժեքների, պետք է շարունակ մաքատեր ու պայքարեր կյանքի ճիշտ ձևերին հարմար ու պատշաճ արժանիքներ ձեռք բերելու համար:

Սա Հովհան Ոսկեբերանի մշակած ճիշտ ապրելու կյանքի բանաձևն էր:

«Հարստություն և աղքատություն» ընտրանի ճառում Ոսկեբերանը, ելնելով իր կրոնափիլիսոփայական հայեցաբանությունից, զարգացնում է այն մտահղացումը, որ ճիշտ ապրելը ամենևին էլ հարուստ լինելը չէ, քանի որ ինչպես մարդու կյանքն է ժամանակավոր ու ենթակա մահվան, ճիշտ այդպես էլ հարստությունը ենթակա է անկման, փլուզման, ուրեմն՝ «Ինչու՞, ի՞նչ մարդ, հարստությունը քեզ ցանկալի է թվում: Անշուշտ, լավ սեղանից ստացած հաճույքի համար, ամբիոնի և թիկնապահների կողմից արժանացած հարգանքի համար, բաղկացած այն մարդկանցից, ովքեր ծառայում են քեզ հանուն հարստության, այն բանի համար, որ դու կարող ես վրեժխնդիր լինել քեզ վիրավորողներից և սարսափ տարածել բոլորի վրա: Ուրիշ այլ պատճառներ դու չես կարող նշել՝ բացի հաճույքից ու շողոքորթությունից, ահից ու վրեժխնդրությունից»:³ Ստուգապես, հարստությունը, փաստորեն,

1. Նույն տեղում, էջ 19:
 2. Նույն տեղում:
 3. Նույն տեղում, էջ 84:

մարդուն ո՛չ ավելի իմաստուն է դարձնում, ո՛չ ավելի զուսպ, ո՛չ բարի, ո՛չ մարդասեր և նրա հոգու մեջ ոչ մի այլ առաքինություն չի դնում կամ պատվաստում: Թերևս հարստությունը այն պատճառով է «ցանկալի» ու «բաղձալի», որ այն մարդու մեջ առաջացնում է ուժգին կրքեր, զայրույթը վերածում գործի, վիթխարի չափերի հասցնում հիվանդագին փառատենչությունը և մղում նրան սնապարծության ու ամբարտավանության. « Ես միշտ ասում եմ,-գրում է նա,- թե հարստությունը դավաճանաբար փոխում է նրանց, ովքեր վատ են օգտագործում այն. ահա գալիս է ժամանակը, որ ապացուցում է այդ խոսքերի իրավացիությունը: Ինչո՞ւ ես պահպանում այն, երբ փորձության պահին քեզ օգուտ չի բերում: ...Իսկ ես հարուստներին հոգեհան եմ անում, ավելի ճիշտ՝ ոչ թե հարուստներին, այլ նրանց, ովքեր չեն կարողանում օգտվել հարստությունից: Միշտ էլ ասում եմ, բայց ոչ թե մեղադրելով հարուստին, այլ գիշատչին: Այլ բան է հարուստը, այլ՝ գիշատիչը. տարբերի՞ր այդ բաները և մի՛ խառնիր անմիավորելին»:¹ Նրա տրամաբանությամբ, անընչաքաղցությունը ուժեղ զենք է և անհաղթահարելի պաշտպանություն: Հետևաբար՝ միայն նա, ով մերժել է հարստությունը և բաժանել աղքատներին, այն օգտագործել է ինչպես հարկն է և հեռանալով այս աշխարհից՝ նրա վրա ունեցել է կատարյալ իշխանություն. «Որտե՞ղ է հարստությունը: Մեծ հաճույքով կհարցնեի մեռյալներին՝ որտե՞ղ է հարստությունը: Սա որպես հանդիմանություն չեմ ասում, ո՛չ, և ոչ

էլ այն բանի համար, որ բորբոքեմ վերքերը, այլ այն պատճառով, որպեսզի ուրիշների կործանումից ձեզ համար խաղաղ հանգրվան պատրաստեմ»: Իրականում մենք բոլորս սուկ օգտագործող ենք և ոչ ունևոր: Եթե նույնիսկ մեր ողջ կյանքի ընթացքում հարստությունը մնա մեր ձեռքին, և ոչ մի դժբախտություն չպատահի, մինևույն է, մահից հետո կամա-ակամա այն զիջում ենք ուրիշին՝ դրանից միայն օգտվելով, սակայն՝ նրա վրա իշխանություն չունենալով, և վերաբնակվում ենք անդրշիրիմյան կյանքում՝ լինելով միանգամայն մերկ ու ոչինչ չունենալով, ուրեմն, եթե մեկը կամենում է Ա տիրել, Ա օգտագործել, Ա կատարյալ իշխանություն ունենալ իր ունեցվածքի վրա, թող երես թեքի ցանկացած հարստությունից և ինչքից, որովհետև՝ «Աստված քեզ հարուստ է դարձրել, որպեսզի դու օգնես կարիքավորներին, որպեսզի ուրիշներին փրկելով՝ քավես մեղքերդ, քեզ փող է տվել ոչ այն բանի համար, որպեսզի դու փականք դնես քո կորստյան վրա, այլ որպեսզի ծախսես քո փրկության համար»:²

Հովհան Ոսկեբերանն իր քննաբանությունից դուրս չի թողել պետության, ղեկավարի և ղեկավարության, իշխանության և փառքի՝ որպես սոցիալ-մշակութային ավանդույթ-սովորույթների մասին, խոհափիլիսոփայական մտորումներն ու խորհրդածությունները: Թե ինչպիսին պետք է լիներ թագավորը, զորավարը, առաջնորդը և ընդհանրապես ղեկավարը, նա ուներ իր յուրաքանչյուր և առանձնահատուկ պատկերացումները. «Ճշմարիտ է այն թագավոր-

1. Նույն տեղում, էջ 88:
2. Նույն տեղում, էջ 100:

րը,-գրում է նա,- ով իշխում է բարկությանը, նախանձին և հաճույքներին, և ամեն ինչ ենթարկում է Աստծո օրենքներին ու ազատ պահելով միտքը՝ թույլ չի տալիս, որ հոգում բնակվի հաճույքի իշխանությունը, այդպիսի մարդուն ես հաճույքով կուզենայի տեսնել ծովերի ու երկնքի, քաղաքների, ժողովուրդների ու բանականների առաջնորդ»:¹

Նա ով իր հոգու կրքերը ղեկավարում է առողջ բանականությամբ, հեշտությամբ կղեկավարի նաև մարդկանց՝ համաձայն համամարդկային օրենքների, այնպես որ, ենթականների համար կարող է լինել հոր նման մեկը, ով քաղաքացիներին վերաբերվում է ամենայն խոնարհությամբ, իսկ նա, ով արտաքուստ իշխում է մարդկանց վրա, բայց ինքը ծառայում է գայրութին, իշխանատենչությանն ու հաճույքներին, առաջին՝ կարող է ենթականների աչքին ծիծաղելի թվալ, որ կրում է «թանկագին քարերով զարդարված ոսկե թագ», սակայն խոհեմությամբ չի թագադրված, որ «ողջ մարմինը շողշողում է ծիրանիով», իսկ հոգին մնացել է անզարդ, երկրորդ՝ նա կարող է չհմանալ, թե ինչպես տնօրինի իշխանությունը, որովհետև նա, ով ի վիճակի չէ կառավարել իրեն, ինչպես կարող է ուրիշներին կառավարել օրենքներով: Պետք է ձգտել ոչ այն բանին, որ օգուվենք մեծարանքներից ու իշխանությունից, այլ նրան, որպեսզի լինենք առաքինության ու իմաստասիրության մեջ: Ուժն ու իշխանությունը հաճախ դրդում են մարդուն աստծուն անհաճ բաներ անել, ուստի հարկավոր է ունենալ չափազանց արի հոգի, որպեսզի կարո-

ղանաս օգտվել մեծարանքից, փառքից և իշխանությունից: Նա ով զուրկ է բարձր արժանապատվությունից, սկամա իմաստակում է, իսկ նա, ով ունի այն, ունենում է զգացողություն՝ նման այն բանին, որ «...ինչ-որ մեկը, ապրելով բարեպետ և գեղեցիկ կույսի հետ, իր համար սովորություն է դարձրել երբեք նրան չնայել անպատկառ հայացքով: Այսպիսին է իշխանության բնույթը»:²

Նա կարծում էր, որ բարձր արժանապատվությունից և առողջ բանականությունից զուրկ ղեկավարը «... սկամա շատերին դրդում է վիրավորանքներ հասցնել, բորբոքում է գայրութը, լեզուն անսանձ է դարձնում, բացում է բերանը և, ասես, ավելոծելով հոգին՝ մղում անհուն չարությունների», քանզի համբավն ու հաջողությունը ժողովրդի մեջ, որքան ավելի հոչակում են մարդուն, էլ ավելի վտանգավոր են դարձնում նրան, որովհետև այդպիսի մարդը չի կարող անգամ դադար առնել ու ազատ շնչել՝ ունենալով այդպիսի ծանր պարտականություն ու պատասխանատվություն: Հետևապես՝ այդպիսի մարդը, թեկուզև կատարի հազարավոր բարի գործեր, մեծ դժվարությամբ կմտնի «երկնային թագավորություն», որովհետև սովորաբար ոչինչ այնքան ամբարտավան չի դարձնում ղեկավարին, որքան ամբոխից ստացած փառքը: Կարողանալ տանել անպատվությունը մեծ և ազնիվ բան է, սակայն փառքի տիրանալը պահանջում է կորով և չափազանց մեծ հոգի, որպեսզի ունենալով դրանք՝ կարողանալ չմեծամտանալ, չգոռոզանալ: Ար-

1. Նույն տեղում, էջ 134:

2. Նույն տեղում, էջ 135:

դարև, ոչ մի բան մարդկանց այդքան անմիտ և հանցավոր չի դարձնում, որքան փառքի հետ կապվածությունը, և ոչինչ նրանց ավելի հարգարժան ու հաստատակամ չի դարձնում, որքան արհամարհանքը փառքի նկատմամբ:

Մարդկանց հեշտ է ենթարկեցնել վախով, սակայն բոլորին դարձնել համախոհ ու կուսակից և ստիպել, որ նրանք անկեղծորեն տրամադրվեն իշխանությունների հանդեպ, չափազանց դժվար գործ է, և որքան էլ որևէ մեկը փողեր ծախսի, որքան էլ ջանքեր թափի, ինչ էլ որ անելու լինի, հեշտությամբ չի կարող գրավել բազմության տրամադրությունը: Ոչինչ այնքան լավ չի ցուցանում ղեկավարին դրական կողմից, որքան նրա՝ ենթակաների նկատմամբ ունեցած անկեղծ հոգածությունն ու հարգանքը:

Թեև Հովհան Ոսկեբերանի երկերը, հատկապես, նրա ընտրանի ճառերն իրենց մեջ պարունակում են սոցիալականացման, սոցիալական և բարոյական դաստիարակության բազմաձև էջեր, սակայն «Ողորմության և օտարասիրության մասին» ճառն առանձնանում է ինչպես իր թեմատիկ բովանդակությամբ, այնպես էլ սոցիալական հակասությունների և սոցիալական կյանքի հարցերի առավել խորը մեկնաբանություններով: Այս ճառի տրամաբանական խորհուրդն այն է, որ ողորմությունը հավասարապես վերաբերում է ինչպես հարուստներին, այնպես էլ աղքատներին, նաև նրանց՝ ովքեր ապրել են և ապրում են ողորմությամբ, որովհետև «չկա մի այնպիսի աղքատ մարդ, որքան էլ նա չքա-

վոր լինի, որ չունենա թեկուզ և երկու գրոշ: Այդ պատճառով քչից քիչ տվողը կարող է ավելի բարձր լինել նրանցից, ովքեր առատ ողորմություն են տալիս իրենց մեծ ունեցվածքից ...»:

Այսինքն՝ ըստ մեծ իմաստասերի ու բարոյախոսի՝ ողորմածության մեծությունը որոշվում է ոչ այնքան տրված ողորմության չափով, որքան ողորմացողի հոժարությամբ ու տրամադրվածությամբ. «Պետք չէ նայել այն բանին, որ այրին երկու լումա է տալիս, այլ նրան, որ ունենալով ընդամենը երկու լումա՝ նա չի ափսոսում, այլ զոհում է իր ողջ ունեցածը»:¹ Հետևաբար, ողորմացողից պահանջվում է ոչ այնքան առատաձեռնություն, որքան կամեցողություն և ջերմեռանդություն: Հետևությունը, ըստ բարձրաստիճան կրոնավորի, այն է, որ եթե կամեցողություն ունենք և փութաջան ենք, ապա ոչ մի վնաս չկա աղքատ լինելու մեջ, իսկ եթե չունենք, ապա հարստությունից էլ ոչ մի օգուտ չկա: Ողորմությունը գնահատվում է ոչ թե տրվածի չափով, այլ հոժարության և կամենալու առատությամբ: Ուրեմն, եկեք չմտածենք, որ ողորմություն տալուց կպակասի մեր ունեցվածքը, այն չի նվազում, այլ մեծանում է, չի մսխվում, այլ բազմապատկվում է, քանի որ՝ «Ողորմությունը կարծես թե ինչ-որ գործիք է կամ ցանք, ավելի ճիշտ ասած՝ ավելի շահավետ ու անվտանգ և՛ առաջինից, և՛ երկրորդից»:²

Իր խոսքն ազդեցիկ ու պատկերավոր և ուկնդրին ընդունելի ու ընկալելի դարձնելու նպատակով նա մեջբերում է Սողոմոնի առակներից «Ողորմու-

1. Նույն տեղում, էջ 148:

2. Նույն տեղում, էջ 151:

թյուն տվողը փոխ է տալիս Աստծուն» (Առակ. 19, 17) առակը և դրան տալիս է խոհափիլիսոփայական ընդհանրական մեկնաբանություն. «Տեսնու՛մ ես, ինչ հրաշալի ու զարմանալի փոխառություն է: Մեկը վերցնում է, իսկ մյուսը իր վրա է վերցնում պարտքի պատասխանատվությունը: Ինչու՞ նա չի ասում՝ աղքատին ողորմություն տվողը տալիս է Աստծուն, այլ ասում է՝ փոխ է տալիս: Որպեսզի դու չմտածես, թե դա պարզ փոխհատուցում է: Սուրբ Գիրքը գիտե մեր շահասիրությունը, ուշադրության է առնում, որ մեր ազահությունը, ելնելով շահից, ավելին է փնտրում, և մարդը, որ փող ունի, երբեք չի ցանկանա աղքատին պարտք տալ առանց ապահովության, առանց գրավի, երաշխավորության կամ երաշխավորի: Եվ քանի որ Աստված գիտի, որ առանց այդ պայմանների ոչ ոք պարտք չի տալիս, ոչ ոք չի առաջնորդվում մարդասիրությամբ, այլ նայում է միայն շահույթին, մինչդեռ աղքատը այդ բոլորից զուրկ է՝ ոչ ապահովություն ունի, որովհետև ոչինչ չունի, ոչ գրավ կարող է դնել, որովհետև ընչազուրկ է, ոչ երաշխավոր կարող է ներկայանալ, որովհետև աղքատության պատճառով նրան ոչ ոք չի հավատում, և քանի որ Աստված գիտի, որ վերջինս վտանգի է ենթարկվում աղքատության, իսկ փող ունեցողը խստասրտության պատճառով, ապա նրանց արանքում դնում է Ինքն իրեն՝ որպես աղքատի համար երաշխավոր և որպես գրավ՝ պարտք տվողի համար»:¹

Դիմելով հարուստներին, կրկին ու կրկին նա նրանց հորդորում էր ու համառորեն բացատրում, որ աստված այն

բանի համար չէ ձեզ ուրիշներից շատ տվել, որպեսզի դուք ծախսեք անառակության, հարբեցողության, ցանկասիրության, թանկարժեք հագուստների և շվայտության վրա, այլ այն բանի համար, որ տաք կարիքավորներին: Ուրեմն, չպետք է ամաչենք ծառայել աղքատներին, չպետք է հրաժարվենք ծառայել սեփական ձեռքերով, որովհետև մեր ձեռքերն այդպիսի ծառայությամբ օրհնվում են, և եթե այդպիսի ծառայությունից հետո դրանք մեկնում ենք առ երկինք աղոթելու, ապա աստված, նայելով դրանց, անմիջապես մեզ ողորմում է և տալիս է մեր խնդրելիքը: Փող տալը բավական սովորական բան է, սակայն երբ ինքդ ես օգնություն ցույց տալիս կարիքավորներին և դա անում ես սեփական կամեցողությամբ ու սրտացավությամբ՝ դրա համար անհրաժեշտ է ունենալ մեծ և իմաստասեր հոգի: Ելնելով իր կրոնական, փիլիսոփայական և սոցիալ-քաղաքական հայացքներից, հումանիստ փիլիսոփան, «ողորմությունը» դիտարկելով որպես սոցիալականացման գործիք, ձգտում էր ինչ-որ ձևով այն ծառայեցնել աղքատների կարիքներին, դրանով մեղմացնել և չափավորել հարուստների և աղքատների միջև եղած սոցիալական հակադրությունը և այդ կերպով բարեկարգել հասարակությունը, այն դարձնել քիչ թե շատ օրինավոր, արդարացի ու մարդասեր:

Որքան էլ անիրական ու անիրագործելի լինեին նրա գաղափարները, մտահղացումներն ու առաջադրած պահանջները, այնուամենայնիվ, դրանք հենց այն ժամանակաշրջանի, որի մեջ ապրել է Ոսկեբերանը, և ընդ-

1. Նույն տեղում, էջ 155:

հանրապես բոլոր ժամանակաշրջանների համար ունեցել են, ունեն և կունենան ժողովրդավարական և մարդասիրական նպատակաուղղվածություն: «... Ինչպե՞ս ես անտարբեր նայում ցնցոտիների մեջ կորած աղքատին,- խոհականությամբ գրում է նա,-որ քնում է ծղոտի վրա, ցեխի և կեղտի մեջ, ամեն կարգի ցրտի դիմանում: Ո՞ր գազանը չէր մեղմանա՝ տեսնելով այդպիսի թշվառություն: Ո՞վ կարող է այդքան դաժան և անմարդկային լինել, որպեսզի չդառնա խոնարհ ու կարեկից»: Այնինչ կան մարդիկ, որ հասել են այնպիսի դաժանության, որ ոչ միայն չեն խղճում, չեն ցավակցում և թեթևացնում վիշտն աղքատի, այլև հաճախ վիրավորում են նրանց և ասում, որ նրանք արժանի են դրան: Թերևս այն պատճառով, որ նրանք ցանկանում են կերակրվել և ոչ թե սովից մեռնել: «Ո՛չ, ասում ես դու, այլ որովհետև ծույլ են: Իսկ դու չե՞ս ծուլանում՝ տրվելով հաճույքներին: Այնպիսի գործերով չե՞ս զբաղվում, որոնք ցանկացած աղքատությունից վատ են՝ տրվելով ուրիշներին թալանելու ու ճնշելու, ընչազրկելու կրքերիդ: Ավելի լավ կլիներ, որ դու էլ այդպես պարապ լինեիր, որովհետև այդպես տրվել անգործությանը շատ ավելի նախընտրելի է, քան ընչազրկել ու թալանել»:¹ Ոսկեբերանը անվերապահորեն քննադատում և խարազանում է նրանց, ովքեր ոչ միայն զլանում են, այլև կշտամբում, նվաստացնում և վիրավորում են մուրացողին. «Մ՞իթե դա են քեզ սովորեցրել, մարդ: Քեզ պատվիրված չե՞՞ պարապության համար մի՛ մեղադրիր, անազնվության

համար մի՛ հանդիմանիր, ծուլության համար մի՛ կշտամբիր, այլ թեթևացրու նրա աղքատությունը, փրկիր դժբախտություններից և ընկածներին օգնության ձեռք մեկնիր, ուրեմն մի՛ հարցրու նրա կյանքի ու գործերի մասին, երբ պատրաստվում ես ողորմություն տալ. չե՞ որ դա ծայր անպատշաճություն է մի կտոր հացի համար քննության առնել նրա ողջ կյանքը ...»:² Եթե դու տեսնեիր, որ նա բազում միջոցներ ունի և մեծ փառք, ապա արդարացիորեն կարող էիր այդպես վարվել, բայց եթե տեսնում ես, որ նա դժբախտ է, մի ասա, որ նա անառակ է և ծույլ, որովհետև դա դաժանության, անսրտության և մեծագույն անբարտավանության նշան է: Ոսկեբերանի պատճառաբանությամբ ողորմությունը հենց այն դրդապատճառով է ողորմություն կոչվում, որպեսզի մենք ողորմանք և՛ արժանավորին, և՛ անարժաններին, որովհետև եթե մենք սկսենք քննել ու տեղեկանալ անարժանների մասին, ապա արժանավորներին էլ այդքան հեշտությամբ չենք գտնի, իսկ եթե ողորմանք նաև անարժաններին, անկասկած, և՛ արժանավորների, և՛ ամեն կարգի մարդկանց էլ կհանդիպենք: Ով բարյացակամություն է ցուցաբերում աղքատին, կարևոր է կյանքի մասին նրանից ոչ թե հաշիվ պահանջել, այլ թեթևացնել աղքատությունը և բավարարել նրա կարիքները: Ավելի համոզիչ դարձնելու իր մտքերը նա՝ վկայակոչում է հետեվյալ առակը՝ «Ով իր ականջը փակում է տնանկին չլսելու համար, ինքն էլ երբ կանչի Տիրոջը, Տերն էլ իրեն չի լսի» (Առակ. 21, 13): Ուրեմն մարդկանց վերա-

1. Նույն տեղում, էջ 169:

2. Նույն տեղում, էջ 175:

բերվենք այնպես, ինչպես մենք կուզե-
ինք, որ Աստված վարվեր մեզ հետ: Սա
Հովհան Ոսկեբերանի մարդկությանն
ուղղված մարդասիրական պատգամն
էր դարերի հեռուներից:

Բարձրաստիճան եկեղեցականը
համոզված պատճառաբանում էր, որ
ողորմությունը շատ ավելի մեծ զոհա-
բերություն ու նվիրաբերություն է, քան
աղոթքը, պասը և մյուս բաները, եթե,
իհարկե, այն լինում է արդար մղումնե-
րով և նույնպիսի նեղություններով, եթե
մաքուր է ամեն տեսակի շահախնդրու-
թյունից, թալանից ու բռնությունից. «Ով
ցանկանում է հարուստ լինել,-ասում է
Նա,-միշտ էլ փողի կարիք է զգում, իսկ
ով չի ցանկանում հարուստ դառնալ,
միշտ էլ բավարարություն է ստանում:
Ոչ թե հարուստ լինել, այլ չցանկանալ
հարստանալ, ահա թե որն է հարստու-
թյունը: Օրինակի համար ասեմ, որ կա
հարուստ, որ բոլորին անխտիր թալա-
նում է, և կա հարուստ, որ իր հարս-
տությունը տալիս է աղքատներին, մե-
կը հարստանում է հավաքելով, մյուսը՝
ծախսելով, մեկը ցանում է հողը, մյուսը
մշակում է երկինքը»:¹ Ելնելով քրիս-
տոնեական հայեցաբանությունից՝ Նա
քարոզում է մարդկանց հեռու մնալ
թալանից, ազահությունից, զրպար-
տությունից, կաշառակերությունից,
անբարո արք ու բարքից և բացասա-
կան այլ երևույթներից, որովհետև ան-
բարո մարդը չի կարող ողորմած լինել.
«Եթե մենք միևնույն ձեռքերով և ուրիշ-
ներին ենք ճնշում, թեկուզև նրանցից
վերցրածով հագնենք ուրիշներին,
միևնույն է, մենք պատժից չենք խու-
սափի», քանի որ ողորմության հիմքը
դառնում է ցանկացած մեղքի հիմք,

այս դեպքում ավելի լավ է ամենևին չո-
ղորմել, քան այդպես ողորմել:

Նրա գաղափարախոսական լեյտ-
մոտիվը սոցիալական հավասարու-
թյան գաղափարի պաշտպանությունը
և ամեն տեսակ դասային խտրակա-
նության, աչառության, կողմնակալու-
թյան բացարձակ մերժումն էր: Բոլոր
մարդիկ էլ, քարոզում էր Նա, ունեն
միևնույն բնական կարիքները, ուրեմն
և դրանց բավարարելու միջոցները
ամեն տեղ հավասար պետք է լինեն:

Սա էր Հովհան Ոսկեբերանի հավա-
տո հանգանակը:

Վաղ քրիստոնեության շրջանի
աստվածաբաններից թերևս ոչ ոք այն-
քան խորը չթափանցեց սոցիալական
կյանքի հարցերի մեջ և ի վիճակի չե-
ղավ ճիշտ ըմբռնելու ու հասկանալու
սոցիալական կյանքի ներհակություն-
ներն ու հակամարտությունները, որ-
քան Հովհան Ոսկեբերանը: Նա հան-
դես եկավ ինչպես սոցիալական հա-
վասարության գաղափարի պաշտպա-
նությամբ, այնպես էլ քրիստոնեական
մանկավարժության դիրքերից քննա-
բանեց ու առաջադրեց սոցիալակա-
նացման և սոցիալական դաստիարա-
կության հարցեր:

Նրա ընտրանի ճառերի մեջ իր
առանձնահատուկ տեղն ունի «Երե-
խաների դաստիարակության մասին»
ճառը, որտեղ Նա բարձրացնում է երե-
խաների դաստիարակությունը վաղ
տարիքից սկսելու պահանջը: Բոլոր
առաքինություններից կարևորը, որ Նա
պահանջում էր դաստիարակել երե-
խաների մեջ ի սկզբանե, բարեպաշ-
տությունն էր, հետևապես՝ ծնողները
ոչ թե պետք է մտածեն այն մասին, թե

1. Նույն տեղում, էջ 177-178:

ինչպես իրենց զավակներին արծաթով ու ոսկով հարստացնեն, այլ այն մասին, թե ինչպես նրանք դառնան բոլորից հարուստ իրենց բարեպաշտությամբ, իմաստությամբ և առաքինությամբ, ուրեմն, պետք է ջանադարաբար հետևել նրանց «ներս ու դուրս անելը», նրանց «գրույցներն ու հավաքները» և բացահայտելով, որ դրանք մերժելի են, թույլ չտալ, որ դրանք արմատանան և դառնան բնավորություն: «Չէ որ, – գրում է նա, – եթե մեզնից հաշիվ է պահանջվում ուրիշներին հոգ տանելու համար, իսկ ասված է՝ «ոչ ոք միայն իրենը թող չփնտրի, այլ նաև ընկերոջինը» (Լ. Կորնթ. 10, 24), ապա որքան ավելի է պահանջվելու երեխաների համար»:¹ Մինչդեռ ամեն ինչ անում ենք, որպեսզի մեր երեխաներն ունենան հրաշալի տուն և նյութական այլ բարիքներ, սակայն ամենևին անտեսում ենք և ուշադրություն չենք դարձնում որպեսզի նրանք ունենան լավ հոգի և բարի կամք: Նա քաջ համոզված էր, որ թեկուզև մեկի ունեցածը մեծ ու թանկարժեք լինի, բայց եթե նա պատրաստ չէ դա առաքինաբար տնօրինելու եռանդով, ապա ամեն ինչ կոչնչանա և նրա հետ կվերանա, իսկ երբ հոգին ազնվաբարո է և իմաստությամբ լեցուն, ապա տանը թեկուզ ոչինչ կուտակած չլինի, աներկյուղ կարող է տիրանալ ցանկացած բարիքի: Դաստիարակության մեջ Ոսկեբերանը չէր մերժում պատիժները, իսկ անհրաժեշտության դեպքում նույնիսկ պահանջում էր մարմնական պատիժներ. «Իսկ որ ծնողներից շատերը, – գրում է նա, – շատ բան են քաշում երեխաների ձեռքից, ապա դա

նրանից է, որ չեն ցանկանում քոթակել, խոսքով խելքի բերել և դառնացնել անառակ ու անօրեն կյանքով ապրող իրենց զավակներին, այդ պատճառով քիչ չի պատահում, որ նրանք ականատես են լինում, թե ինչպես են վերջիններս հայտնվում ծայր դժբախտության մեջ, քարշ են գալիս դատարաններում և դահիճները կտրում են նրանց գլուխները»:²

ФАТИМА ДЖИННА

Женский университет
Равалдин, Пакистан

ДОКТОР ШАХЗАДИ ПАКИЗА

Департамент исламских исследований,

Исламские правовые нормативные акты и разнообразные культурные проявления не соответствуют друг другу в мусульманской среде. Мусульманские представления и восприятие привычных традиций следует оценивать по нормативам ислама. С этой целью необходимо внести изменения в режим понимания и межкультурный обмен

идеями в противовес преобладающим сверхкритичным критериям. Таким образом, можно сформировать восприятие для сосредоточения на потребностях и деятельности полов в исламской перспективе. Итак, общий гендерный опыт должен быть проанализирован для определения оценки соответствия нормативным критериям ислама.

ТРАНСЦЕНДЕНТАЛЬНАЯ ПСИХОЛОГИЯ ВОСПРИЯТИЯ И ТРАНСЦЕНДЕНТАЛИЗМ И. КАНТА

В статье с позиций трансцендентальной психологии проведен анализ проблемы адекватности восприятия, на основе которого выводится трехчленное соотношение, определяющее процесс психического отражения. Выявленное соотношение оказалось сходным с соответствующим соотношением трансцендентального познания по И. Канту, известного как «коперниканский переворот». Дальнейший анализ показал, что эти два сходных по структуре соотношения, описывают решение разных взаимодополняющих задач.

Ключевые слова: мир, формопорождение, образ, вещь-сама-по-себе, явление, представление, трансцендентализм, коперниканский переворот.

Теоретические положения трансцендентальной психологии восприятия, основанной А.И. Миракяном [4], [5], [6], [7] позволили по новому понять проблему адекватности психического отражения [8], [9]. В связи с этим выделим некоторые моменты, имеющие отношение к пониманию места психического образа в структуре процесса восприятия и проблемы психического отражения в целом.

Ранее мы уже отмечали, что, несмотря на то, что сознание реагирует не на действительность, а на порожденные образы, связь психики с действительностью существует, и она *обозначена* в перцептивных компонентах восприятия. Мы использовали термин «обозначена», потому что полагаем, что на этом начальном этапе формирования

перцептивных компонентов восприятия еще нет отражения в обычно употребляемом смысле этого слова, и даже невозможна постановка проблемы образа [10], если исходить из традиционного гносеологического соотношения «объект – субъект».

Понятие «образ» В.И. Панов рассматривает как частное проявление гносеологического соотношения «объект – субъект (образ)» [10, с. 106], которое и определяет исследовательскую парадигму, построение предмета и проблемы исследования. А основная характеристика этой парадигмы «...заключается в том, что она начинается с представления о *наличии объекта*» (там же, с. 107). Показывая далее многообразие и противоречивость толкования понятия «объект» в психофизи-

ческом, сетчаточном-моторном, феноменологическом, операциональном и экологическом подходах при изучении проблем восприятия, В.И. Панов приходит к выводу, «... что постепенно в разных исследованиях происходит размывание «объекта» как обязательного компонента отношения «объект – субъект (образ)». И тогда оказывается, что проблемы образа не существует, ибо, если «объект» исчезает, то как же тогда можно говорить о его отражении, как можно исследовать отражение в образе того, чего оказывается в действительности актуально еще не существует?» [там же, с.109].

Мы также пришли к выводу, что соотношение «объект – образ», как структурная схема процесса отражения, не соответствует действительности, показав, к примеру, что в соотношении «цвет – ощущение цвета» отсутствует компонента «цвет» [9]. И так как подход был осуществлен с позиций физики, он не оставляет места для психологических вариаций на тему «что такое цвет (объект)» или «каким образом человек воспринимает цвет» и т.д. Физики скажут, что *цветных* электромагнитных волн просто не существует. В таком случае понятие «отражение» теряет свой первоначальный смысл, предполагающий процесс, приводящий к адекватному или изоморфному уподоблению. Поэтому В.И. Панов прав, ибо мы не можем говорить об образе, как образе *объекта*, существование которого (объекта) «как такового» неопределенно и ставится под сомнение.

Парадоксы и противоречия, возникшие в этой плоскости современной

психологии восприятия, могут быть раскрыты и поняты при обращении к новой парадигме исследования принципов психического отражения, выдвинутой А.И. Миракяном.

Философско-методологический анализ исходных предпосылок исследователей психического отражения позволил А.И. Миракяну выявить общую для них причину, ограничивающую их возможности изучения общих, универсальных закономерностей психического отражения [4]. Для всех этих исследователей оставалось незамеченным то, что при теоретическом и экспериментальном исследовании закономерностей психического отражения они исходили из результатов уже свершившегося акта отражения. Но, как показал анализ исторического опыта изучения процессов отражения, проведенный А.И. Миракяном, реконструкция закономерностей процесса из его результатов невозможна, потому что при таком подходе не могли быть учтены, выявлены и изучены такие важные характеристики процесса, как полифункциональность, гибкость и вариативность восприятия, необходимые человеку и животным для эффективного функционирования в изменяющихся условиях окружающей среды. И если для остальных наук опора на продукты психического отражения была естественным и оправдывающим себя условием изучения закономерностей явлений природы, то для изучения самого процесса отражения такой (физикальный) подход является неправомочным и методологически ошибочным. Однако методология – это следствие

существующей в психологии парадигмы, то есть психологического видения картины мира или же образа мышления, основывающегося на общепринятых постулатах об устройстве мира. Поэтому вполне закономерно, что предложенные А.И. Миракяном афизикальные (не опирающиеся непосредственно на продукты восприятия) принципы процесса отражения исходят из новой, возможно, непривычной картины мира. Характеризуя эту картину мира, А.И. Миракян пишет: «по отношению к еще не свершившемуся акту отражения (еще нереализованной возможности отражения) принимаемое нами бесконечное многообразие материальных форм материи предстает в нерасчленном, однородном виде, как некоторая гомогенность или глобальность. Понятие глобальности здесь вводится для того, чтобы дать представление о неотраженности и указать на ограниченность возможностей отражения в отношении того, что отражается. *Объекты и их свойства как психические формы по логике процесса отражения как формопорождения еще только должны становиться, образоваться, т.е. породиться в процессе отражения* (выделено нами - Р.Н.), который можно трактовать как процесс упорядочивания глобальности, направленный в целом на самосохранение формы и адекватности функционирования живой системы в окружающей среде» [5 с. 39-40]. Из приведенной цитаты можно сделать несколько важных выводов, влияющих на наши представления о мире. Во-первых, в реальности, относящейся к области «еще нереали-

зованной возможности отражения», то есть в реальности, существующей до отражения, нет объектов с их свойствами, а есть материальные формы, составляющие нерасчленную глобальность. Во-вторых, объекты и их свойства появляются как продукты процесса формопорождения, то есть уже как психические явления, показывая этим, что реальность, воспринимаемая человеком, есть не что иное, как порожденные им же самим образы, ощущения, представления и т.д. В-третьих, заметим, что речь идет не об отражении, а о формопорождении, чем подчеркивается мысль о порождении нового, не имеющего сходства (аналога, копии, подобия и тем более тождества) с «отражаемым», тем самым снимая вопрос об адекватности отражения действительности.

Но тогда, о чем можно говорить?

Для начала уточним: из того, что гносеологическая оппозиция «объект – субъект» не соответствует фактам, полученным в психологии и физике, и из чего логически вытекает невозможность существования образа «объекта», еще не следует, что образа вообще нет как явления психической реальности. В сновидениях или, к примеру, при закрытых глазах мы непосредственно имеем дело (осознаем) именно с образами, с которыми можно, а иногда и нужно, работать. Но тогда, где его место в структуре восприятия?

Место образа в структуре восприятия можно определить, учитывая более высокие уровни восприятия, и эту роль места позиции восприятия играет сознание. В рамках традиционной психо-

логии в экспериментальных и теоретических работах, посвященных исследованию процесса восприятия, конечно, учитывается фактор сознания, но не в той мере, в какой, как нам кажется, это было необходимо. Причиной этому, вероятно, было то, что исследователи считали преждевременным обращение к феноменам сознания до тех пор, пока не изучены более «элементарные» процессы восприятия.

Суммируя все вышесказанное и учитывая новые компоненты в структуре процесса восприятия (процесс и продукт формопорождения, сознание), можно предложить другую схему процесса восприятия: «мир – продукт формопорождения – сознание (осознанный образ)». Порождающий процесс восприятия происходит между членами соотношения «мир – продукт формопорождения», который не осознаваем. На этом этапе, соответствующем начальной стадии процесса непосредственно-чувственного восприятия, происходит порождение функционально необходимого продукта, представляющего собой конкретное (расчлененное, выделенное из глобальности) образование с качественно новыми психическими свойствами, не существующими в «физической» реальности. Здесь неправомерно говорить об отражении, адекватности или образе, вследствие чего и пришлось ввести новые термины – «продукт», «формопорождение», «порождающий процесс восприятия» и др. А собственно процесс отражения реализуется в паре «продукт формопорождения – сознание», представляя собой процесс отражения в сознании

продукта, результата процесса формопорождения, проявляющегося в виде уже осознаваемого образа или ощущения. Поэтому можно сказать, что продукт формопорождения является прообразом (прототипом) образа или ощущения, отраженного в сознании, а в этом случае уже можно говорить и об адекватности, и об образе. Необходимо отметить, что можно различить два понятия образа: «образ объекта», которого, как было показано нами и В.И. Пановым, на самом деле не может быть, и «осознаваемый образ», являющийся следствием взаимодействия сознания человека с внешним и/или с внутренним миром. И, как это ни парадоксально, именно этому последнему понятию образа приписывается статус объекта, объективно существующего вне сознания в окружающей человека действительности. Можно также предположить, что именно на этой стадии отражения в сознании прообраз (продукт формопорождения) претерпевает определенные искажения и ограничения (деформации по Д.А. Ошанину), тем самым создавая предпосылки, как для увеличения, так и для уменьшения эффективности жизнедеятельности человека.

Таким образом, согласно этой трехчленной структуре восприятия, между миром и сознанием расположены образы и поэтому сознание непосредственно реагирует не на мир, а на порожденные образы, принимая их за объекты, существующие вне и внутри человека. А это означает, что для всякого живого существа реальность – это всегда уже *воспринятая* реальность,

порожденная в результате взаимодействия живого существа с природой или с более «глубокой реальностью». Однако именно эта реальность – воспринятая, уже отраженная – принимается человеком за действительность, что в частном случае может являться одной из *психологических* причин смены старых и рождения новых научных парадигм, внешняя сторона которых подробно рассмотрена Т. Куном при исследовании структуры научных революций. С другой стороны, то, что каждый человек (или животное) воспринимает реальность по-своему, принимает за действительность и поступает сообразно этой действительности, указывает на существование психологического релятивизма реальности, то есть зависимости устройства и организации «действительности» от уникальных, неповторимых способностей восприятия каждого живого существа и человека, независимо от перспективы рассмотрения этих способностей: вертикальной – в филогенезе, историческом развитии, онтогенезе, или горизонтальной – как существующих в настоящее время. Таким образом, приходит осознание того, что мир (реальность, действительность, природа) для разных систем отражения теряет статус абсолютной бытийности, абсолютного существования.

К сказанному можно привести метафорическую аналогию.

В горах Армении есть церковь, которая примечательна тем, что она целиком вырублена в скале. Незвестный автор этого фантастического творения начал свою работу с вершины

скалы, прорубил верхний свод, затем, углубляясь все дальше и ниже в скалу, оставлял за собой монолитные своды, арки, колонны, каменные украшения и стены, ограничивающие пространство просторного помещения. Взаимодействие «скульптора» с «гомогенной глобальностью» скалы привело к порождению его мира, соответствующего его желаниям и способностям, в котором он мог функционировать так, как хотел. Разница между нашим восприятием, в основе которого так же, как и у «скульптора», лежит процесс формопорождения, и работой «скульптора» заключается в том, что он понимал, что является творцом своего мира, а мы этого не сознаем, или точнее, не успеваем осознавать, потому что психика творит мир мгновенно. И если бы была возможность сжать десятилетия тяжелейшего труда «скульптора» в одно мгновение, то упорядочивание им «глобальности» скалы в церковь было бы сравнимо с эффектом психического отражения.

Другой «скульптор» на том же месте или в другой скале с *такой же* «гомогенной глобальностью» прорубил бы другую «церковь» с монолитными сводами, арками, колоннами и стенами, подчиняющимися законам другой геометрии, и это был бы его мир, соответствующий его желаниям и способностям творить и функционировать. Таким образом, два мира, порожденные разными людьми из одной и той же «физической» реальности, оказываются разными, и понятно, что таких миров может быть столько, сколько существует живых существ. И при этом

нельзя сказать, что один из этих миров истинный, а другой искаженный, потому что ни о каком истинном, независимом от человека (или субъекта отражения) мире нельзя ничего сказать – *все они являются уже воспринятыми (порожденными), и для каждого человека (и живого существа) это единственно возможная и «истинная» действительность*, существующая не только для него, но и для всех остальных людей.

Точно так же можно сказать и о дальтониках: нельзя утверждать, что у них искаженное восприятие действительности, а у «нормальных» людей адекватное или «истинное». Восприятие ими мира зависит от особенностей функционирования их отражательных систем, и ни одна из этих систем не имеет преимуществ перед другими, если речь идет об «истинности» или адекватности отражения реальности. Есть лишь *предполагаемая* «гомогенная глобальность» или «физическая» реальность, из которой каждое живое существо благодаря уникальной, присущей только ему порождающей системе создает свой субъективный мир, в котором оно функционирует, как в реально существующей действительности. Не только эволюция мира приводит к появлению психики и сознания, но и психика создает мир, в котором она и реализует свой потенциал.

Выше приведенная трехчленная структура процесса восприятия вместе с представлениями А.И. Миракяна об особенностях реальности до отражения (реальность отсутствующего) во многом совпадают с трансцендентализмом

И. Канта, развитом в «Критике чистого разума». В отличие от своих предшественников, трансцендентальный сдвиг, осуществленный И. Кантом, определяется им же следующим образом: «Я определяю трансцендентальным всякое познание, занимающееся вообще не столько самими предметами, сколько способом нашего познания предметов, поскольку оно должно быть возможным аргіогі» [1, с. 25]. Таким образом, автор совершает переход от непосредственного познания предметов к способам их познания, но не в субъективно-психологическом смысле (например, методом дедукции), а в когнитивно-семантическом «как решение проблемы *объективности* априорных представлений, т.е. возможности их использования в опыте» [3, с. 38]. Кант стремился ответить на вопрос: «на чем основывается отношение того, что мы называем представлением в нас, к предмету» [2, с. 487] и считал это «ключом ко всей тайне метафизики» (там же). То есть Кант отвечал не на вопрос, что такое метафизика, а на то, как она возможна. В решении этого вопроса для кантовского трансцендентализма решающим оказывается различие вещи-самой-по-себе от явления, принципиально отличающееся от наивного реализма предшествующей метафизики. А с учетом соотношения «предмет – представление» И. Кант осуществляет «коперниканский переворот», связанный с переходом к концептуальной триаде «предмет (вещь-сама-по-себе) – явление – представление», объединяющая в себе эмпиризм (Локк), постулирующий вектор познания «от

предмета к представлению», и рационализм (Декарт), постулирующий вектор познания «от представления к предмету». Однако это не простая сумма двух альтернативных подходов, так как, согласно идее «коперниканского переворота», априорным представлениям подчиняются не предметы (как вещи-сами-по-себе), а явления (предметов) как предметы опыта.

Если теперь сопоставить триаду И. Канта с приведенной выше трехчленной структурой восприятия, то можно отметить не только их структурное сходство, но и сходство по сдержанию. Так «миру» в одной схеме, понимаемому как нерасчлененная гомогенность или глобальность, соответствует «вещь-сама-по-себе» в другой схеме, «продукту формопорождения» соответствует «явление», а «образу» – «представление».

Обнаруженное сходство позволяет сделать следующие выводы. Во-первых, так как приведенные выше для сравнения соотношения получены совершенно разными путями, с ис-

пользованием разных логических подходов, то их сходство указывает на некоторую объективность (истинность) результатов, полученных теоретически в философии и психологии. Во-вторых, несмотря на сходство этих двух соотношений, они предназначены для решения разных задач: для И. Канта это решение гносеологической задачи, поэтому для него было важно осмысление самих понятий и логических соотношений между ними, в связи с поставленной им задачей, а для нас важен психологический аспект этих соотношений, поэтому мы вновь возвращаемся к онтологии и хотим понять те принципы и процессы, которые позволяют совершить переходы от первого члена соотношения ко второму и взаимопереходы между вторым и третьим членами соотношения. Ясно и другое: сходство этих двух соотношений, выявленных в философии и психологии, требует дальнейшей теоретической разработки, осмысления и глубокого анализа.

Литература

1. Кант И. Критика чистого разума // Кант И. Сочинения в 8-ми т.т. Т.3. М.: Чоро, 1994.
2. Кант И. Избранные письма // Кант И. Сочинения в 8-ми т.т. Т.8. М.: Чоро, 1994.
3. Катречко С.Л. Кантовский трансцендентализм и его концепт вещи-самой-по-себе // Трансцендентальный поворот в современной философии: метафизика, теория опыта, теория сознания. Матери-
4. Миракян А. И. Полифункциональность и константность восприятия. Дисс. док. псих. наук. М., 1987.
5. Миракян А.И. Афизикальные принципы психического отражения и их моделирование // Принципы порождающего процесса восприятия (коллективная монография) под ред. А.И. Миракяна. М., 1992. – с. 9-46.

6. Миракян А.И. Контуры трансцендентальной психологии. Кн. 1. М.: изд. ИП РАН, 1999.
7. Миракян А.И. Контуры трансцендентальной психологии. Кн.2. М.: изд. ИП РАН, 2004.
8. Нагдян Р.М. Психологический релятивизм реальности. Ер.: изд. «Сарвард», 2007.
9. Нагдян Р.М. Загадка психики. Трансцендентальная психология и метафизика, Ер.: изд. «Лусабац», 2017.
10. Панов В.И. От проблемы образа к проблеме формопорождения, В сб. «Образ в регуляции деятельности». М.: Российское психологическое общество, 1997. – с. 101-112.

ԸՆԿԱԼՄԱՆ ՏՐԱՆՍՑԵՆԴԵՆՏԱԼ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ Ի. ԿԱՆՏԻ ՏՐԱՆՍՑԵՆԴԵՆՏԱԼԻՉՄԸ

ՌՈՒԲԵՆ ՆԱԴԴՅԱՆ

«Հ գիտությունների ազգային ակադեմիա
Գիտա-կրթական միջազգային կենտրոն
հոգեբանության ամբիոնի դասախոս»

Հոգվածում տրանսցենդենտալ հոգեբանության տեսանկյունից վերլուծության է ենթարկվել ընկալման համարժեքության խնդիրը, ինչի հիման վրա դուրս է բերվում եռանդամ հարաբերակցություն, որը որոշակիացնում է հոգեկան արտացոլման գործընթացը: Բացահայտված հարաբերակցությունը պարզվեց, որ նույնական է Ի. Կանտի տրանսցենդենտալ ճանա-

չողության համապատասխան հարաբերակցությանը, ինչը հայտնի է որպես «կոպերնիկյան հեղաշրջում»:

Հետագա վերլուծությունը ցույց տվեց, որ այդ երկու հարաբերակցությունները համապատասխան են կառուցվածքով և նկարագրում են տարբեր փոխլրացնող խնդիրների լուծումը:

TRANSCENDENTAL PSYCHOLOGY OF PERCEPTION AND TRANSCENDENTALISM I. KANT

RUBEN NAGHDYAN

National Academy of Sciences of the RA
International Research and Education Center
Lecturer of the Department of Psychology

The article analyses the problem of the adequacy of perception from the standpoint of transcendental psychology. On the basis of the analysis a three-term relationship is derived which determines the process of mental reflection. The revealed correlation turned out to be

similar to the corresponding ratio of transcendental cognition according to I. Kant, known as the «Copernican revolution». Further analysis showed that these two relationships are similar in structure and that they describe the solution of various complementary tasks.

ՄԱՆՈՒԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր

ՍՈՆԱ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի սոցիալական
փիլիսոփայության բաժնի հայցորդ

ԻՐԱԶԵԿՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Հոդվածում կենսաբարոյագիտության տեսանկյունից քննարկվում են իրազեկված համաձայնության սկզբունքի կիրառման որոշ առանձնահատկությունները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. իրազեկված համաձայնություն, որոշումներ ընդունելու անձի իրավասություն, փորձեր ինքն իր վրա, փորձեր կամավորների վրա, բռնի փորձարկումներ, խոթելի փորձարկվող, թերապևտիկ փորձարարություն:

Կենսաբարոյագիտության մեջ ազատության հիմնախնդիրն արտահայտվում է առաջին հերթին «իրազեկված համաձայնություն» հասկացությամբ: Այս եզրույթը ձևավորվել է Նյուրնբերգյան դատավարության ժամանակ, երբ առաջին զինվորական տրիբունալի ընթացքում Գերմանիայում ծագեց «բժշկական փորձերի մեջ ներգրավված անձի ինքնակամ համաձայնություն» իրավաբանական հասկացությունը: Քանի որ ամերիկյան իրավական համակարգում որոշիչը նախադեպի սկզբունքն է, այն սկսել է կիրառվել ամերիկյան դատավարական պրակտիկայում՝ բժշկական սխալների և անփույթ բուժմամբ պատճառված վնասի վերաբերյալ գործերում: Արդյունքում այդ հասկացությունը փոխակերպվել է, և 1950-1960-ական թվականներին անմիջականորեն

ի հայտ եկավ «իրազեկված համաձայնություն» եզրույթը: Ներկայումս այն նշանակում է բժշկական էթիկայի և բժշկական իրավունքի ամենակարեվոր սկզբունքներից մեկը, որի համաձայն՝ մարդը իր մարմնի, իր կենսագրության միակ տերն է: Առանց նրա գիտակցված կամավոր թույլտվության ոչ մի միջամտություն՝ ոչ բուժական, ոչ ախտորոշման, ոչ կանխարգելման, ոչ առավել ևս փորձարարական, չի կարող իրականացվել:

ԱՄՆ-ում իրազեկված համաձայնության սկզբունքի խախտումը դիտվում է որպես գործողությամբ վիրավորանք և ֆիզիկական վնաս հասցնել: Դա վերաբերում է և՛ այն իրավիճակներին, որոնք կապված են հիվանդի լուրջ վիրահատության անհրաժեշտության հետ, և՛ հիվանդին նախատեսվող բուժման և բուժամիջոցների մասին պար-

տաղիր կերպով հայտնելու հետ:¹

Իրազեկված համաձայնության վերլուծությունը անհրաժեշտաբար ենթադրում է հետևյալ երկընտրանք. մարդն ունի ինքնուրույն ընտրության իրավունք, բայց մարդասիրական է արդյոք թույլ տալ կատարել ինքնուրույն ընտրություն հոգուտ այն բանի, ինչը վնաս է իրեն կամ շրջապատին:²

Հիվանդի իրազեկված լինելը ենթադրում է, որ նա գիտի՝

- իր հիվանդության բնույթի մասին,
- բուժման ձևերի և մեթոդների մասին, որ նրան առաջարկվում է,
- այդ բուժման հետ կապված ռիսկերի մասին,
- նշյալ բուժման հնարավոր այլընտրանքների մասին,
- առողջանալու հեռանկարների մասին:

Իրազեկված համաձայնությունը պարտավորեցնում է բժշկին, նախ՝ հաշվի առնել հիվանդի հուզական-հոգեբանական վիճակը, կրթվածության աստիճանը, նրա ազգային հոգեկերտվածքի յուրահատկությունները և կրոնական համոզմունքները, երկրորդ՝ լինել նրբանկատ, երրորդ՝ տեղեկատվությունը հաղորդել այնպես, որ հասկանալի լինի:

Կամավոր համաձայնությունը լուրջ խնդիր է պարունակում, թե որքանով է ընկալելի բուժանձնակազմի կողմից մատուցվող տեղեկատվությունը հիվանդի համար: Հիվանդների մեջ քիչ են բժշկական կրթությամբ մարդիկ:

Բայց եթե նույնիսկ հիվանդը չի տիրապետում բժշկական գիտելիքների, նրա կյանքի փորձը, իր օրգանիզմի և խառնվածքի յուրահատկությունների, հեռանկարների ու ծրագրերի իմացությունը կարող են ոչ պակաս ծանրակշիռ լինել բժշկական որոշում կայացնելիս, քան դիպլոմավոր բժշկի հեղինակությունը: Հիվանդությունը ոչ միայն կենսաբանական, այլև կենսագրական փաստ է, ուստի հիվանդի կարծիքը չի կարող հաշվի չառնվել: Այսպիսով՝ իրազեկված համաձայնությունը նպաստում է սեփական ճակատագիրն ինքնուրույն տնօրինելու հիվանդի իրավունքի իրացմանը:

«Իրազեկված համաձայնություն» եզրույթը առավել հաճախ հնչում է կենդանի էակների, այդ թվում՝ մարդկանց վրա կլինիկական և բժշկա-կենսաբանական փորձերի հետ կապված հարցերի քննարկման ժամանակ: Այդ հարցերը ոչ մեկ անգամ են դարձել վեճերի ու բանավեճերի առարկա ինչպես գիտնականների, այնպես էլ հասարակայնության շրջանում: Այսպես օրինակ՝ Ի. Ի. Մեչնիկովը «Գիտությունը և բարոյականությունը» հոդվածում գրում է մարդկանց և կենդանիների վրա փորձերի հետ կապված բարոյական խնդիրների բարդության մասին: «Փորձարարական կենսաբանությունը, որի վրա հիմնվում են այս գրքում շարադրված բազմաթիվ տեսություններ, նյութ է առնում կենդանիների հերձումից: Մինչդեռ մեծ թվով մարդիկ անբարոյականություն են համարում կենդանի արարածների վրա փորձեր կատարելը

1. Покуленко Т.А. Принцип информированного согласия: вызов патернализму. Вопросы философии, 1994, №3, с. 73-76.
2. Келли М. Границы ответственности пациента. – Бюллетень сибирской медицины. Том 5. – №5, 2006, с. 67-78.

առանց վերջիններիս համար անմիջական օգուտի: Էլ ավելի բարդ է մարդու վրա փորձերի հարցը»:¹

Անտիկ շրջանից սկսած՝ այս բանավեճում ներգրավվածների մեծ մասը այն կարծիքին է, որ կենդանիների վրա փորձերը թույլատրելի են, եթե դրանք նպաստում են իրական արդյունքի հասնելուն և չեն կարող փոխարինվել այլ հետազոտության մեթոդներով: Այլ է մարդու պարագան:

Դեռ հին հռոմեացի բժիշկ և գիտնական Յելսիուսը (Ք. ա. I դար) քննարկում էր կենդանի արարածների, այդ թվում՝ մարդու վրա փորձերի թույլատրելի-անթույլատրելի լինելու հարցը: Նա ինքը դեմ էր և իր դիրքորոշումը հիմնավորում էր գիտական նպատակահարմարությամբ: Նրա կարծիքով՝ արհեստական վնասից տանջվող օրգանիզմը չի կարող լինել կենսական երևույթների ու պրոցեսների մասին օբյեկտիվ տեղեկատվության աղբյուր:

Նոր ժամանակաշրջանի եվրոպական գիտության մեջ մարդկանց վրա բժշկական հետազոտությունների էթիկական սահմանների մասին հարցը բարձրացրեց փորձարարական բժշկության հիմնադիրներից մեկը՝ Կ. Բեռնարը («Դասախոսություններ փորձարարական ախտաբանության մասին», 1969): Նրա կարծիքով՝ մարդկային կյանքը անձեռնմխելի է, և անթույլատրելի է վնաս հասցնել մարդուն, եթե անգամ դա տալիս է գիտությանը նոր, նրա համար չափազանց կարևոր գիտելիքներ: Մարդկանց վրա փորձերը, ըստ գիտնականի, հակասում են և բարոյական օրենքներին, և բժշկության սոցիալական նշանակությանը,

բայց մյուս կողմից՝ առանց փորձերի հնարավոր չէ զարգացնել բժշկությունը. Բեռնարը հասկանում էր այդ և դրանով արդարացնում գիտափորձերը կենդանիների վրա:

Բժշկության պատմության մեջ գոյություն է ունեցել նաև այլ տեսակետ: Օրինակ՝ անտիկ գիտնական Էրագիստրատոսը, որն ապրել է Ք. ա. III դարում, փորձեր էր կատարում ինչպես կենդանիների, այնպես էլ ստրուկների վրա, և համարում էր դա միանգամայն թույլատրելի: Հազիվ թե նրա համար արդարացում կարող է լինել այն, որ այդ ժամանակներում ստրուկներին համարում էին միջանկյալ օղակ կենդանիների ու մարդկանց միջև:

Պատմությանը հայտնի է մարդու վրա փորձերի մի քանի ձև:

Փորձեր ինքն իր վրա: Հաճախ գիտնականները կամ բժիշկները իրենք իրենց վրա փորձել են բուժման ինչ-որ մեթոդ կամ դեղամիջոց՝ նախքան օգտագործելու համար մարդկանց տալը: Դեռ մեծ փիլիսոփա Մովսես Մայմոնիդը XII դարում համոզում էր իր աշակերտներին ստուգել դեղամիջոցների արդյունավետությունը առաջին հերթին իրենց վրա: Կարելի է հիշել նաև որոշ դրվագներ XIX դարից: Եվսեբիոս Վալլիացին ինքն իրեն ներարկում արեց ծաղկափոշու շարավի խառնուրդից, Դեջենեթը ներարկում արեց իրեն ծաղկային ժանտախտի դեմ, Պետտենկոֆերը կոլ սովեց խուլերային բացիլներ, Վերներ Ֆորսմանը փորձարկեց իր վրա սրտի կատետորը և այլն: Նման օրինակներ բժշկության պատմությանը բավականին շատ են հայտնի: Ռուս փիլիսոփա, սոցիոլոգ,

1. Мечников И. И. Наука и нравственность, – с. 253.

տնտեսագետ, քաղաքական գործիչ, գիտնական-փորձարկող, ականավոր արյունաբան և ծերաբան Ա. Ա. Բոգդանովը, որ երկար տարիներ որպես տնօրեն պաշտոնավարել է իր իսկ հիմնադրած՝ աշխարհում առաջին Արյան փոխներարկման ինստիտուտում, մահացել է իր վրա արյան փոխներարկման փորձի հետևանքով:

Փորձեր կամավորների վրա: Արևմուտքում առաջին փորձը, որին մարդիկ համաձայնել են գիտակցաբար, ծաղիկ հիվանդության դեմ պատվաստումն էր, որը նախաձեռնել է բժիշկ Էդուարդ Ջենները XVIII դարի վերջին: Ջորջ Օլիվերը, մի շարք հետազոտություններ իրականացնելով իր որդու վրա՝ վերջինիս համաձայնությամբ, հայտնագործեց աղբենալինը: Պրոֆեսոր Դենիսի աշակերտը համաձայնեց իրեն գառնուկի արյան փոխներարկմանը:

Բազմաթիվ կլինիկական փորձեր են կատարվել կամավորների վրա: Հաճախ բժիշկները փորձերը կատարում էին մերձավորների վրա: Այսպես, պատվաստման հիմնադիր Է. Ջենները ինքն իրեն, որդուն և հարևանների երեխաներին ներարկեց «կովի» և «խոզի» պատվաստանյութ, որն անվտանգ էր մարդու օրգանիզմի համար, բայց օժտում էր սև օսպայի նկատմամբ իմունիտետով: Արդյունքում նա փորձեր կատարեց նաև այլ մարդկանց վրա և նույնիսկ Անգլիայի թագուհու: Ինչպես հայտնի է, այս մեթոդը հետագայում փրկեց միլիոնավոր կյանքեր և ներառվեց բժշկական ամենօրյա պրակտիկայում:

Բռնի փորձարկումներ: Այստեղ առաջին հերթին խոսքը մահվան դա-

տապարտվածների վրա փորձերի մասին է: Ք. ա. V դարում բժիշկ Հերոֆիլը մարդու կազմաբանությունն ու կազմախոսությունը ուսումնասիրելու նպատակով զբաղվում էր այն դատապարտյալների վիվիսեկցիայով (հերձմամբ), ում պատրաստվում էին գլխատել: Վիվիսեկցիան (լատ. vivus - ողջ, section - կտրել) ողջ մարդու կամ կենդանու վիրահատումն է, օրգանիզմի գործառույթները, դրա վրա տարբեր նյութերի ազդեցությունը ուսումնասիրելու և բուժման մեթոդներ մշակելու նպատակով: Հայտնի են դեպքեր, երբ Վերածննդի դարաշրջանում որոշ հիվանդություններ հետազոտելու համար իշխանությունների թույլտվությամբ ներգրավում էին մահապարտներին: Օրինակ՝ նման դժբախտների վրա, նախապես քնննելով նրանց, Լեոնարդո Ֆլորավանտին հետազոտում էր ժանտախտի տարածումն ու ախտանիշները: Ներկայումս որոշ երկրներում մահվան դատապարտվածների վրա կատարվում են նրանց կյանքի համար վտանգավոր փորձեր՝ խոստանալով ազատություն դրական ելքի դեպքում: Խորհրդային շրջանում նման պրակտիկա գոյություն է ունեցել Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատում (ՆԳԺԿ)-ում: Օրինակ՝ բժշկական ծառայության գնդապետ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Մ. Մայրանովսկին (1899-1964), այն բանից հետո, երբ նրա հետազոտական խումբը 1937 թ. Կենսաքիմիայի ինստիտուտի ենթակայությունից հանձնվեց ՆԳԺԿ-ին, սկսեց թույների փորձեր կատարել գնդակահարության դատապարտվածների վրա:

Պ. Դ. Տիշչենկոյի կարծիքով, մարդ-

կանց վրա բռնի փորձեր կատարելու գլխավոր շարժառիթներից մեկը «պատերազմի էթոսն» է¹: Պատերազմն ինչ-որ իմաստով «արդարացնում» և «վեհացնում» է նման գործողությունները. «Ոչ կամավոր փորձարկվողների առողջությունը, իսկ երբեմն նաև կյանքը զոհաբերվում է հայրենյաց զոհասեղանին, և նմանօրինակ զոհաբերությունները ամենուր ընկալվում են որպես արդարացված»²: Քանի որ պատերազմը մարդկության հարատև վիճակն է, բժիշկները դառնում են այն վարելու միջոցներ մշակելու համասանակիցներ:

Պատմության մեջ հատուկ տեղ են գրավում նացիստական համակենտրոնացման ճամբարներում պահվող կալանավորների վրա կատարվող փորձերը: Ինչպես վկայում են Նյուրնբերգյան դատավարության գործերը, գերված լեհերը, ռուսները, հրեաները, իտալացիները դաժան փորձերի էին ենթարկվում նրանց վրա թույների, քիմիկատների, դեղորայքի, գազի ազդեցությունը ստուգելու նպատակով: Կալանավորների վրա մահացու փորձեր էին կատարվում արհեստականորեն ստեղծված ցածր ջերմաստիճանների պայմաններում՝ ցրտահարման պրոցեսը ուսումնասիրելու համար, կամ բարոխիսիկներում՝ մեծ բարձրության վրա մարդու գտնվելը հետազոտելու համար: Փորձարկվողների թվում էին երեխաները, ծերերը, հղի կանայք: Սարսափելի օրինակների շարքը կարելի է շարունակել շատ երկար: Ամերիկայում՝ ի հիմնավորումն մարդու վրա փորձեր կատարելն արգելելու, հղում

են անում առաջին հերթին այդ դատավարությանը և դրա արդյունքում մշակված իրավաբանական դրույթներին:

Յավոք, մենք չենք կարող ասել, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո բժշկության պատմության այդ սարսափելի էջը վերջնականապես փակվել է: Կալանավորների, հոգեկան հիվանդների, սոցիալապես խոցելի հիվանդների վրա անօրինական բժշկական փորձեր շարունակել են իրականացվել. նման դեպքեր են արձանագրվել ԱՄՆ-ում և այլ երկրներում, այդ թվում՝ ԽՍՀՄ-ում: Համաշխարհային պատմության այս ողբերգական էջն էլ հենց ստիպեց մտածել գիտնականների պատասխանատվության և պետության ու հասարակության կողմից նրանց գործունեությունը վերահսկելու անհրաժեշտության մասին:

Արդյունքում միջազգային և ներպետական մակարդակներում ստեղծվեցին բազմաթիվ նորմատիվային փաստաթղթեր, որոնք պաշտպանում են մարդու կյանքը, իրավունքներն ու արժանապատվությունը կենսաբանության ու բժշկության բնագավառներում: Դրանց թվում են՝ Նյուրնբերգյան օրենսգիրքը (1947), Հելսինկյան հռչակագիրը (1964), Եվրոպայի տնտեսական համագործակցության դիրեկտիվները (1965, 1975), Միջազգային էթիկական հրահանգները, որոնք առնչվում են մարդկանց վրա կատարվող կենսաբժշկական հետազոտություններին (1993), Կենսաբանության և բժշկության մեջ մարդու իրավունքների

1. Тищенко П. Д. Жизнь и власть: био-власть в современных структурах врачевания // Биоэтика и гуманитарная экспертиза. М.: ИФРАН, 2010.– с. 45.

2. Նույն տեղում:

և մարդ արարածի արժանապատվության պաշտպանության մասին կոնվենցիան (1997), Կենսաբարոյագիտության և մարդու իրավունքների մասին կոնվենցիան (2005):

Մի կողմից՝ գիտենք, որ մարդու վրա կատարվող փորձերը նպաստում են գիտության զարգացմանը: Բացի դրանից՝ երբեմն նման փորձերն անհրաժեշտություն են, օրինակ՝ որևէ դեղամիջոց չի թույլատրվում օգտագործել բուժման նպատակով առանց մի շարք փորձարկումների, այդ թվում և մարդկանց ներգրավմամբ: Երբեմն փորձը համընկնում է բուժման ընթացքի հետ և վերջին հնարավորություն է դառնում կյանք փրկելու (դա, այսպես կոչված, «թերապևտիկ փորձարարությունն է»): Օրինակ՝ ֆրանսիացի գիտնական, ժամանակակից միկրոկենսաբանության և իմունաբանության հիմնադիր Լուի Պաստերը (1822-1895), որ մշակել է հավի խոլերայի, սիբիրյան խոցի, կատաղության դեմ գործնական պատվաստման մեթոդը, կատաղության դեմ փորձնական պատվաստանյութ է ներարկել մի տղայի, որին այլ կերպ փրկել հնարավոր չէր:

Մյուս կողմից՝ միշտ հարց է ծագում՝ մարդասիրական է արդյոք վտանգել մարդու առողջությունն ու նույնիսկ կյանքը, թույլատրելի է արդյոք արդարացնել միջոցները նպատակով, եթե միջոց է դառնում կենդանի մարդը: Ինչ մակարդակի է բարոյականությունը հասարակության մեջ, որը պատրաստ է ընդունել նման զոհողություններ, թեկուզ և ի շահ գիտության հաղթանակի և բժշկության առաջընթացի: Օրինակ՝ նացիստական Գերմանիայում մարդկանց վրա փորձերը պատճառաբան-

վում էին բարձր գիտական նպատակներով, որոնց հետևում թաքնվում էին պետական շահի նկատառումները:

Մարդը, որը պատրաստ է ինքնազոհությամբ կամավոր օժանդակելու գիտական առաջընթացին, արժանի է հասարակության հարգանքին, իսկ պետությունը պետք է մշակի փորձի հետևանքով պատճառված բարոյական ու նյութական վնասի փոխհատուցման գործուն մեխանիզմներ: Անշուշտ, մարդու վրա կատարվող փորձերն արդարացված են միայն այն դեպքում, երբ, նախ և առաջ, փորձարկվողի կյանքին ու սոցիալական բարեկեցությանը սպառնացող վտանգի աստիճանը չի գերազանցում նախատեսված արդյունքների գիտական նշանակալիությանը, երկրորդ՝ գիտելիքների հարստացումը հնարավոր չէ այլ եղանակով (կենդանիներ, արհեստական մոդելներ, համակարգչային մոդելավորում օգտագործելով, գիտական գրականություն ուսումնասիրելով):

Վերջին ժամանակներս ժամանակակից գիտության մեջ սկսել է գործառվել “watch no touch” (watch - անգլ. հետևել, դիտել, touch - անգլ. հպում, շփում, շոշափում) սկզբունքը, որն ուղղված է նվազեցնելու փորձարկողի բացասական ներգործությունը հետազոտվող օբյեկտի վրա: Փորձեր կատարելու համակարգչային մեթոդի զարգացման շնորհիվ շատ դեպքերում հնարավոր է դարձել խուսափել կենդանի օրգանիզմի վրա անմիջական ներգործությունից: Իրազեկված համաձայնության սկզբունքը գործում է փորձի ամբողջ ընթացքում, այսինքն՝ բոլոր փուլերում հիվանդին մատչելի է մնում

ամբողջ տեղեկատվությունը, ինչը վերաբերում է նրա վիճակին և կատարվող հետազոտության արդյունքներին: Ցանկացած փուլում հիվանդը կարող է հրաժարվել փորձարկման օբյեկտ լինելուց, դրանով հանդերձ պահպանելով որակյալ բուժօգնություն ստանալու բոլոր իրավունքները: Այսպիսով՝ իրազեկված համաձայնությունը թեկուզ և չի վերացնում մարդուն որպես գիտական նվաճումների միջոց օգտագործելու հնարավորությունը, բայց ծայրահեղ դեպքում երաշխավորում է, որ փորձի ընթացքում վերջնական որոշումը չպարտադրվի, այլ լինի ազատ անձնական ընտրության արդյունք:

Փորձերը (բացի թերապևտիկ փորձարարությունից) անթույլատրելի են մտավոր հետամնացների, մահացողների, սաղմի վրա, քանի որ նրանք չեն կարող տալ իրենց համաձայնությունը, անգամ եթե կարողանան, ապա այդ համաձայնությունը չի կարելի իրավաբանորեն որակել որպես «իրազեկված»:

Գոյություն ունի «խոցելի փորձարկվող» հասկացություն, որն օգտագործվում է նրանց առնչությամբ, ում մասնակցությունը փորձին պայմանավորված է կամ կախյալ վիճակով (կալանավորներ, հոգեկան հիվանդներ, անօթևաններ, անչափահասներ, անգործունակներ, զինձառայողներ և այլք), կամ ղեկավարության պատժամիջոցներից վախով, կամ փորձին մասնակցելու դիմաց որոշակի արտոնություններ ստանալով (կլինիկաների

ու լաբորատորիաների անձնակազմը, բուժհաստատություններում սովորողները և այլք): Օրինակ՝ XVIII դարում Ֆրանսիայում, Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակաշրջանում, ստեղծվում էին բուժարաններ աղքատների համար, որոնք ի վիճակի չէին վճարելու բուժման համար: Որպես վարձ ստանում էին փորձարկվող դառնալու նրանց համաձայնությունը: Նման կերպ էր իրականացվում հասարակական «բարերարությունը»: Բ. Գ. Յուդինը նշյալ հիմնախնդիրը ձևակերպում է հետևյալ կերպ. «Ինչի հիման վրա կարելի է կլինիկական հետազոտության օբյեկտի վերածել այն հիվանդին, որը աղքատ լինելու պատճառով հարկադրված օգնություն է խնդրում հիվանդանոցում: Այդ աղքատները, մի կողմից, պարտավորություն ունեն հասարակության առջև, մյուս կողմից՝ նրանք անպատասխանատու են, և երրորդ, որը չափազանց էական է, կլինիկայում նրանց թիվը մեծ է, ուստի դա սկզբունքորեն հնարավորություն է տալիս ստանալու վիճակագրորեն հավաստի տվյալներ»:¹

Ամեն դեպքում մարդկանց վրա փորձեր կատարելը միշտ հակասություններ է պարունակում. բժշկությունն ու գիտությունը առավել բարձր պետք է դասեն մարդու բարօրությունը, նրա շահերը, իսկ փորձերը միշտ ստորադասում են մարդու բարօրությունը նոր գիտելիքներ ստանալուն: Գիտության առաջընթացի շահերը գերադասվում են առանձին անձի շահերից:

1. Юдин Б.Г. Биомедицинские исследования как объект философского осмысления //Биоэтика и гуманитарная экспертиза. М.: ИФРАН, 2009. – с. 14-15.

ПРИНЦИП ИНФОРМИРОВАННОГО СОГЛАСИЯ И НЕКОТОРЫЕ ЭТИЧЕСКИЕ ВОПРОСЫ ЭКСПЕРИМЕНТАЛЬНОЙ МЕДИЦИНЫ

МАНУК АРУТЮНЯН

Доктор философских наук

СОНА ДАВТЯН

Соискатель Института философии,
социологии и права НАН РА

В статье рассмотрены некоторые этические проблемы экспериментальной медицины. Основная направленность исследования – раскрытие слож-

ной и противоречивой сущности влияния принципа информированного согласия на эксперименты в области медицины.

PRINCIPLE OF INFORMED CONSENT AND SOME ETHICAL ISSUES OF EXPERIMENTAL MEDICINE

MANUK HARUTYUNYAN

Doctor of philosophy

SONA DAVTYAN

Applicant at the Institute of philosophy,
sociology and law of NAS RA

The article addresses some of the ethical problems of experimental medicine. The main focus of the research is the disclosure of the complex and

contradictory nature of the influence of the principle of informed consent on the experiments in the field of medicine.

ԱՄՆ ՊԵՏԱԿԱՆ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԽՈՒՄԲԸ (THE INQUIRY) ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ (1917-1919 թթ.)

Հանգուցային բառեր. Վուդրո Վիլսոն, ԱՄՆ, The Inquiry, Առաջին աշխարհամարտ, Փարիզի խաղաղության վեհաժողով, Խաղաղության Բանակցությունների Ամերիկյան Հանձնաժողով, Օսմանյան կայսրություն, Հայկական հարց, Արևմտյան Հայաստան, վեց հայկական նահանգներ, Կիլիկիա, Միջերկրական ծով, Սև ծով, Հայաստանի պետություն, Պողոս Նուբար, 14 կետեր, Ամերիկայի Միացյալ Նահանգների Կոնգրես, Ազգերի լիգա, Բոսֆորի և Դարդանելի նեղուցներ, Էդուարդ Հաուզ, Ֆրանկ Ֆրոստ Աբոտ, Միացյալ Թագավորության վարչապետ Դեյվիդ Լոյդ Ջորջ:

1917 թվականի սեպտեմբերին ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը ստեղծեց պետական փաստահավաք խումբ (The Inquiry), որի կազմում էին Միացյալ Նահանգների տարբեր ոլորտների լավագույն մասնագետները: Խմբի նպատակն էր՝ մանրակրկիտ ուսումնասիրություններ կատարել, որոնք պետք է օգտագործվեին Առաջին աշխարհամարտի ավարտից հետո կայանալիք խաղաղության վեհաժողովում:¹

Խմբի 21 անդամները Փարիզի խաղաղության վեհաժողովի (1919 թվականի հունվար) ամերիկյան պատվիրակության (Խաղաղության բանակցությունների ամերիկյան հանձնաժողով) մասը կազմեցին: Վեհաժողովը

գլխավորում էր նախագահ Վուդրո Վիլսոնը:

Միացյալ Նահանգների կառավարական փաստահավաք խումբը հատուկ ուշադրություն էր դարձնում Հայաստանին և Հայկական հարցին, որը բխում էր հայ-ամերիկյան այն սերտ կապերից, որոնք 19-րդ դարի ընթացքում հաստատվեցին Արևմտյան Հայաստանում գործող ամերիկացի միսիոներների շնորհիվ: Բազմաթիվ ամերիկացի միսիոներներ 1915-1917 թթ. ընթացքում Արևմտյան Հայաստանում դարձան հայոց ցեղասպանության ականատեսներ և նրանց մանրամասն զեկուցումները տեղ գտան «The Inquiry»-ի հազարավոր էջերից բաղկացած փաստաթղթերում:

1. Ինչպես պաշտոնապես նշվում էր ԱՄՆ-ի կառավարության փաստահավաք խմբի կողմից, «The Inquiry» նպատակն էր «ապահովել տվյալներ, որոնք (ամերիկյան պատվիրակներին) կարող են պետք գալ խաղաղության վեհաժողովի բանակցությունների ժամանակ»: Inquiry doc. 889, «Report on the Inquiry: Its Scope and Method», March 20, 1918, in National Archives and Records Administration (NARA), Record Group (RG) 256.

«The Inquiry»-ն՝ իբրև Միացյալ Նահանգների կառավարության փաստահավաք խումբ, իր հիմնական խնդիրների մեջ էր ներառում Օսմանյան կայսրության տրոհումը և Հայաստանի պետության սահմանազատումը:¹

«The Inquiry»-ն տարբեր երկրների համար կազմեց համապատասխան առաջարկներ, որոնց վերաբերյալ իրենք կատարել էին մանրակրկիտ հետազոտություններ և ներկայացրել եզրակացություններ: Փաստահավաք խումբը նաև կատարեց ետպատերազմյան նորաստեղծ երկրների սահմանազատման առաջարկներ: Այդ երկրների կազմում էր նաև Հայաստանը:

1918 թվականի հունվարի 8-ին նախագահ Վուդրո Վիլսոնը «The Inquiry»-ի ուսումնասիրության հիման վրա Կոնգրեսի համատեղ նիստին ներկայացրեց իր ուղերձը, որը, ելնելով այդտեղ նշված 14 հիմնական կետերից, հայտնի դարձավ, «14 կետեր» անվամբ: Այն հստակեցնում էր ԱՄՆ պատերազմի նպատակները և նշում այն ետպատերազմյան աշխարհակարգը, որի համար պայքարում էր Միացյալ Նահանգները: Այս հայտնի ելույթը այդ ժամանակ դարձավ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հիմնարար բնութագրիչներից մեկը և նույնիսկ ընդուն-

վեց պարտված կենտրոնական ուժերի ղեկավարների կողմից, որոնք փորձում էին պատերազմի ավարտից հետո իրենց համար բարենպաստ խաղաղության պայմանագրեր կնքել:²

Իր «14 կետերի»³ ծրագրով Վիլսոնը էապես հաստատեց Առաջին համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ի համաշխարհային տերություն դառնալու իրողությունը: 14 սկզբունքներից բաղկացած «խաղաղության ծրագիրը» իր պարզությամբ և մեծահոգությամբ վաստակեց եվրոպական հասարակական կարծիքի աջակցությունը: Այստեղ նոր աշխարհակարգի կառուցման համապատկերում ժողովրդավարության անվտանգությունն ապահովելու համար Վուդրո Վիլսոնը առաջադրում էր «հավաքական անվտանգության» սկզբունքը: Դրա իրականացմանն էլ պետք է միտված լինեն «Ազգերի լիգա» համաշխարհային կազմակերպության ստեղծումը և գործունեությունը: Ըստ էության, Վիլսոնի գաղափարները պետք է վերածվեին համաշխարհային կառավարության (Ազգերի լիգա) համարժեք կառույցների, որոնց 19-րդ դարում ձևավորված արտաքին քաղաքականության արդյունքում մեկուսացման ավանդույթներով ապրող ամերիկյան ժողովուրդը, հասարակական և քաղաքական

1. Inquiry doc. 889, “Report on the Inquiry: Its Scope and Method,” March 20, 1918, in NARA, RG 256, էջ 36:
2. Woodrow Wilson, In Our First Year of War: Messages and Addresses to the Congress and the People, March 5, 1917, to January 8, 1918, “The Terms of Peace,” Harper & Brothers Publishers, New York, 1918, էջ 150-161.
3. «14 կետեր»-ում նախագահ Վիլսոնը պահանջում էր համաշխարհային բաց դիվանագիտություն: Գաղտնի պայմանագրերը, ինչպիսիք էին Սայքս-Պիկո և նման պայմանագրերը պետք է արգելվեին: Պետք է տեղի ունենար եվրոպական տերությունների կողմից վարվող գաղութատիրական քաղաքականության վերանայում և հաշվի առնվեին գաղութների բնիկ բնակչության շահերը: Ըստ այս Վիլսոնյան սկզբունքների՝ ազգերի ինքնորոշման իրավունքը համարվում էր գերակա:

միտքը դեռևս պատրաստ չէին:¹

12-րդ կետը նշում էր, որ Օսմանյան կայսրության փոխարեն պետք է ստեղծվեն նոր պետական միավորներ: Թուրքաբնակ տարածքները պետք է կազմեն իրենց առանձին պետական միավորները, իսկ «մյուս ազգությունները, որոնք այժմ գտնվում են թուրքական իշխանության տակ, վստահաբար պետք է սեփական անվտանգության երաշխիք ունենան, ինչը նրանց ինքնավար եղանակով՝ առանց որևէ բռնության զարգանալու հնարավորություն կտա»: Հավելվում էր նաև, որ Դարդանեյը (նեղուց) պետք է բաց լինի բոլոր երկրների նավերի համար և առևտրի ելք ու մուտք ունենա:

ԱՄՆ նախագահի խորհրդատու գնդապետ Էդուարդ Հաուզը պաշտոնական բացատրություն տվեց և մանրամասնեց բոլոր կետերը, ի թիվս դրանց՝ նաև 12-րդ կետը, որ վերաբերում էր Հայկական հարցին:

Գնդապետ Հաուզը պարզաբանում էր, որ «Անատոլիան» (նկատի ուներ Փոքր Ասիան) «պետք է պահպանվի թուրքերի համար»: Նրա ծովափնյա մասերում, որտեղ հույները գերակայում էին, պետք է հաստատվեր հատուկ միջազգային վերահսկողություն. հնարավոր էր, որ դա իրագործելու համար Հունաստանին տրվեր միջազգային մանդատ:

Ինչ վերաբերում էր Հայաստանին, ապա «նա պետք է ստանա (Կիլիկիայում) Միջերկրական ծովափնյա նավահանգիստ, և դրվի տերություններից մեկի հովանու ներքո: Թերևս Ֆրանսիան ցանկանա ստանձնել այս հովանավորությունը, սակայն հայերը նախընտրում են Մեծ Բրիտանիային»:

Գնդապետ Հաուզը հավելում էր, որ Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան արդեն որոշել են Սիրիայի մանդատը տալ Ֆրանսիային: Մեծ Բրիտանիան լավագույն թեկնածուն է Պաղեստինի, Միջագետքի և Արաբիայի մանդատները ստանալու համար: Նա նշում էր, որ Փոքր Ասիայում մանդատների հաստատման վերաբերյալ բոլոր մանրամասները պետք է հաստատագրվեն պատերազմից հետո ստորագրվելիք խաղաղության պայմանագրում:

Դեռ 1917 թվականի նոյեմբերի 20-ին Միացյալ թագավորության վարչապետ Դեյվիդ Լոյդ Ջորջը տեղեկացրեց Էդուարդ Հաուզին, որ Մեծ Բրիտանիայի պատերազմի նպաստակներից է տիրանալ Գերմանիայի աֆրիկյան գաղութներին, բրիտանական հովանու ներքո հաստատել անկախ Արաբիա, Պաղեստինը տալ սիռնականներին, որը կլինի բրիտանական կամ ամերիկյան հովանու ներքո, ինչպես նաև, Ամերիկյան հովանու ներքո ստեղծել անկախ Հայաստան, իսկ Կ. Պոլիսը,

1. Ելնելով արտաքին քաղաքականության մեջ մեկուսացվածությունից, որ դեռևս գալիս էր 19-րդ դարից, ԱՄՆ-ի Կոնգրեսը, որը գտնվում էր ժողովրդավար (դեմոկրատ) նախագահ Վուդրո Վիլսոնին հակադիր հանրապետականների գերիշխանության տակ, մերժեց Վերսալի խաղաղության պայմանագրի (1919 թ. հունիսի 28-ին) վավերացումը: Այն Կոնգրեսում մերժվեց երկու անգամ՝ 1919 թ. նոյեմբերի 19-ին և 1920 թ. մարտի 19-ին, Վերսալի պայմանագրի մերժումով նաև (1919 թ. նոյեմբերի 19-ի) մերժվեց ԱՄՆ Ազգերի լիգային անդամակցումը և, մասնավորապես, Հայկական հարցի համար ցավալի փաստ. մերժվեց (1919 թ. հունիսի 1-ին) ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատի ընդունումը, որը Դաշնակիցների Գերագույն խորհրդի պահանջով նախագահ Վիլսոնը 1920 թվականի մայիսի 24-ին վավերացման համար ներկայացրել էր Կոնգրեսին:

Բոսֆորի և Դարդանելի նեղուցները պետք է վերածվեն միջազգային չեզոք գոտու:¹

Ըստ «The Inquiry»-ի՝ ազգային փոքրամասնությունները, որոնք նոր ձևավորվող ազգային պետությունների մաս էին կազմում, պետք է միջազգային երաշխիքներով պաշտպանվեին: Կարևոր երկաթգծերը, որոնք տարբեր երկրամասերն իրար էին կապում, պետք է ազատ լինեին միջազգային ճամփորդության համար և պետք է հաստատվեր, այսպես կոչված, «բաց դռան» քաղաքականություն, որը նշանակում էր, որ Միացյալ Նահանգները, ինչպես մյուս երկրները, պետք է տարածաշրջանում ազատ առևտուր ծավալելու իրավունք ունենային և որևէ այլ տերություն իրավունք չուներ մենաշնորհներ հաստատելու և դրանով սահմանափակելու կամ արգելելու մյուսների իրավունքները և առևտրական կապերի հնարավորությունները:²

1918 թ. մարտի 2-ին, «The Inquiry»-ի անդամ Ֆրանկ Ֆրոստ Աբոտը փաստահավաք խմբի մասնագետների կողմից կազմված զեկուցումները խմբագրեց «Հայաստանի վերաբերյալ զեկույցների համադրման» մեջ:³

Նախապես առաջարկվում էր Արեվմտյան Հայաստանում (վեց հայկական նահանգները, ինչպես նաև Տրապի-

